

**ԱՆՁԻ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ  
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Նախաբան.....	3
<b>ԳԼՈՒԽ 1. Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի տեղը և դերը հանցավորության դեմ պետությունների պայքարի գործում</b>	
§1. Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ ներպետական իրավունքի պատմական էվոլյուցիան.....	7
§2. Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությունը.....	27
<b>ԳԼՈՒԽ 2. Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ միջազգային իրավունքի ձևավորումը և զարգացումը</b>	
§1. Հանձնման ինստիտուտի ժամանակակից միջազգային իրավունքի հիմքերը.....	49
§2. Հանձնման ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պարտավորությունները.....	50
<b>ԳԼՈՒԽ 3. Անձի արտաքսումը և մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները</b>	
§1. Անձի արտաքսման հետ կապված պետությունների ազգային օրենսդրության առանձնահատկությունները և հիմնական բնութագրիչները.....	61
§2. Անձի արտաքսման հետ կապված հիմնախնդիրները և դրանց լուծումները ըստ ազգային և միջազգային իրավունքի.....	72
<b>Եզրակացություն.....</b>	<b>98</b>
<b>Օգտագործված գրականության ցանկ .....</b>	<b>101</b>

## Նախաբան

Պետությունների համագործակցության ինտենսիվացման և միջազգային իրավակարգի բովանդակային վերափոխման հետ զուգահեռ ընդլայնվում է նաև միջազգային հանցավորության առարկան և կատարման շրջանակները: Այն դուրս գալով կոնկրետ պետությունների տարածքից և աշխարհագրական տարածաշրջաններից, առաջ է բերում նորանոր խնդիրներ, որոնք առանձին վերցրած պետությունները ի զորու չեն լուծել: Դա է պատճառը, որ հանցավորության դեմ պայքարի արդյունավետության հրամայականը պետություններին մղում է ոչ միայն ավելի արդյունավետ դարձնել այս ոլորտում առկա պայքարը, այլ փնտրել և գտնել պայքարի նոր ձևեր և մեթոդներ:

Այսօր, նշված ոլորտում համագործակցությունն իրականացվում է միջազգային պայմանագրերի կնքման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանակներում համագործակցության ճանապարհով:

Նման համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում պահանջում է պետությունների ջանքերի ակտիվ միավորում, անընդհատ զարգացում և կատարելագործում, որն էլ միջազգային փոխգործակցության առաջնահերթ ուղղություններից մեկն է:

Հանցագործությունների դեմ պայքարում պետությունների միջազգային համագործակցության առավել արդի եւ արդյունավետ միջոցներից մեկը եղել է և մնում է հանձնումը:

Հանձնումը պետության կողմից՝ իր տարածքից դուրս և մեկ այլ պետության իրավազորության սահմաններում հանցագործության համար մեղադրված կամ դատապարտված անձին պաշտոնապես փոխանցելն է մյուս պետությանը՝ դատավարության և պատժի իրականացման նպատակով: Հանձնման գործընթացի համար սովորաբար որպես հիմք է ընդունվում ազգային օրենսդրությունը, երկկողմ պայմանագրերը և որոշ դեպքերում՝ բազմակողմ կոնվենցիաները:

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է հանցագործությունների ձեւերի եւ տեսակների կատարելագործման, տարբեր պետություններում գործող հանցավոր խմբերի միջև կապերի խորացման հանգամանքով, ինչպես նաև

միջազգային խաղաղությանը եւ ժողովուրդների բարեկեցությանը սպառնացող հանցագործությունների դեմ պայքարելու անհրաժեշտությամբ:

Ասվածի հետ մեկտեղ պետք է ընդգծել, որ պրակտիկայում հանձնման հետ կապված ընթացակարգը միշտ չէ, որ ընթանում է անթերի, այն հաճախ է խնդիրներ առաջացնում կապված պետությունների օրինական շահերի եւ մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների միջեւ հավասարակշռության ապահովման առումով:

**Ուսումնասիրության նպատակներից ելնելով՝ կարելի է սահմանել սույն հետազոտության հեղինակի առջև ծառայած հետևյալ խնդիրները.**

1. Պարզել քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի տեղը և դերը հանցավորության դեմ պետությունների պայքարի գործում,
2. Ուսումնասիրել հանձնման ինստիտուտի վերաբերյալ միջազգային իրավունքի ձևավորումը և զարգացումը, հանձնման ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությունը,
3. Ուսումնասիրել արտաքսման հետ կապված պետությունների օրենսդրական առանձնահատկությունները,
4. Քննության առնել արտաքսման ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները:

Հայաստանի Հանրապետությունը քրեական գործերով իրավական օգնության ոլորտում գործող մի շարք բազմակողմ և երկկողմ միջազգային պայմանագրերի մասնակից է: Դրանցով կարգավորվում են քրեական գործերով իրավական փոխօգնության, հանցագործություն կատարած անձանց հանձնման, դատապարտյալների փոխանցման, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման, ինչպես նաև այլ հարցեր:

Հարկ է նշել, որ միջազգային պայմանագրերը պետություններին ընձեռում են միայն իրավական փոխադարձ օգնություն տրամադրելու հնարավորություն և ընդհանուր առմամբ սահմանում են դրանց տրամադրման ձևերը, սակայն իրավական օգնության տրամադրման կոնկրետ ընթացակարգը, դրա հետ կապված վարույթային գործողությունները միջազգային պայմանագրերը չեն կարգավորում՝

թողնելով դրանց կարգավորումը յուրաքանչյուր երկրի ներպետական օրենսդրությանը:

Հանցագործություն կատարած անձի հանձնումը պետության իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը: Դա կարող է պարտականություն լինել միայն այն դեպքում, եթե առկա է պետությունների միջև միջազգային պայմանագիր և համապատասխան պայմաններ:

Հանձնման իրավական գաղափարը առաջին անգամ ամրագրվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրության մեջ: Սահմանադրության համապատասխան հոդվածը սահմանում էր, որ եթե անձը հանցագործություն է գործում մի նահանգում և փախչում է մեկ այլ նահանգ, ապա այդ դեպքում, եթե այն նահանգը, որտեղ կատարվել է հանցագործությունը պահանջում է իրեն հանձնել հանցագործություն կատարած անձին, մյուս նահանգը պետք է հանձնի:

Հանցավորության դեմ պայքարն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով հանձման ինստիտուտը օր օրի զարգացում է ապրում:

Պետությունները բացի ընդհանուր միջազգային պայմանագրերից կնքում են նաև երկողմ պայմանագրեր, որոնցով կարգավորում են երկու երկրների միջև հանձման իրավական մեխանիզմները:

Մագիստրոսական թեզում ներկայացված է հանձնման ընդհանուր բնութագիրը, նրա իրավական հիմքերը, այս ինստիտուտի տեղը և դերը հանցավորության դեմ պայքարի գործում, անդրադարձ է կատարվել հանձնման ինստիտուտի վերաբերյալ ազգային օրենսդրությանը, միջազգային իրավական հիմքերին, ինչպես նաև արտաքսման գործընթացի առանձնահատկություններին և դրա հետ կապված մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին:

Աշխատանքը հիմնված է ՀՀ Սահմանադրության, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» Եվրոպական կոնվենցիայի, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիայի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիայի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի, «Փախստականների մասին» ՀՀ օրենքի և մի շարք այլ

օրենսդրական ակտերի, ինչպես նաև տեսական գրականության ուսումնասիրության վրա:

Մագիստրոսական թեզը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը ներառում է երկու ենթագլուխ, եզրակացությունից և գրականության ցանկից:

# **ԳԼՈՒԽ 1. Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի տեղը և դերը հանցավորության դեմ պետությունների պայքարի գործում**

## **§1. Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ ներպետական իրավունքի պատմական էվոլյուցիան**

Քրեական գործերով իրավական օգնության գաղափարը միանգամայն բարդ և բազմաբովանդակ է, որի գործնական իրականացումը պետություններից և դրանց օրենսդիր, գործադիր և իրավակիրառ մարմիններից պահանջում է առանձնահատուկ մոտեցում:

Միջազգային համագործակցության ոլորտում կարևոր նշանակություն ունի տարբեր պետությունների կողմից միմյանց իրավական օգնություն ցուցաբերելու հանգամանքը, քանի որ հանցավորությունը դուրս գալով մի պետության սահմաններից շոշափում է նաև այլ երկրների շահերը: Իրավաբանական գրականության մեջ կարծիք կա, որ համաշխարհային պատերազմներից և հնարավոր գլոբալ աղետներից հետո անդրազգային և ազգային հանցավորությունն աստիճանաբար դառնում է ժամանակակից աշխարհի ամենամեծ սպառնալիքը<sup>1</sup>:

Համագործակցության գործընթացում պետությունները լուծում են այնպիսի կակուր խնդիրներ, ինչպիսիք են տարբեր պետությունների համար վտանգ ներկայացնող հանցագործությունների քրեականացումը, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների համակարգումը, հանցագործությունների և հանցագործների նկատմամբ իրավասության հստակեցումը, քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալն ու հանձնումը<sup>2</sup>:

Քանի որ ժամանակակից հանցավորությունը տարածքային սահմաններ չունի, հանցավորության դեմ պայքարում կարևոր նշանակություն է ձեռք բերում պետությունների համագործակցությունը<sup>3</sup>:

Հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցությունը զարգանում է երկու հիմնական ուղղություններով՝ միջազգային պայմանագրերի

<sup>1</sup> Лунеев В.В., Тенденции современной преступности и борьбы с ней в России, ГИП. 2004, N1

<sup>2</sup> Игнатенко Г. В., Международное сотрудничество в борьбе с преступностью, Свердловск, 1980

<sup>3</sup> Դ. Ավետիսյան, Հանձնման ինստիտուտի միջազգային իրավական և քրեադատավարական առանձնահատկությունները: «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2008, N11

կնքման և միջազգային կազմակերպությունների շրջանակում համագործակցության միջոցով: Այստեղից էլ կարելի է առանձնացնել համագործակցության երկու հիմնական ձևեր՝ կոնվենցիոն և ինստիտուցիոնալ:

Կոնվենցիոն համագործակցությունն իրականացվում է բազմակողմ համընդհանուր, տարածաշրջանային և երկկողմ լոկալ համաձայնագրերի կնքման միջոցով:

Ինստիտուցիոնալ համագործակցությունն իրականացվում է այս կամ այն համաձայնագրին համապատասխան ստեղծված տարաբնույթ կոմիտեների և հանձնաժողովների, միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ ՄԱԿ-ի մասնագիտացած հաստատությունների, մասնավորապես ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի, ինչպես նաև Ինտերպոլի կամ Եվրոպոլի շրջանակներում:

Ազգային նորմատիվ իրավական ակտերը միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցնելու նպատակով պետություններն ընդունում են ազգային օրենսդրական ակտեր օրենքների ձևով, որոնք վերարտադրում են միջազգային իրավունքի նորմերը կամ հռչակում են դրանց գործողությունը պետության տարածքում: Հայաստանի Հանրապետությունում սահմանադրորեն ամրագրված է միջազգային և ազգային իրավունքի փոխհարաբերակցությունը: ՀՀ Սահմանադրությունը սահմանում է «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»: Ներկայումս պետությունների մեծամասնությունն ընդունում է միջազգային հարաբերություններում միջազգային իրավունքի պրիմատը: Միջազգային իրավունքի գերակայությունն ազգային օրենսդրության նկատմամբ դյուրացնելու նպատակով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը մշակել է գործողությունների պլան, որի հիմնական դրույթները հանգում են հետևյալին.

- աջակցություն բազմակողմ միջազգային պայմանագրերին մասնակցությանը,
- անհրաժեշտ իմպլեմենտացիոն օրենսդրության մշակման հարցում պետություններին աջակցության ցուցաբերում,

- դատավորների և պրակտիկ իրավաբանների վերապատրաստում,
- միջազգային իրավունքի կիրառմանը մասնակցող այլ անձանց վերապատրաստում,
- միջազգային կրթություն և միջազգային իրավունքի լուսաբանում<sup>4</sup>:

Ինչպես նշում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն իր ամենամյա զեկույցներում, իրավունքի գերակայության հաստատման ուղղությամբ տարբերվող աշխատանքը համարվում է ՄԱԿ-ի գործունեության հիմնական ուղղությունը: Որպես հաստատում մատնանշվում է պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների անվերապահ կատարումը, բացառապես բարեխղճության, այսինքն՝ ոչ թե ձևականորեն, այլ միջազգային պայմանագրի տառին և ոգուն համապատասխան:

Քրեական գործերով իրավական օգնության ապահովումը դատավարական գործունեություն է, որն իրականացվում է իրավապահ մարմինների կողմից՝ միջազգային պայմանագրերին համապատասխան օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հարցումների հիման վրա: Այլ կերպ՝ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնությունը գործընթաց է, որի միջոցով պետությունները փորձում են ձեռք բերել և տրամադրել աջակցություն՝ քրեական գործերով ապացույցներ հավաքելու և օգտագործելու կապակցությամբ<sup>5</sup>: Փաստորեն, իրավական օգնության ինստիտուտի հիմնական խնդիրը հանցավորության դեմ պայքարում պետությունների ջանքերի միավորումն է, նրանց համագործակցությունն է հանցավորությունների քննության և բացահայտման ուղղությամբ, հանցանք կատարած անձանց բացահայտումն է և նրանց նկատմամբ արդարացի դատավճռի կայացումը, դատավճռի ի կատար ածումը, ինչպես նաև պատճառված վնասի փոխհատուցումն է՝ անկախ տարածքային սահմաններից, ներպետական օրենսդրության տարբերություններից և պետությունների իրավակիրառ պրակտիկայից:

Այս ինստիտուտը կարգավորվում է ոչ միայն քրեական և քրեադատավարական, այն նաև միջազգային իրավունքով: Ներկայումս իրավական օգնությունն իրականացվում է միջազգային, քրեական, քաղաքացիական,

<sup>4</sup> Московский журнал международного права, М., 2001, N2

<sup>5</sup> Руководство по вопросам взаимной правовой помощи и экстрадиции, Управление организации объединенных наций по наркотикам и преступности. Организация объединенных нации, Нью-Йорк, 2012г.



ընտանեկան գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին բազմակողմ և երկկողմ պայմանագրերի կնքման միջոցով: Նշված պայմանագրերի առանձնահատկություններից է այն, որ սրանք ամրագրում են կողմերի իրավահավասարության սկզբունքն իրավական օգնության ցուցաբերման գործընթացում, ինչը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին:

Քրեական գործերով իրավական օգնությունն իրականացվում է 3 խումբ սկզբունքների պահպանմամբ: Դրանք են.

- միջազգային իրավունքի սկզբունքները, որոնք կարգավորում են պետությունների համագործակցությունն ամբողջությամբ,
- սկզբունքներ, որոնք նախատեսված են իրավական օգնության մասին միջազգային պայմանագրերում,
- ներպետական օրենսդրությամբ նախատեսված սկզբունքներ<sup>6</sup>:

Միջազգային քրեական իրավունքի համակարգում առանձնացվում են ընդհանուր և հատուկ սկզբունքներ, որոնք հանդիսանում են այդ համակարգի հիմքը: Տվյալ ճյուղի ընդհանուր սկզբունքներն են.

- ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը,
- միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը,
- պետության ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը,
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման սկզբունքը,
- համագործակցության սկզբունքը:

Միջազգային քրեական իրավունքի հատուկ սկզբունքներն ամրագրված են Միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և այլ փաստաթղթերի դրույթներում:

---

<sup>6</sup> ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս(3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատարակություն, 2010

Հատուկ սկզբունքները դասակարգվում են 2 խմբի՝ ըստ ամրագրման աղբյուրի:

Առաջին խմբին դասվում են Միջազգային ռազմական տրիբունալի 1945թ. կանոնադրությամբ սահմանված հետևյալ սկզբունքները.

- ագրեսիվ պատերազմների արգելում,
- միջազգային իրավունքի դեմ հանցագործությունների համար քրեական պատժի անխուսափելիությունը,
- միջազգային հանցագործություն կատարած անձի պաշտոնեական դիրքը չի ազատում նրան անհատական պատասխանատվությունից,
- եթե պետությունը չի սահմանում պատիժ այնպիսի գործողությունների համար, որոնք միջազգային իրավունքի համաձայն դասվում են մարդկության և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունների թվին, ապա դա չի հանդիսանում անձին միջազգային քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք,
- պատերազմական հանցագործների նկատմամբ վաղեմության ժամկետների չկիրառումը:

Հատուկ սկզբունքների 2-րդ խումբը կազմում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանն ուղղված փաստաթղթերում ամրագրված նորմերը: Դրանք են.

- անմեղության կանխավարկածը,
- պատերազմի, ստրկության, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի պրոպագանդայի արգելումը,
- պատժի անխուսափելիության, ցուցմունքներ տալուն և իր մեղքն ընդունելուն հարկադրելը,
- արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից, դատական քննության հրապարակայնությունը, օրենքի և դատարանի առջև անձանց հավասարությունը,
- պաշտպանության, դատարանում անվճար թարգմանիչ ունենալու, դատավճիռը բողոքարկելու իրավունքը,

- ազատությունից զրկվածների մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվությունը հարգելու իրավունքը<sup>7</sup>:

Իրավական օգնության մասին ՀՀ միջազգային պայմանագրերում նույնպես կարող են նախատեսվել առանձին սկզբունքներ, որոնք ածանցված են ինչպես միջազգային քրեական իրավունքի սկզբունքներից, այնպես էլ պայմանագրի կողմ հանդիսացող երկրների ներպետական օրենսդրություններից:

Հատուկ կարևորություն ունի ներպետական օրենսդրությամբ նախատեսված սկզբունքների պահպանումը, ինչպես օրինակ օրինականության սկզբունքը, օրենքի առջև հավասարության սկզբունքը, պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, անձնական պատասխանատվության սկզբունքը, մարդասիրության սկզբունքը, ամելության կանխավարկածը, կրկնակի դատապարտման անթույլատրելիությունը և այլ սկզբունքներ:

Քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալն իրակացվում է նաև միջազգային համագործակցության հետևյալ սկզբունքների պահպանմամբ.

- փոխադարձ համագործակցությունը,
- համագործակցության կամավորությունը,
- պետության ինքնիշխանությունը և անվտանգությունը,
- իրավական օգնության մասին հանձնարարության համապատասխանությունը կատարող երկրի օրենսդրությանը,
- պատժի անխուսափելիությունը, իր քաղաքացիներին չհանձնելու սկզբունքը,
- այլ սկզբունքներ:

Բոլոր սկզբունքները սերտորեն փոխկապակցված են և լրացնում են մեկը մյուսին:

Քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալը ներառում է հետևյալ տեսակները.

1. դատավարական և քննչական գործողությունների կատարում (առանձին հանձնարարությունների կատարում և ուղարկում, փաստաթղթերի և առարկաների հանձնում, տեղեկությունների փոխանակում այլն),

<sup>7</sup> Международное публичное право, Отв. редактор Бекашев К. А., Москва, 2005г.

2. հանձնում,
3. օտարերկրյա դատարանի կողմից դատապարտված անձի հանձնումն այն երկրին, որի քաղաքացին է,
4. քրեական հետապնդման իրականացում<sup>8</sup>:

Պետությունների միջազգային-իրավական համագործակցության ոլորտում առանձնակի կարևորություն է ներկայացնում հանձնման գործընթացը:

Հանձնումը պետությունների միջև իրականացվող իրավական ակտ է, համաձայն որի այս կամ այն պետությունը հայցում և ստանում է հանցագործություն կատարած անձին այն երկրից, որտեղ այդ անձը թաքնվում է՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու կամ վերջինիս նկատմամբ արդեն իսկ կայացված դատավճիռն ի կատար ածելու նպատակով<sup>9</sup>:

Հանձնման համար հիմք չեն կարող հանդիսանալ քաղաքացիաիրավական և վարչաիրավական պատասխանատվություն նախատեսող իրավախախտումները:

Հին ժամանակներում՝ մինչև 17-րդ դարի վերջը, հանձնումը բացառիկ երևույթ էր և կիրառվում էր միայն քաղաքական հանցագործների, հերետիկոսների և փախստականների նկատմամբ: Դեռևս եգիպտական փարավոն Ռամզես 2-րդը խեթերի թագավոր Խաթուշիլ 3-րդի հետ կնքած պայմանագրում նախատեսել էր. «Եթե որևէ մեկը փախչի Եգիպտոսից և գնա խեթերի երկիր, ապա խեթերի թագավորը նրան չի պահի իր երկրում և կվերադարձնի Ռամզես 2-րդի երկիր»:  
Փախուստի հանգամանքն ինքնին եղել է հանձնման հիմք: Պայմանագիրն ապահովել է նաև հարցման ենթակա անձանց անվտանգությունը. «Նրանց մահապատժի ենթարկելիս չեն վնասի նրանց աչքերը, շրթունքները և ոտքերը»<sup>10</sup>:

Հանձնման ինստիտուտի ձևավորումն ունի խորը պատմական արմատներ: Այն սկզբնավորվել է, երբ դեռևս գոյություն չի ունեցել միջազգային իրավունքի նորմերի համակարգը: Այսպես, Ֆ. Մարտենսն առանձնացնում է հանձնման ինստիտուտի ձևավորման պատմական երեք ժամանակաշրջան.

<sup>8</sup> ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս(3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2010

<sup>9</sup> Звирбуль В.К., Шупилов В. П., Выдача уголовных преступников, М., 1974

<sup>10</sup> Steu` Выдача обвиняемых и осужденных в международном уголовном праве, И. И. Лукашук, А. В. Наумов. М., 1998

1. Հնագույն ժամանակներից մինչև 17-րդ դարի վերջը, երբ հանձնումը, լինելով դեռևս եզակի երևույթ, հիմնականում կիրառվում էր քաղաքական հակառակորդների, հերետիկոսների և թշնամու կողմն անցած անձանց նկատմամբ,
2. 18-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի 40-ական թվականները, որի ընթացքում աճում է կնքված համաձայնագրերի թիվը, որոնք վերաբերում էին ոչ միայն խռովարարներին և հետախուզվող անձանց, այլև հանցագործություններ նկատարած անձանց, թեև առաջինները դեռևս գերակշռում էին:
3. Նոր ժամանակներ, որը սկսվում է 1840 թվականից, երբ պետությունները համաձայնեցված արշավ սկսեցին փախուստի դիմած հետախուզվող հանցագործների նկատմամբ, որոնք քաղաքական նպատակներ չէին հետապնդում և կատարել էին քրեական օրենքով նախատեսված հանցագործություններ:<sup>11</sup>

Թվարկված ժամանակաշրջաններին ամերիկյան գիտնական Շերիֆ Բասիունին ավելացրել է ևս մեկը, որը սկիզբ է առնում 1948 թվականից, երբ առաջին պլան մղվեց միջազգային անվտանգության համակարգի ստեղծման, ինչպես նաև խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների կանխման անհրաժեշտությունը:<sup>12</sup>

Հին ժամանակներում հանձնումը պայմանավորված էր քաղաքական գործոններով: Պետությունների միջև ծագած տարաձայնությունները լուծվում էին պատերազմների միջոցով, հանձնման հարաբերությունների հիմնական կարգավորիչն ուժեղի իրավունքն էր: Եթե չէր հաջողվում արդյունքի հասնել ուժի միջոցով, գործի էր դրվում դիվանագիտության արվեստը: Միջին դարերում հանձնման ինստիտուտում տես գտած փոփոխությունները պայմանավորված էին ապաստանի ինստիտուտում տեղ գտած փոփոխություններով, երբ որոշակի սուրբ վայրերից հանձնում չէր թույլատրվում: Մեկ այլ խոչընդոտ էր հանդիսանում Արևելյան Եվրոպայի ավատատիրական երկրներում առանց թույլտվության երկիր

<sup>11</sup> Мартенс Ф. Ф., Современное международное право цивилизованных народов: В 2т. Т.2, СПб, 1883

<sup>12</sup> Basiouni Cherif M, International extradition and world public order, N. Y., 1974

ժամանած և ավելի քան մեկ տարի այնտեղ գտնվող անձանց ճորտացման ինստիտուտը<sup>13</sup>: Դրանով էր բացատրվում այն հանգամանքը, որ հանձնումը շարունակում էր մնալ քաղաքական հակառակորդների նկատմամբ հաշվեհարդարի, այլ ոչ թե հանցագործների դեմ պայքարի միջոց:

Միջնադարյան առավել վաղ կնքված պայմանագրերից է անգլիական թագավոր Հենրիխ 2-րդի և շոտլանդական թագավոր Վիլիելմի միջև 1174 թվականին կնքված տրակտատը, որով վերջիններս պարտավորվում էին միմյանց հանձնել քաղաքական հանցագործներին<sup>14</sup>: Նմանատիպ հետագա պայմանագրերը հիմնականում վերաբերում էին խռովարարներին և երկուստեք թշնամիներին:

18-րդ դարից, երբ սկիզբ է առնում հանձնման ինստիտուտի զարգացման երկրորդ ժամանակաշրջանը, հանձնման մասին պայմանագրերն առավելապես տարածվում են ոչ միայն դասալիքների, այլև ընդհանուր բնույթի քրեական հանցագործների վրա, իսկ պետությունների համագործակցությունը նշված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու բնագավառում դառնում է ավելի հրատապ: Այն հիմնականում կարևորվում է մեկ պետությունից մյուսը մարդկանց տեղափոխման աճի արդյունքում, որը պայմանավորված էր Եվրոպայի ինդուստրիալիզացիայով և տրանսպորտային նոր միջոցների ի հայտ գալով:

18-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի վերջը հանձնման ինստիտուտի զարգացման պատմության մեջ բացառիկ դերը պատկանում է Ֆրանսիային<sup>15</sup>: Հենց Ֆրանսիայի միջազգային գործունեության շնորհիվ ներդրվեցին հանձնման պայմանագրերում մինչև այժմ էլ գործածվող դրույթների մեծ մասը, ինչպես օրինակ քաղաքական բնույթի հանցագործություններ կատարած անձանց չհանձնումը, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը անցնելու հիմքով հանձնման մերժումը և այլն: Նույնիսկ «էքստրադիցիա» եզրույթը շրջանառության մեջ է դրվել Ֆրանսիայի շնորհիվ, որտեղ պաշտոնապես այն

<sup>13</sup> Левин Д.Б., История международного права, М., 1962

<sup>14</sup> Никольский Д. П., О выдаче преступников по началам международного права

<sup>15</sup> Штиглиц А. Л., Исследование о выдаче преступников, СПб, 1882

օգտագործվել է 1791 թվականի փետրվարի 19-ի դեկրետում, որով կանոնակարգվում էին հանձնման առանձին ընթացակարգերը:<sup>16</sup>

1840-1943 թվականներին, երբ սկսվում է հանձնման ինստիտուտի զարգացման երրորդ ժամանակաշրջանը, արդեն հստակ ձևավորվում է ոչ քաղաքական, այլ ընդհանուր բնույթի քրեական հանցագործությունների դեմ համատեղ ջանքերով պայքարելու գիտակցման միտումը: Այդ նպատակով կնքված պայմանագրերում հանձնումն իրապես ձեռք է բերում միջազգային փոխհարաբերություններում գործուն իրավական օգնության ձև:

Հանձնման ինստիտուտը զարգացավ մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարացման պատմական գործընթացին համապատասխան: Այսօր հանձնման ինստիտուտը հատուկ նշանակություն է ձեռք բերել: Միջազգային գործընթացների շնորհիվ շատ երկրների սահմաններ դարձել են «թափանցիկ», կատարելագործվել են հաղորդակցման միջոցները: Դա էականորեն հեշտացնում է մի պետության տարածքում հանցանք կատարած անձանց այլ պետությունում թաքնվելու ճանապարհը: Նոր պայմաններն ակտիվորեն օգտագործվում են կազմակերպված հանցավորության կողմից, որը միջազգային բնույթ է կրում: Կազմակերպված հանցավորությունը, որը սպառնալիք է ներկայացնում այնպիսի հանցագործությունների կատարման առումով, ինչպիսիք են փողերի «լվացումը», ահաբեկչությունը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, էական ազդեցություն է թողնում ազգային տնտեսության և պետական ապարատի վրա: Քանի որ ժամանակակից հանցավորությունը տարածքային սահմաններ չունի, այդ իսկ պատճառով հանցավորության դեմ պայքարում էական նշանակություն է ձեռք բերում պետությունների համագործակցությունը:

Հանձնման ինստիտուտի զարգացումը մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ օրինաչափ գործընթաց է: Շատ հաճախ ազատությունների սահմանափակումները, որոնք կիրառվում են անձի նկատմամբ

---

<sup>16</sup> Մեր գրականության մեջ օգտագործվում են այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են էքստրադիցիա, արտահանձնում և հանձնում: Նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրության մեջ օգտագործվում է «հանձնում» տերմինը, սույն աշխատանքի մեջ այսուհետև կօգտագործենք հանձնում տերմինը:

հանձնման գործընթացում, այդ գործընթացի մի մասն են կազմում և դա է պատճառը, որ հանձնման գործընթացում մարդու իրավունքները լայն ուսումնասիրությունների թեմա են դառնում: Ուստի միջազգային և տարածաշրջանային համաձայնագրերով պաշտպանվող մարդու իրավունքները կարող են հիմք հանդիսանալ հանձնման խնդրանքը մերժելու համար, բայց միայն առանձին դեպքերում<sup>17</sup>: Չնայած մարդու իրավունքների հետ կապված խնդիրները կարող են բարդություններ առաջացնել հանձնման գործընթացի ժամանակ, սակայն դա իր դրական կողմերն ունի, քանի որ հանձնման ինստիտուտի համակարգին ավելացնում է լեգիտիմություն<sup>18</sup>:

Ներկայումս իր պետության քաղաքացիներին չհանձնելու սկզբունքին զուգահեռ պետություններն ամրագրել են նաև քաղաքական հանցագործներին չհանձնելու սկզբունքը: Այն ամրագրված է իրավական օգնության վերաբերյալ մի շարք երկկողմ և բազմակողմ պայմանագրերում և շատ պետությունների ազգային օրենսդրություններում: Չնայած այս հանգամանքին միջազգային իրավունքի տեսությունում չկա հստակ սահմանում, թե որն է համարվում քաղաքական հանցագործություն: Կատարված հանցագործության քաղաքական բնույթը որոշվում է դատավարության ընթացքում: Քաղաքական հանցագործությունները տարբերակվում են բացարձակի և հարաբերականի: Բացարձակ են համարվում այն քաղաքական հանցագործությունները, որոնց քաղաքական բնույթը կասկած չի հարուցում, ինչպես օրինակ ռադիոյով կամ հեռուստատեսությամբ զինված հակակառավարական կոչեր անելը: Հարաբերական են համարվում այն հանցագործությունները, որոնց հիմքում ընկած է արարքի ընդհանուր քրեական բնույթը, որը կատարվել է քաղաքական մոտիվներով, ինչպես օրինակ ընդդիմադիր քաղաքական լիդերի սպանությունը: Հանցագործության բնույթը որոշելը այն պետության իրավասությունն է, որի տարածքում գտնվում է փախուստի մեջ գտնվող անձը: Սակայն դրա հետ միաժամանակ պետք է հաշվի առնել հարցի մյուս կողմը՝ պայքարը հանցավորության դեմ: Մարդու իրավունքների պաշտպանությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա պատժի անխուսափելիության սկզբունքի իրականացման

<sup>17</sup> Mariana (Mitra) Radu, Catalina Mititelu, The Observance of Human Rights and Freedoms in the Extradition Proceedings at National and International Levels, JDSR 3, 2013

<sup>18</sup> Neil Boister, An introduction to Transnational Criminal Law, OUP, 2012



համար: Այս մոտեցումն արտահայտել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով:

Ստերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանը նշում է. «Տանջանքների և անմարդկային վերաբերմունքի արգելքը, ինչպես նաև արդարացի դատական քննության իրավունքը կարող են հիմք հանդիսանալ հանձնումը մերժելու համար: Դրա հետ միաժամանակ, քանի որ աշխարհում տեղաշարժը հեշտանում է, և հանցավորությունն ավելի մեծ միջազգային թափ է ստանում, պետությունների համար առավել կարևոր է դառնում, որ կասկածվող իրավախախտողները, որոնք փախել են արտասահման, ենթարկվեն դատի»<sup>19</sup>: Մեր օրերում հանձնման ինստիտուտի դերի բարձրացման մասին վկայում են նոր օրենքների ընդունումը, միջազգային պայմանագրերի կնքումը, միջազգային կազմակերպությունների կողմից համապատասխան բանաձևերի ընդունումը: Հանձնումը՝ որպես պետությունների միջև քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու տեսակ, կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ: Այս ինստիտուտի կարգավորմանը նվիրված քրեադատավարական նորմերը հիմնված են միջազգային պայմանագրերում ամրագրում ստացած պայմանների վրա: Որոշ երկրներում, կարևորելով այս ինստիտուտի դերը, հատուկ օրենսդրական ակտեր են ընդունվել հանձնման մասին, իսկ շատ երկրներում այս ինստիտուտը կարգավորող նորմերը տեղ են գտել Սահմանադրության մեջ, քրեական և քրեադատավարական օրենսդրություններում: Տարբեր երկրներում հանձնման ինստիտուտը տարբեր կերպ է կարգավորվում: Գոյություն ունի հանձնման ինստիտուտի նորմերի համակարգի երկու հիմնական տեսակ՝ եվրոպական և անգլո-ամերիկյան:

Առաջինը բնորոշ է ռոմանագերմանական իրավունքի երկրներին՝ ոչ միայն մայրցամաքային Եվրոպայի և լատինաամերիկյան երկրներին, այլև եվրոպական երկրների նախկին գաղութներին, բացի բրիտանականից: Երկրորդը բնորոշ է «ընդհանուր իրավունքի» երկրներին: Առաջինը հիմնվում է հստակ որոշված մի շարք սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ երկակի հանցավորությունը (այսինքն՝ հարցում ներկայացրած և հարցումը կատարած կողմերի օրենսդրությամբ այդ արարքները

<sup>19</sup> ECHR, Soering v. United Kingdom, Judgment of 7 July 1989

պետք է համարվեն քրեորեն պատժելի), մասնագիտացումը (հանձնման կապակցությամբ իրականացվող գործողությունների համապատասխանությունը որոշակի պահանջների, օրինակ՝ կախված սանկցիայի տեսակից և չափից), սեփական քաղաքացիներին չհանձնելը:

Երկրորդ տեսակը հիմնված է այդ սկզբունքների անխախտելիությունը չընդունելու վրա: Դրա հիմնական խնդիրն է պատժի անխուսափելիության ապահովումը նույնիսկ պայմանագրերի և օրենքների «լիբերալ» մեկնաբանման ճանապարհով: Ի տարբերություն «մայրցամաքային իրավունքի» երկրների՝ «ընդհանուր իրավունքի» երկրներում հանձնումը թույլատրվում է միայն պայմանագրի առկայության դեպքում: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ որոշակի դեպքերում թույլատրվում է նաև սեփական քաղաքացիների հանձնումը՝ այն թողնելով կողմերի հայեցողությանը: Օրինակ՝ Կանադայի և Նիդերլանդների միջև 1998թ. կնքված հանձնման պայմանագիրը նախատեսում է, որ հանձնումը չի կարող մերժվել բացառապես հանձնվող անձի քաղաքացիության հիմքով: Միևնույն համակարգում գտնվող երկրների միջև հանձնում իրականացնելիս պետությունները ղեկավարվում են ներպետական օրենսդրությամբ, իսկ եթե այդ հարցերը չեն կարգավորվում ներպետական օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերը: Տարբեր համակարգեր ունեցող երկրների միջև հանձնման հարցերը կարգավորելիս առաջնահերթությունը տրվում է երկկողմ պայմանագրերին, որոնցում երկրները սահմանում են համապատասխան բացառություններ և վերապահումներ:

Հանձնման ինստիտուտի երկու տեսակներն էլ ունեն իրենց դրական և բացասական կողմերը: Այսպես, եվրոպական համակարգն ապահովում է հանձնման օրինականությունը և հանձնվողի իրավունքները: Դրա հետ միասին հանցագործին պատժից խուսափելու հնարավորություն է տալիս: Անգլո-ամերիկյան համակարգը նվազեցնում է ընդհանուր սկզբունքների դերը և դատարանին իրավունք է վերապահում յուրաքանչյուր գործ քննել՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները՝ նպատակ ունենալով ապահովել հանցավորի կողմից պատժի կրումը: Սեփական քաղաքացիներին հանձնելու առանձնահատուկ դիրքորոշումը պայմանավորված է «ընդհանուր իրավունքի երկրների» կողմից տարածքային

իրավագործության սկզբունքի ընդունման հանգամանքով: Այդ սկզբունքի համաձայն՝ դատարանն իրավագործություն ունի միայն այն անձանց նկատմամբ, որոնք հանցանք են կատարել այդ դատարանի պետության տարածքում: Դրա արդյունքում այդ պետության քաղաքացին, որը հանցագործություն է կատարել արտասահմանում և վերադարձել է իր երկիր, կարող է անպատիժ մնալ: «Ընդհանուր իրավունքի» երկրների համար երկակի հանցավորության սկզբունքը համարվում է պայմանագրային և ոչ թե ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք: Ելնելով քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքից՝ «Չկա պատիժ առանց օրենքի»՝ հանձնումը չի կարող արդարացվել, եթե հանձնող կամ պահանջող պետության իրավունքն այդ արարքը չի համարում հանցագործություն: Հայաստանի Հանրապետությունը գնացել է հանձնման ինստիտուտին վերաբերող նորմերի խառը համակարգի ընտրության ճանապարհով՝ ներառելով թե եվրոպական, թե անգլո-ամերիկյան համակարգին բնորոշ տարրեր: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 487-րդ հոդվածը վերաբերում է երկակի հանցավորության և մասնագիտացման սկզբունքներին: Նշված հոդվածի համաձայն՝ հանցագործություն կատարած անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից խնդրանք ստանալու դեպքում Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը միջոցներ են ձեռնարկում սույն օրենսգրքի 479-րդ հոդվածով սահմանված կարգով խնդրանքում նշված անձի հանձնման թույլտվություն ստանալու և քրեական պատասխանատվության ենթարկելու կամ նրա նկատմամբ դատավճիռն ի կատար ածելու նպատակով այդ անձին օտարերկրյա պետությանը հանձնելու ուղղությամբ: Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով: Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար անձը

դատապարտվել է ազատազրկման՝ վեց ամսից ոչ պակաս ժամկետով: Սեփական քաղաքացիներին չհանձնելու սկզբունքն իր արտացոլումն է գտել ՀՀ քր. դատ. օր-ի 488-րդ հոդվածում, որի համաձայն՝ անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժվում է, եթե խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնմանը: Հանձնման մասին պահանջը քննարկելիս կամ Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործություն կատարած անձին հանձնելու մասին պահանջը այլ պետությանը ներկայացնելիս պետք է հանգամանորեն պարզել հանձնման ենթակա անձի քաղաքացիությունը: Միջազգային պայմանագրերով նախատեսված են հանձնման ենթակա անձանց իրավունքների պաշտպանության համապատասխան երաշխիքներ: Սակայն շատ հաճախ հակասություններ են առաջանում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և հանձնման հետ կապված այլ միջազգային պայմանագրերի միջև: Այս հարցի կապակցությամբ Եվրոպական դատարանն արտահայտել է իր կարծիքը Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, որտեղ դատարանը սահմանել է. «Չնայած հանձնման բարի նպատակներին, որը կոնվենցիայով արգելված չէ, այն չի կարող ամբողջությամբ կամ մասամբ անդամ պետություններին ազատել հանձնման հետևանքով առաջացած հետևանքներից»: Եվրոպական դատարանը համանման մոտեցում է դրսևորել նաև Մամատկուլովն ու Ասկարովն ընդդեմ Թուրքիայի գործով, որտեղ դատարանը սահմանել է «Կոնվենցիայի և դատարանի որոշումները կատարելու նպատակով, Բրիտանական կառավարությունը ստիպված է եղել հրաժարվել Միացյալ Նահանգների առջև ունեցած իր պարտավորություններից: Այդ կերպ դատարանը կոնվենցիայի և հանձնման վերաբերյալ պայմանագրերի միջև հակասությունները լուծում է կոնվենցիայի օգտին»<sup>20</sup>:

Հանձնում իրականացնելիս հիմնականում խնդիրներ են առաջանում կոնվենցիայի 3-րդ հոդվածի կապակցությամբ, որի համաձայն. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային, կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի»: Խոշտանգումների արգելման

<sup>20</sup> ECHR, Mamatkulov and Askarov v. Turkey, Judgment of 4 February 2005

իրավունքը բացարձակ իրավունք է և բացառությունների չի կարող ենթարկվել: Այս սկզբունքը արտահայտվել է Եվրոպական դատարանի կողմից մի շարք գործերի կապակցությամբ: Օրինակ՝ Շամանը և այլոք ընդդեմ Ռուսաստանի և Վրաստանի գործով դատարանը սահմանեց. «Քանի որ ազգությամբ չեչենների իրավական պաշտպանության վիճակը վերջին ժամանակներս էականորեն վատացել է, անձի հանձնումը կարող է հանգեցնել կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման»<sup>21</sup>:

Խոշտանգումների, դաժան, անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու վտանգը պետք է իրական լինի: Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքի խախտման համար պատասխանատվություն կարող է առաջանալ ոչ միայն այն դեպքում, երբ իրական վտանգ գոյություն ունի պետական մարմինների կողմից համապատասխան վերաբերմունքի առաջանալու համար, այլև այն դեպքում, երբ հանձնման ենթակա անձանց նման վտանգ է սպառնում ոչ պետական մարմինների կողմից: HRL-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով, երբ իրական հիմքեր կային ենթադրելու, որ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների մասնավոր անձանց կողմից, դատարանը սահմանեց, որ հաշվի առնելով 3-րդ հոդվածի պահանջները, չի կարելի բացառել այն դեպքերը, որ իրական վտանգ կա, որ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների այլ անձի կամ անձանց կողմից: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է պարզել, որ այդպիսի վտանգն իրական է, և պետական մարմինները չեն կարող ապահովել դրանց պաշտպանությունը»<sup>22</sup>:

Հանձնման ընթացքում շատ հաճախ խնդիրներ են առաջանում կոնվենցիայի 13-րդ հոդվածի կապակցությամբ, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք, ում կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք: Հանձնման հետ կապված գործերում այս իրավունքը ենթադրում է պայմանագրի կողմ հանդիսացող անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված համապատասխան նորմերի առկայություն, որը

<sup>21</sup> ECHR, Shamayev and 12 others v. Georgia and Russia, Judgment of 12 April 2005

<sup>22</sup> ECHR, HRL v. France, Judgment of 29 April 1997

հանձնման ենթակա անձանց հնարավորություն կտա դիմելու պետական իշխանության մարմիններին, առաջին հերթին՝ դատարաններին, որոնք օժտված են այդ կապակցությամբ որոշումներ կայացնելու իրավասությամբ և գլխավորը՝ անձին պետք է իրական հնարավորություն տրվի օգտվելու այդ հնարավորությունից: Շամակը և այլոք ընդդեմ Վրաստանի գործով, դատարանը 13-րդ հոդվածի խախտում գտավ այն հիմքով, որ Վրաստանի օրենսդրությունը հանձնման ժամանակ չունեի հանձնման ընթացակարգի բողոքարկման հստակ ընթացակարգ, բացի այդ, նույնիսկ եթե դիմողներին, Վրաստանի օրենսդրության համաձայն, տեսականորեն տրվել է այդ հնարավորությունը, գործնականում նրանք զրկված էին նման հնարավորությունից, քանի որ նրանք տեղեկացվել էին հանձնման որոշման մասին պատահաբար և շատ ուշ: Այս կապակցությամբ հանձնման ենթակա անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, որ հանձնման ենթակա անձն իրավունք ունի բողոքարկել հանձնման վերաբերյալ որոշումը:

Հանձնման թույլտվություն կամ հանձնելը մերժելու վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինն ընդունված որոշման մասին տեղեկացնում է այն անձին, որի նկատմամբ կայացվել է որոշումը և բացատրում է այն բողոքարկելու նրա իրավունքը: Այդ որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան որոշումները ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, իսկ վերաքննիչ դատարանի որոշումները՝ վճռաբեկ դատարան այն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները գործը քննում և դրա վերաբերյալ որոշում են կայացնում բողոքը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Հանձնման օրինականության հարցը քննելիս դատարանը չի լուծում անձի մեղավորության հարցը՝ սահմանափակելով միայն հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշման՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և միջազգային պայմանագրերին համապատասխանելիության հարցի ստուգմամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 491-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի կալանավորման մասին ՀՀ իրավասու դատարանի որոշումը պետք է կայացվի հանձնման ենթակա անձի ներկայությամբ: Եթե կալանավորման

մասին ՀՀ իրավասու դատարանի որոշումը կայացվել է առանց հանձնման ենթակա անձի ներկայության, նրա բացակայության կամ ներկա գտնվելուն խոչընդոտող այլ պատճառով, ապա նախքան այդ անձի հանձնումն իրականացնելը նա պետք է հնարավորություն ունենա բողոքարկելու դատարանի որոշումը վերադաս դատարան:

Հանձնման ենթակա անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ եթե անձը ՀՀ դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանն է հանձնվել նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար, ապա առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության այդ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրա հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել: Այսինքն՝ անձը կարող է ձերբակալվել, քրեական պատասխանատվության ենթարկվել միայն այն հանցագործությունների համար, որոնք նախատեսված են հանձնման մասին պահանջում, և երկրորդ՝ անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ հանցագործությունների համար միայն հանձնող պետության համաձայնության դեպքում: Եթե կան ապացույցներ, որոնք վկայում են տվյալ անձի կողմից այլ հանցագործություններ կատարելու մասին, ապա հանձման մասին նոր միջնորդություն է ներկայացվում: Առանց հանձնումը թույլատրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության հանձնված անձը չի կարող հանձնվել նաև երրորդ պետության: Սակայն հանձնումը թույլատրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնությունը չի պահանջվում, եթե հանձնված անձը, լինելով օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, իր նկատմամբ ՀՀ տարածքում համապատասխան դատավարական գործողությունների կատարումն ավարտելուց, իսկ նրան դատապարտելու դեպքում՝ պատիժը կրելուց կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով պատժից վաղաժամկետ ազատվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, չի լքում ՀՀ տարածքը, կամ լքելուց հետո նա ինքնակամ վերադառնում է այնտեղ: Նշված

ժամկետի մեջ չի հաշվարկվում այն ժամանակը, որի ընթացքում հանձնված անձն իրենից անկախ հանգամանքներով չէր կարող լքել ՀՀ տարածքը:

«Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքով կարգավորվում են քրեական գործերով իրավական օգնությանն առնչվող միջազգային համագործակցության կարգն ու պայմանները Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի առկայության, դրանց բացակայության կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով կարգավորում չստացած առանձին խնդիրների առաջացման դեպքերում:

«Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի կարգավորման շրջանակներում քրեական գործերով իրավական օգնությունն ընդգրկում է՝

ա) իրավական օգնության հարցումները (այդ թվում՝ վարույթային և ապացուցողական գործողություններ կատարելը, առանձին հանձնարարություններ կատարելը, փաստաթղթերի և առարկաների հանձնումը, տեղեկությունների փոխանակումը, անձանցից ցուցմունքներ կամ բացատրություններ վերցնելը, կալանավորված կամ այլ անձանց վերաբերյալ տեղեկատվություններ տրամադրելը, դատավարական փաստաթղթերի հասանելիության ապահովումը, առարկաների և վայրերի զննությունը, խուզարկությունը, իրեղեն ապացույցներ ձեռք բերելը և տրամադրելը, դատավարության ընթացքում ցուցմունք տալու համար դատապարտյալների ժամանակավոր փոխանցումը, քրեական գործի բացահայտման համար անհրաժեշտ փաստաթղթերի, ձայնագրությունների, այդ թվում՝ բանկային, ֆինանսական, կոոպերատիվ կամ գործարար փաստաթղթերի բնօրինակների կամ հաստատված պատճենների տրամադրումը, հանցագործության արդյունքում ստացված եկամտի կամ շահույթի սառեցումը, առգրավումը և փոխանցումը և այլն),

բ) հանձնումը, այդ թվում՝ ժամանակավոր հանձնումը,

գ) համագործակցության այլ տեսակներ (այդ թվում՝ քրեական վարույթի փոխանցումը, դատապարտյալների փոխանցումը, պայմանական դատապարտված կամ պայմանական վաղաժամկետ ազատված անձի նկատմամբ հսկողություն իրականացնելը, օտարերկրյա պետության կայացրած դատավճռի ճանաչումը, փոխարկումը և կատարումը):



Քրեական գործերով իրավական օգնությունն իրականացվում է միայն այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնք իրավական օգնության հարցումն ուղարկելու պահին քրեորեն պատժելի են և հարցումն ուղարկող, և հարցումը ստացող պետություններում՝ հաշվի առնելով միջազգային պայմանագրերով սահմանված բացառությունները:

Անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու նպատակով՝ քրեական գործերով իրավական օգնությունն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետության իրավասու մարմինների միջև անձնական տվյալներ պարունակող տեղեկատվությունը տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի շրջանակներում:

Ոչ ոք չպետք է հանձնի օտարերկրյա այն պետությանը, որտեղ լուրջ վտանգ կա, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումներ, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ: Բացի այդ՝ ՀՀ-ում վերացված է մահապատիժը և այդ պայմաններում ՀՀ կարող է նաև հանցանք կատարած անձին չհանձնել այն պետությանը, որի օրենքներով տվյալ հանցագործության համար նախատեսված է մահապատիժ: Նման դեպքերում հանձման պայման է հանդիսանում հանցագործին պահանջող պետության իշխանությունների երաշխավորությունը, որ հանձնված հանցագործությունների նկատմամբ մահապատիժ չի կիրառվում:

Այս սկզբունքը ամրագրված է Քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 4 մասում, որում ամրագրված է, եթե հանցանք կատարած անձանց հանձնելը պահանջող օրենքներով մահապատիժ է նախատեսված, ապա հանցանք կատարած անձանց հանձնումը կարող է մերժվել, եթե պահանջող կողմը պահանջ ստացող կողմին բավարար երաշխիքներ չի ներկայացնում, որ մահվան դատավճիռը ի կատար չի ածվի: Հանցանք կատարած անձից հրաժարվելու դեպքում օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցագործությունների համար քրեական հետապնդում է իրականացվում ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Պատժի կատարման համար հանցանք կատարած անձին հանձնելու իրավական հիմք է հանդիսանում հանձնում պահանջող պետությունում այդ անձի նկատմամբ կայացրած և օրինական

ուժի մեջ մտած դատավճիռը, ընդ որում՝ հանձնումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ դատավճիռը օրհական ուժի մեջ է մտնում:

## **§2.Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությունը**

Միջազգային իրավունքի արդյունավետությունն էականորեն պայմանավորված է ներպետական օրենսդրությամբ՝ նախևառաջ յուրաքանչյուր պետության հիմնական օրենքով, դրա սկզբունքների և նորմերի ներդրման աստիճանից: Միջազգային իրավունքի նորմերի փաստացի կիրառումը պետության տարածքում իրականացվում է ներպետական իրավունքի նորմերում դրանց ներդրման միջոցով և սահմանվում է որպես միջազգային իրավունքի իմպլեմենտացիա<sup>23</sup>:

Հայաստանի Հանրապետության կողմից քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային ապայմանագրերի իրականացման գործում հիմնական դերը վերապահված է ներպետական օրենսդրությանը, որում ամրագրված են իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային պայմանագրերում տեղ գտած հիմնարար դրույթները:

Ներպետական օրենսդրության դերը պայմանավորված է նաև նրանով, որ իրավական օգնության ոլորտում ՀՀ միջազգային պայմանագրերն ունեն կարգավորման սահմանափակ հնարավորություն: Դրանցում ամրագրված կանոնները կրում են ընդհանուր բնույթ և չեն բովանդակում քրեական գործերի քննության ընթացքում իրավական օգնություն ցույց տալու հարցի մանրամասն կարգավորում: Միջազգային պայմանագրերով սահմանված կանոններն իրավական նորմեր են, որոնք կարգավորում են պայմանագրով նախատեսված իրավական օգնություն ցույց տալու առանձին տեսակները և դատավարական ու քննչական գործողություններ կատարելիս այդ նորմերի վրա հղում կատարելը պարտադիր է այնպես, ինչպես ազգային օրենսդրության դեպքում: Ի տարբերություն միջազգային պայմանագրերի՝ ներպետական օրենսդրությունն իրավական օգնության

<sup>23</sup> Каламкарян Р. А., Мигачев Ю. И., Международное право, М., 2005

վերաբերյալ պարունակում է առավել մանրամասն կարգավորումներ՝ ներառելով նշված հարցին առնչվող մի շարք նորմեր, այդ թվում՝ իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային պայմանագրերում տեղ գտած հիմնարար դրույթները:

Բացի ներպետական օրենսդրությունից, իրավական օգնություն ցույց տալու մասին համագործակցությունը ենթադրում է նաև օտարերկրյա պետության օրենսդրության կիրառում, ինչն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 474-րդ հոդվածի 2-րդ մասով, սակայն այն դեպքում, երբ օտարերկրյա պետության օրենսդրության կիրառումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության և տվյալ օտարերկրյա պետության մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրով: Օտարերկրյա պետության օրենսդրության կիրառումը նախատեսված է նաև 1993թ. հունվարի 22-ին ԱՊՀ երկրների միջև կնքված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիայով, որի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարություն կատարելիս հարցվող մարմինը կիրառում է իր երկրի օրենսդրությունը: Հարցնող մարմնի խնդրանքով նա կարող է կիրառել նաև հարցնող կողմի դատավարական նորմերը, եթե միայն դրանք չեն հակասում հարցվող կողմի օրենսդրությանը:

Սա ունի հատուկ նշանակություն: Իրավական օգնությունը շոշափում է այն պետության շահերը, որը դիմել է օգնության համար և հաճախ առանց օտարերկրյա պետության օրենսդրության կիրառման իրավական օգնություն ցույց տալն անհնար է: Բազմաթիվ դեպքերում օտարերկրյա պետության օրենսդրության կիրառումը հնարավորություն է տալիս արտասահմանում քրեական գործերով ձեռք բերել ապացույցներ, դատարանից և քննչական մարմիններից խուսափող մեղադրյալի նկատմամբ իրականացնել քրեական հետապնդում և կատարել օտարերկրյա դատարանի դատավճիռը: Հետևաբար կարող ենք ասել, որ իրավական օգնության տրամադրումն առավել արդյունավետ բնույթ է կրում և ծառայում է իր նպատակային նշանակությանը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքն ամրագրում է միջպետական հարաբերություններում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու կարգը՝ միջազգային պայմանագրերի առկայության դեպքում և դրանց

համապատասխան, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարանների, դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների հանձնարարությամբ կամ խնդրանքով օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության, զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների կատարումը, ինչպես նաև օտարերկրյա պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց հարցումով Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական գործողությունների կատարումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ այդ պայմանագրերով և քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարություն կատարելիս կիրառվում է հայցվող պետության, տվյալ դեպքում՝ ՀՀ օրենսդրությունը: Մյուս կողմի խնդրանքով կարելի է կիրառել նաև այդ պետության դատավարական նորմերը, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը: Համապատասխան միջնորդության և հայցվող կողմի թույլտվության առկայության դեպքում հայցող կողմի ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել միջնորդության կատարմանը: Միջնորդությունը կատարելուց հետո բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ուղարկվեն հայցող կողմին: Այն դեպքերում, երբ իրավական օգնություն ցույց տալը հնարավոր չէ, հայցվող կողմն իր պատասխանում պետք է նշի այն բոլոր հանգամանքները, որոնք օբյեկտիվորեն խոչընդոտել են միջնորդության կատարմանը:

Հայաստանի Հանրապետությունում իրավական օգնություն ցույց տալու հարցերով հաղորդակցությունն իրականացնող մարմինները տարբեր են՝ կախված այն հանգամանքից, թե իրավական օգնության հարցն ինչ փուլում է գտնվում: Մինչդեռ տական վարույթում գտնվող գործերով հաղորդակցությունն իրականացվում է ՀՀ գլխավոր դատախազության, իսկ դատարանի վարույթում գտնվող գործերով՝ ՀՀ արդարադատության նախարարության միջոցով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված լինելու դեպքում իրավական օգնություն ցույց տալու հարցերով հաղորդակցությունը

կարող է իրականացվել նաև դիվանագիտական ուղիներով՝ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների միջոցով, որոնք, համապատասխան հարցումները ստանալով, անհապաղ ներկայացնում են վերը նշված իրավասու մարմինն՝ կատարման ներկայացնելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կարգավորված է նաև մի քանի միջազգային պայմանագրերով նախատեսված հարցումների կատարումը: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 476-րդ հոդվածը սահմանում է մեկից ավելի միջազգային պայմանագրերով նախատեսված հարցումների կատարման կարգը.

«1. Եթե օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից դատավարական գործողությունների վերաբերյալ հարցումների կատարման պարտականությունը բխում է տվյալ պետության հետ կնքված՝ Հայաստանի Հանրապետության մեկից ավելի միջազգային պայմանագրերից, ապա կիրառվում են հետևյալ կանոնները.

1. Եթե հարցման մեջ նշված է, թե որոշակի որ միջազգային պայմանագրի հիման վրա է այն կազմվել և ներկայացվել, ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այդ միջազգային պայմանագրով,

2. Եթե հարցման մեջ նշված են տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող մեկից ավելի միջազգային պայմանագրեր, ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են հարցման մեջ նշված այն միջազգային պայմանագրով, որն առավել ամբողջական լուծում է տալիս հարցման կատարման հետ կապված հարցերին՝ միաժամանակ կիրառելով մյուս պայմանագրի դրույթները, որոնք նախատեսված չեն առավել ամբողջական լուծում տվող միջազգային պայմանագրով, բայց հարցումն առավել լրիվ և արագ կատարելու հնարավորություն են տալիս,

3. Եթե հարցման մեջ նշում չկա տվյալ պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող որևէ միջազգային պայմանագրի վերաբերյալ,

ապա հարցումը կատարող Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այն միջազգային պայմանագրով, որն առավել ամբողջական լուծում է տալիս հարցման լիարժեք կատարման հետ կապված հարցերին, որի ընթացքում չի բացառվում նաև տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող մյուս պայմանագրերի այն դրույթների կիրառումը, որոնք լրացնում են այն պայմանագրին, որով ղեկավարվում են դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը:

2.Եթե Հայաստանի Հանրապետության և հարցում ներկայացրած օտարերկրյա պետության մասնակցությամբ գործում է բազմակողմ միջազգային պայմանագիր, որը հանձնման հարցերով այդ պայմանագրին գերակայություն է տալիս կողմերի միջև գործող և հանձնման հարցեր կարգավորող այլ միջազգային պայմանագրերի նկատմամբ, ապա Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը ղեկավարվում են այդ բազմակողմ միջազգային պայմանագրով»:

Հարցումների կատարման անհնարինության դեպքում օրենսդիրը նախատեսել է նաև դրանց մերժման հնարավորությունը: Այնուամենայնիվ, հայցվող կողմն իր պատասխանում պետք է նշի այն բոլոր հանգամանքները, որոնք օբյեկտիվորեն խոչընդոտել են միջնորդության կատարմանը:

«Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետության իրավասու մարմինների ներկայացրած դատավարական գործողությունների վերաբերյալ հարցումների կատարումը կարող է մերժվել այդ պայմանագրերով նախատեսված հիմքերով: Եթե հարցումը ներկայացրել է այն օտարերկրյա պետության իրավասու մարմինը, որի հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է մեկից ավելի համապատասխան միջազգային պայմանագրերով, ապա հարցման կատարումը կարող է մերժվել միայն այն դեպքում, եթե մերժման հիմք հանդիսացող հանգամանքը նախատեսված է բոլոր միջազգային պայմանագրերով՝ անկախ նրանից, թե հարցումը կազմվել և ներկայացվել է մերժման հիմք հանդիսացած հանգամանքը նախատեսող, թե այլ

միջազգային պայմանագրին համապատասխան, կամ եթե հարցման կատարումը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը, ազգային անվտանգությունը, և նշված հիմքերով հարցման կատարման մերժման հնարավորությունը նախատեսված է տվյալ օտարերկրյա պետության Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերից թեկուզ մեկով:

«Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959թ. եվրոպական կոնվենցիան նախատեսում է նաև պայման, որ եթե խնդրանքը վերաբերում է այնպիսի արարքի, որը հարցվող կողմը համարում է քաղաքական հանցագործություն կամ ֆինանսական հանցագործություն:

Այդուհանդերձ, իրավական օգնության խնդրանքի մերժման յուրաքանչյուր դեպքում պետք է հստակ նշվեն դրա պատճառները: Հարկ է նշել նաև, որ կողմերն իրենք են հոգում իրենց տարածքներում իրավական օգնության հետ կապված բոլոր ծախսերը:

Օրենսդիրը նախատեսել է նաև միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում իրավական օգնություն ցույց տալու ապայմանները: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 482-րդ հոդվածի 1-ին մասի՝ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև քրեական գործերով դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում տվյալ պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց և Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի միջև փոխադարձության հիման վրա իրավական օգնություն կարող է ցույց տրվել բացառիկ դեպքերում՝ տվյալ օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև իրավական ոլորտում փոխադարձության հիման վրա փոխօգնություն ցույց տալու շուրջ դիվանագիտական ուղիներով ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, որը պետք է նախապես համաձայնեցված լինի՝

- ՀՀ արդարադատության նախարարության հետ՝ դատական վարույթում գտնվող քրեական գործերով դատավարական գործողություններ կատարելու և դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ,

- ՀՀ գլխավոր դատախազության հետ՝ մինչդատական վարույթում գտնվող գործերով դատավարական գործողություններ կատարելու առնչությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ փոխադարձության կարգով օտարերկրյա պետության իրավասու մարմնին հասցեագրվող առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին հանձնարարությունը, հարցումը կամ խնդրանքը պետք է կազմվեն գրավոր, ստորագրված լինեն ուղարկող պաշտոնատար անձի կողմից և հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատարանի, դատախազության, հետաքննության մարմնի պաշտոնական կնիքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է նաև խնդրանքի բովանդակությանը վերաբերող դրույթները, այսինքն՝ թե ինչ պետք է պարունակի խնդրանքը:

Օրենսդիրը սահմանել է նաև փոխադարձության հիման վրա քրեական գործերով իրավական օգնության խնդրանքի կատարման անհնարինության դեպքում ստացված փաստաթղթերի վերադարձնելը խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության իրավասու մարմնին՝ նշելով դրա կատարմանը խոչընդոտող պատճառները, ինչպես նաև նախատեսել է խնդրանքի մերժման հնարավորությունն այն դեպքում, եթե դրա կատարումը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության անկախությունը, սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը կամ անվտանգությունը կամ հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Պետությունների համագործակցությունը միջազգային-իրավական համագործակցության ոլորտում պետք է իրականացվի միջազգային օրինականության ռեժիմում՝ միջազգային-իրավական, ինչպես նաև ներպետական օրենսդրության նորմերի կիրառմամբ, սակայն ՀՀ ներպետական օրենսդրությունը երկար ժամանակ չէր սահմանում հանձնման գործընթացը կարգավորող բավարար դրույթներ, և ներպետական օրենսդրությամբ փաստացի չէր կարգավորվում այլ պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց ձերբակալման, հանձնման նպատակով կալանավորելու, հանձնման ենթակա անձի իրավունքներն ու ազատություններն ապահովելու, օտարերկրյա պետության



իրավապահ մարմինների կողմից ստացված հանձնման միջնորդությունները քննարկելու հարցը:

ՀՀ ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների համապատասխան հոդվածներով հիմնականում սահմանված են անձի հանձնման մասին այն ընդհանուր դրությունները, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային երկկողմ և բազմակողմ փաստաթղթերով, սակայն դրանցով, ըստ էության, չէին կարգավորվում անձին հանձնման նպատակով կալանավորելու, կալանքի տակ պահելու կարգն ու ժամկետները, ինչպես նաև հանձնման ինստիտուտի հետ կապված մի շարք այլ հարցեր:

Հանձնման վերաբերյալ օտարերկրյա պետությունների օրենսդրության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հավաստել, որ ԱՊՀ մասնակից պետությունների կամ օտարերկրյա այլ պետությունների ներպետական օրենսդրությամբ մանրամասն սահմանված են հանձնման գործընթացը կարգավորող դրույթները, որոնք առաջին հերթին նախատեսում են այդ ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության ապահովման երաշխիքներ, ինչպես նաև դյուրին է դարձնում միջազգային փաստաթղթերով նախատեսված հանձնման գործընթացը:

Հանձնման գործընթացը կարգավորող դրույթների բացակայությունը պրակտիկայում լուրջ բարդություններ էր առաջացնում: Այսպես, օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետությունում «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայով և 28.03.1997թ. արձանագրությամբ նախատեսված կարգով հայտնաբերված անձանց ձերբակալման պահից օտարերկրյա պետության իրավասու դատարանի որոշման օրինակի հիման վրա անձը տեղափոխվում էր ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկ՝ 40 օր ժամկետով, ինչպես նախատեսված է հանցագործություն կատարած անձանց հանձնման հարցը կարգավորող միջազգային պայմանագրերով:

ՀՀ օրենսդրությունը չէր նախատեսում «էքստրադիցիոն կալանք» հասկացությունը, իսկ 40-օրյա ժամկետը սովորաբար բավարար չէր հայցող կողմի իրավապահ մարմինների կողմից հանձնման մասին միջնորդությունը ստանալու, «էքստրադիցիոն ստուգում» իրականացնելու, այն է՝ միջնորդությունը ստանալու պահից համապատասխան ուսումնասիրություն անելու, ներպետական և միջազգային օրենսդրության դրույթների համադրման, անհրաժեշտ հարցումների կատարման, համապատասխան որոշում կայացնելու և անձի փաստացի հանձնումն իրականացնելու համար:

Հանձնման ոլորտում որոշակի բարդություններ էին առաջանում նաև «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի և «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների կողմից հետախուզվող անձանց հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերելիս, երբ անհրաժեշտություն էր առաջանում նրանց քրեակատարողական հիմնարկ տեղափոխել, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ «Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման»: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէր օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող անձանց կալանավորելու առանձին ընթացակարգ: 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է անձին ազատությունից զրկելու պայմանները և կարգը: Մասնավորապես, նույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, որպես անձնական ազատությունից զրկելու հիմք, թվարկում է անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

Հաճախ հանձնման մասին միջնորդությունը բավարարելուց հետո հանձնման ենթակա անձը հանձնման մասին որոշումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկում էր ՀՀ վերաքննիչ քրեական դատարան և վճռաբեկ դատարան, և այդ ընթացքում նրան կալանքի տակ պահելու

հիմքերն ու ժամկետները թե՛ ՀՀ ներպետական օրենսդրությամբ, և թե՛ միջազգային պայմանագրերով նախատեսված չէին, որով էլ պայմանավորվում էր բազմաթիվ բողոքների ներկայացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածը նախատեսում է, որ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է անհապաղ ազատ արձակել առանց դատարանի համապատասխան որոշման կալանավորված, ինչպես նաև դատարանի որոշմամբ կալանքի տակ պահելու սահմանված ժամկետը լրացած անձանց: Այս դեպքում նույնպես օրենքը չէր հստակեցնում՝ արդյոք անհրաժեշտ է ունենալ Հայաստանի Հանրապետության դատարանի կողմից կայացված որոշում, թե այլ պետության դատարանի կողմից կայացված որոշումը հանձնման գործընթացում կարող է բավարար համարվել՝ հանձնումը պահանջվող անձի վերաբերյալ որոշման քննարկման և վերջնական որոշման կայացման նպատակով նախաէքստրադիցիոն կալանքի տակ պահելու պարագայում:

2010թ. Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի(բռնություն սպառնալիքով, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ խոշոր չափերով շորթում) հատկանիշներով հետախուզվող Թ. Մ.-ն ՀՀ տարածքում էքստրադիցիոն կալանքի տակ է պահվել ՌԴ Նովգորոդի մարզի Նովգորոդ քաղաքի դատարանի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 04.07.2009թ. որոշման հիման վրա: Թ. Մ.ի պաշտպանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ կալանքի տակ պահելը անօրինական ճանաչելու նպատակով: Թ. Մ.-ին կալանավորելու և կալանքի տակ պահելու հանգամանքները քննության առնելով՝ հիշյալ դատարանը գտել է, որ պարտադիր է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ՀՀ իրավասու դատարանի որոշում՝ արձանագրելով, որ խախտվել է Թ. Մ.-ի ազատության

իրավունքը՝ այն է քրեակատարողական հիմնարկը պարտավոր էր ձերբակալման պահից 72 ժամ լրանալուց հետո նրան անհապաղ ազատ արձակել, քանի որ առկա չէր ՀՀ իրավասու դատարանի կողմից կայացված համապատասխան դատական ակտ՝ կալանավորման որոշում: Իր որոշմամբ դատարանը նաև առաջարկել է նման պարագայում ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված կալանավորման դրույթներով:

Սակայն հարկ է նշել, որ օտարերկրյա պետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող անձին անհապաղ դատավորի մոտ տանելը և 30-40 օրյա կալանավորումն ապահովելով՝ չլուծվեց հանձնման ոլորտում ՀՀ օրենսդրության հիմնական բացը՝ էքստրադիցիոն կալանքի բացակայությունը: 30-40-օրյա ժամկետը սովորաբար բավարար չէր լինում հայցող կողմի իրավապահ մարմինների կողմից հանձնման մասին միջնորդությունը ստանալու և էքստրադիցիոն ստուգում իրականացնելու համար:

«Էքստրադիցիոն կալանք» հասկացությունն ավելի լայն է, քան 30-40-օրյա՝ «ժամանակավոր կալանավորումը»: Եթե ժամանակավոր կալանավորումը նախատեսված է օտարերկրյա պետության կողմից ներկայացվող հանձնման միջնորդության և հանձնման գործընթացում անհրաժեշտ փաստաթղթերի ստացման համար, ապա էքստրադիցիոն կալանքը նախատեսված է էքստրադիցիոն ստուգում իրականացնելու՝ միջնորդությունը ստանալու պահից համապատասխան ուսումնասիրություն կատարելու, ներպետական և միջազգային օրենսդրության դրույթների համադրման, անհրաժեշտ հարցումների կատարման, որի ավարտից հետո համապատասխան որոշում կայացնելու, այն սահմանված կարգով բողոքարկելու հնարավորություն ընձեռելու և անձի փաստացի հանձնումն իրականացնելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանձնման ոլորտում նմանատիպ խնդիրների բախվել են նաև ԱՊՀ մյուս պետությունների իրավապահ մարմինները: Արդյունքում առկա են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի քանի նախադեպային որոշումներ, երբ դատարանն արձանագրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված դրույթի (հանձնման նպատակով կալանավորում) խախտում:

Սուղատենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը դեռևս 2008թ. նշել է, որ «[...] քրեական դատավարության օրենսգրքում և ցանկացած այլ նորմատիվ ակտերում բացակայում են հանձնման նպատակով անձին կալանքի տակ պահելու ընթացակարգ նախատեսող իրավական դրույթները: Գերագույն դատարանը տեղյակ է եղել այդ խնդրի վերաբերյալ և փորձել է այն լուծել իր որոշմամբ: Նա ստորադաս դատարաններին հորդորել է հանձնման ընթացակարգում կիրառել քրեական դատավարության օրենսգրքի որոշ դրույթներ: Այնուամենայնիվ քրեական դատավարության օրենսգիրքն ինքնին այդպիսի հնարավորություն չի նախատեսում՝ հստակ նշելով, որ խափանման միջոցները պետք է կիրառվեն կասկածյալի, մեղադրյալի կամ դատապարտյալի նկատմամբ: Չնայած Ուկրաինայի գերագույն դատարանի նշված մեկնաբանություններին՝ այնուամենայնիվ նշված գործով դատարանը եկել է այն եզրահանգման, որ ուկրաինական օրենսդրությունը չի նախատեսում բավականաչափ հստակ և կանխատեսելի ընթացակարգի կիրառում, որպեսզի հաղթահարվի հանձնման կապակցությամբ կալանքի տակ պահելու կամայականության վտանգը:

Ձերբակալված անձանց դատավորի մոտ տանելու և օտարերկրյա իրավասու մարմնի կողմից տրված կալանավորման մասին որոշումը վերահաստատելու պրակտիկան ձևավորվելու պարագայում առաջացել էր այն հարցը, թե որ գերատեսչությունն է իրավասու հիշյալ միջնորդությամբ դատարան դիմելու հարցում՝ ՀՀ արդարադատության նախարարությունը, թե ՀՀ դատախազությունը:

ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած օտարերկրյա պետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող անձանց ձերբակալման և կալանավորման դեպքում խնդրահարույց էր նաև վերջիններիս պաշտպանի և թարգմանչի ապահովման, ինչպես նաև արգելանքի տակ գտնվելիս տեսակցելու թույլտվության հարցերը: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է հիշյալ հարցերը միայն ՀՀ իրավապահ մարմինների վարույթում քննվող գործերով, սակայն բացակայում էր համապատասխան կարգավորումը հանձնման նպատակով

ձերբակալված և կալանավորված անձանց պարագայում: Արդյունքում միջնորդության քննարկման ընթացքում առաջանում էին խնդիրներ անձին պատշաճ կերպով թարգմանչով և պաշտպանով ապահովելու հարցում:

Պրակտիկայում հաճախ հանդիպող այս խնդիրների կարգավորման նպատակով 19.03.2012թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվեց հոդվածներով, որոնք ապահովում են մարդու սահմանադրական և կոնվենցիոն իրավունքներն երաշխավորող հանձնման ընթացակարգը:

Մասնավորապես՝ լրացումները նախատեսում են ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման, ժամանակավոր կալանավորման, հանձնելու նպատակով կալանավորման կարգերը, ինչպես նաև սահմանում է արգելանքի վերցված անձանց իրավունքները՝ դրույթներ, որոնց բացակայությունը նպաստում էր հանձնման ոլորտում մարդու իրավունքների խախտումներին:

Հատկանշական է այն, որ կատարված լրացումների համաձայն՝ վերոհիշյալ կալանավորման կարգերը տարածվում են նաև ՀՀ տարածքից դուրս ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարած ՀՀ քաղաքացիների վրա՝ քրեական գործով վարույթը ՀՀ փոխանցելու նպատակով: Եթե նախկինում կալանքի տակ գտնվող անձի ՀՀ քաղաքացիությունը հիմնավորելու դեպքում վերջինս ազատ էր արձակվում արգելանքից, քանի որ ենթակա չէր հանձնման, և փաստացի հանցագործության մեջ մեղադրվող անձը հայտնվում էր ազատության մեջ՝ մինչև օտարերկրյա պետության իրավապահ մարմնից քրեական գործի ստանալը, ապա օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ տարածքից դուրս ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարած ՀՀ քաղաքացիները նույնպես կարող են պահվել արգելանքի տակ՝ մինչև օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից քրեական հետապնդում իրականացնելու մասին միջնորդություն ուղարկելը:

Ընթացակարգը կանոնակարգելու նպատակով իրավասու մարմիններից պահանջվել է ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալելու դեպքում անձի ձերբակալման մասին անհապաղ հաղորդում ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազություն՝ կից ներկայացնելով անձին բերման

ենթարկելու մասին արձանագրությունը, ձերբակալման մասին արձանագրությունը, ձերբակալվածի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, արգելանքի վերցված անձի դատավարական իրավունքները հետաքննության մարմնի կողմից բացատրված լինելու մասին արձանագրությունը, որում ձերբակալված անձի կողմից համապատասխան գրառմամբ արտահայտված կլինի պաշտպան ունենալու, պաշտպանից հրաժարվելու և ինքնուրույն պաշտպանվելու վերջինիս կամարտահայտությունը, դրանով պայմանավորված՝ անհրաժեշտության դեպքում պաշտպան ներգրավելու մասին որոշումը, քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց իրավունքներն ապահովելու նպատակով արգելանքի վերցնելու պահից անհապաղ թարգմանիչ և պաշտպան ներգրավելու մասին որոշումները, ինչպես նաև օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը և որոշումը: Բացի դրանից, պահանջվել է արգելանքի վերցված անձին տրամադրել ձերբակալման մասին արձանագրության, ինչպես նաև օտարերկրյա պետության իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդության և որոշման պատճենները՝ այդ մասին կազմելով համապատասխան արձանագրություն, իսկ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց վերը նշված փաստաթղթերի պատճենները տրամադրել այն լեզվով, որին նրանք տիրապետում են:

« քաղաքացիների հայտնաբերման և քրեական գործի ստացման գործընթացում փաստացի չկարգավորված է մնում այն անձանց կարգավիճակը, որոնց նկատմամբ օտարերկրյա պետության իրավապահ մարմինների կողմից հարուցվել են քրեական գործեր, իսկ հետագայում տվյալ անձինք հայտնաբերվել են «-ում, հանդիսանում են երկքաղաքացի և, հետևաբար, համաձայն « Սահմանադրության, « կողմից վավերացված միջազգային պայմանագրերի և « քրեական դատավարության օրենսգրքի՝ ենթական չեն հանձնման:

Սովորաբար պետությունների ներպետական օրենսդրությունը նախատեսում է քրեական հետապնդում իրականացնելու նպատակով հարցուցված քրեական գործի փոխանցում օտարերկրյա պետության իրավապահ մարմիններին միայն այն

դեպքում, երբ մեղադրյալը հանդիսանում է տվյալ օտարերկրյա պետության քաղաքացի:

Սակայն միջազգային իրավական պրակտիկայում լինում են դեպքեր, երբ հայտնաբերված անձինք լինում են երկքաղաքացի: Նման դեպքերում քրեական գործի փոխանցում, համաձայն ներպետական և միջազգային օրենսդրության, չի նախատեսվում<sup>24</sup>:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ հանցավորության դեմ պայքարում՝ որպես արդյունավետ իրավական գործիք, հանդես է գալիս հանձնումը, որի կիրառումը թույլ է տալիս յուրաքանչյուր դեպքում ապահովել պատժի անխուսափելիությունը և պատասխանատվության ենթարկել քրեորեն հետապնդելի արարքներ կատարած անձանց:

---

<sup>24</sup> Հ. Մարգսյան, Վ. Ենգիբարյան, Հանձնման (Էքստրադիցիայի) ինստիտուտի միջազգային իրավական և ներպետական հիմնախնդիրները, Եր. 2016



## **ԳԼՈՒԽ 2. Քրեական գործերով իրավական օգնության, ներառյալ հանձնման ինստիտուտի վերաբերյալ միջազգային իրավունքի ձևավորումը և զարգացումը**

### **§1. Հանձնման ինստիտուտի ժամանակակից միջազգային իրավունքի հիմքերը**

Իրավական օգնության, այդ թվում նաև հանձնման ինստիտուտի պատմական վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ այն ձևավորվել է միջազգային և ներպետական իրավունքի սահմանագծում: Հանցավորության դեմ միջազգային պայքարը պետությունների միջև համագործակցության անհրաժեշտ բնագավառ է, քանի որ հանցավորության որոշ ձևերի դեմ պայքարի համար բավարար չեն միայն ներպետական միջոցները: Միջազգային-իրավական փաստաթղթերում սպառիչ ներկայացվում են իրավական օգնության միջնորդության ձևին, բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանձնման վերաբերյալ հարցման մեջ պարտադիր պարունակվող տեղեկությունները, հանձնումը մերժելու դեպքերը և այլն:

Հանձնումը դասվում է միջազգային քրեական իրավունքի այն ինստիտուտների թվին, որը ժամանակակից պայմաններում նշանակալիորեն զարգանում է: Չնայած հանձնման պատմական զարգացումը վկայում է հանձնման գործընթացում մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ դրական մոտեցման հետզհետե ամրապնդմանը, այդուհանդերձ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափորոշիչները և դրանց պաշտպանության ինստիտուցիոնալ մեխանիզմները սահմանող հիմնարար փաստաթղթերի ընդունումն անկասկած էական ազդեցություն ունեցավ հանձնման ինստիտուտի բովանդակության վրա: Այնպիսի միջազգային-իրավական ակտեր, ինչպիսիք են մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (1950թ.), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության մասին» միջազգային դաշնագիրը (1966թ.), «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների դեմ» ՄԱԿ-ի (1948թ.) կոնվենցիան վերագնահատեցին քրեական գործերով միջազգային համագործակցության շրջանակներում հանձնման

իրականացման գործընթացում մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:

Ինչպես նշում է Լ. Հուսեյնովը, պայմանագրային գործիքների միջոցով մարդու բնական և անօտարելի իրավունքները, որոնք որոշակիորեն ամրագրված են ներպետական օրենսդրության մեջ, իրենց համընդհանուր պարտադիրության շնորհիվ ձեռք են բերում միջազգային ճանաչում, և, ի լրումն իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմների, ստանում են նաև միջազգային «խնամակալություն»:<sup>25</sup> Քանի որ պետությունն անդամակցելով միջազգային պայմանագրին որոշակի պարտավորություններ է ստանձնում և այդ պահից իրավաբանորեն պարտավորվում է հետևել տվյալ պայմանագրով սահմանված վարքագծի այն չափորոշիչներին, որոնք բխում են տվյալ պայմանագրի բնույթից: Եթե միջազգային-իրավական փաստաթղթերը սահմանում են իրավունքները, ապա դրանց կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող կառույցները հետևում են պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Պետք է նշել, որ յուրաքանչյուր իրավունք պետության համար առաջացնում է երեք տեսակի պարտավորություն.

- «հարգելու պարտավորություն», այսինքն՝ պետությունը և նրա մարմինները չպետք է ոտնձգություններ թույլ տան հենց իրենք,
- «պաշտպանելու ապարտավորություն», այն է՝ պետությունը պարտավոր է պաշտպանել իրավունքի չոտնահարումն այլ երրորդ անձանց կողմից և պատժել մեղավորներին,
- «իրականացման պարտավորություն», որը պահանջում է հատուկ պոզիտիվ միջոցներ իրավունքների լրիվ ծավալով իրականացման համար:

Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետության պարտավորությունները դասակարգել է երկու տեսակի.

1. Նեգատիվ պարտավորություններ,
2. Պոզիտիվ պարտավորություններ:<sup>26</sup>

<sup>25</sup> Гусейнов Л. Г., Международные обязательства государств в области прав человека

<sup>26</sup> A. R. Mowbray, The development of positive obligations under the European Convention on Human Rights by the European Court of Human Rights, Hart Publishing, Oxford-Portland Oregon, 2004

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսանկյունից պոզիտիվ պարտավորության սահմանումը (որևէ բան անելու պարտավորություն) պետություններից պահանջում է գործնականում անհրաժեշտ քայլեր ձեռնարկել իրավունքի երաշխավորման ուղղությամբ կամ պետություններից պահանջում է ընդունել ողջամիտ և կիրառելի միջոցներ անձի իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Նման միջոցները կարող են լինել նաև դատական, ինչը ենթադրում է օրենքով նախատեսված սանկցիաների կիրառում Կոնվենցիայի դրույթների ոտնահարում թույլ տված անձանց նկատմամբ, ինչպես նաև համապատասխան օրենսդրական բարեփոխումների իրականացում:<sup>27</sup>

Այսպես, եթե պետությունը պարտավորություն է ստանձնել արգելել խոշտանգումները կամ այլ արգելված վերաբերմունքը, ապա իրավունք չունի հանձնի այն անձին, որը հանձնումը պահանջած պետությունում կարող է ենթարկվել խոշտանգումների կամ համապատասխան վերաբերմունքի: Բացի դրանից, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետության ստանձնած միջազգային պարտավորություններն օբյեկտիվորեն ենթադրում են հանձնման ենթակա անձի իրավունքների խախտման հնարավորության հարցի դիտարկումը քաղաքական հայացքների, ազգային, կրոնական, ռասայական պատկանելիության հետ կապված դատական քննության ընթացքում նվազագույն երաշխիքների բացակայության տեսանկյունից և այլն: Չնայած նման հարցերի քննարկումը բարդացնում է անձի հանձնման գործընթացը, այդուհանդերձ ընդհանուր առմամբ հանցավորության դեմ պայքարի տարատեսակ իրավական ինստիտուտների կիրառմամբ չեն կարող անտեսվել միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքները, իսկ գործընթացը պետք է հիմնվի հարկադրանքի միջոցների ենթարկված անձ նկատմամբ պատշաճ դատավարական երաշխիքների ապահովման վրա: Հիշյալ որոշումը բազմիցս արտահայտվել է միջազգային դատական մարմինների որոշումներում:

Հանձնման գործընթացում իրավունքների խախտման համատեքստում պետք է նկատի ունենալ ոչ թե մարդու իրավունքներն ընդհանրապես, որպես հանձնման

---

<sup>27</sup> Jean-Francois Akandji-Kombe, Positive obligations under the European Convention on Human Rights, Human Rights handbooks, N 7

շրջափակման միջոցի, այլ՝ որոշակի իրավունքները, որոնց խախտման իրական հնարավորությունը կարող է հանձնումը մերժելու հիմք հանդիսանալ: Հանձնումը մերժելու դեպքում պետք է ներկայացնել հանձնման ենթակա անձի համապատասխան իրավունքներին սպառնացող իրական վտանգը հիմնավորող ապացույցներ:

Հանձնման ընթացքում մարդու իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին միջազգային փաստաթղթերով երաշխավորված չափորոշիչների պահպանումը, հանձնման ողջ գործընթացում առավելագույն քննարկվող և ամենակարևոր հիմնախնդիրն է:

Պետք է նկատի ունենալ, որ հանձնման ենթակա անձի իրավունքների պաշտպանությունը հաճախ իրականացվում է ոչ թե ուղղակիորեն, այլ «միջնորդավորված», համընդհանուր և տարածաշրջանային միջազգային փաստաթղթերով սահմանված իրավունքների պաշտպանության միջոցով: Նշված միջազգային-իրավական փաստաթղթերը հանձնման գործընթացում ներգրավված անձի իրավունքներին բացառապես վերաբերող որևէ առանձին նորմ չեն նախատեսում: Այսպես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում հանձնման մասին հիշատակվում է ընդամենը 5-րդ հոդվածի «զ» կետում, որը սահմանում է. «Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով» և, ի թիվս այլ հիմքերի, «զ» կետում հստակեցվում է անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

Չնայած հանձնման գործընթացի նման սահմանափակ հիշատակմանը եվրոպական կոնվենցիայի տեքստում, մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել է հանձնման գործերով 3-րդ (Խոշտանգումների արգելում), 5-րդ (Ազատության և անձնական

անձեռնմխելիության իրավունք) և 6-րդ (Արդար դատաքննության իրավունք) հոդվածներով նախատեսված իրավունքների խախտումներին:

Դա է պատճառը, որ հանձնման վերաբերյալ միջնորդություն ստացած պետությունը հաճախ երկրնտրանքի առաջ է կանգնում՝ որ պայմանագրի դրույթներին տալ նախապատվությունը. արդյոք առաջնությունը պետք է տալ հանցավորության դեմ պայքարի շահերին, պատժողական քաղաքականության նպատակների իրականացմանը և հանձնել հանցագործության կատարումից հետո փախուստի դիմած հանցագործին պահանջող երկրին, թե հանձնման ենթակա մեղադրյալի կամ դատապարտյալի իրավունքների պաշտպանությունը հանձնումը պահանջող երկրում:

Թերևս, այս հարցի պատասխանը միանշանակ չէ և կախված է յուրաքանչյուր առանձին դեպքի հանգամանքներից: Միաժամանակ մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները դասվում են արժեքների այն դասին, որոնք առաջնահերթ պետք է պաշտպանվեն ինչպես ամբողջ միջազգային հանրության, այնպես էլ անհատների կողմից: Առանձին դեպքերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ստանձնած պարտավորությունները գերակա են պետության ստանձնած այլ միջազգային պարտավորությունների նկատմամբ:

Միջազգային իրավունքի ինստիտուտը 1983թ. սեպտեմբերի 1-ի «հանձնման նոր հիմնախնդիրները» բանաձևում մատնանշել է, որ հանձնումը կարող է մերժվել այն դեպքերում, երբ վտանգ կա, որ հանձնման ենթակա անձի հիմնարար իրավունքները կարող են ոտնահարվել հանձնումը պահանջած պետությունում, անկախ հանձնման ենթակա անձի և կատարած հանցագործության բնույթից ու տեսակից: Այդուհանդերձ, ընդհանուր առմամբ ճիշտ չէ խոսել միայն մարդու իրավունքների պաշտպանության մասին՝ անտեսելով հանձնման գործընթացով պայմանավորված մյուս շահերը, մասնավորապես հանցավորության դեմ պայքարը և հանցագործության զոհերի պաշտպանությունը: Պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է հակամարտող շահերի հավասարակշռման անհրաժեշտության մասին:

Մասնավորապես, Գ. Զիլբերտը նշում է. «հանձնման իրավունքում պահպանվող փխրուն հավասարակշռությունը՝ մի կողմից միջազգային մակարդակում քրեական

գործերով փոխօգնության դրույթների, և մյուս կողմից՝ փախուստի դիմած հանցագործների իրավունքների պաշտպանության միջև, նշանակում է, որ ժամանակ առ ժամանակ կարող են ծագել հակասություններ, որի արդյունքում որևիցե կողմի շահերը կտուժեն: Հանձնման իրավունքի երկու ասպեկտների գիտակցումն էական է այդ գործընթացի ամբողջական ըմբռնման և դրա հետագա զարգացման համար: Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում հանձնումը դեռևս շարունակում է մնալ փախուստի դիմած հանցագործներին՝ նրանց նկատմամբ քրեական ընդդատություն ունեցող պետությանը կատարած հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով վերադարձնելու լավագույն միջոցը»:<sup>28</sup>

Պետք է հաշվի առնել, որ մարդու իրավունքների և հանրային շահերի միջև արդյունավետ հավասարակշռության ապահովումը հանձնման գործընթացում ուղղակիորեն կապված է այն ռիսկերի հետ, որոնց կարող է ենթարկվել հանձնման ենթակա անձը հանձնումը պահանջած պետությունում: Ամենևին էլ չնսեմացնելով հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության դերն ու նշանակությունը՝ պետք է նկատի ունենալ, որ այնպիսի հիմնախնդիրների վերլուծությունը, ինչպիսիք են հանձնման ենթարկված անձին մահապատժի դատապարտելը, նրա նկատմամբ խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի կիրառումը և այլն, պակաս կարևոր չեն հանձնման գործընթացում: Ինչպես պետության ներպետական օրենսդրությունը, այնպես էլ միջազգային իրավունքը պաշտպանում են հանձնման վերաբերյալ քրեական արդարադատության իրականացման ընթացքում մարդու իրավունքները: Նույնիսկ առանձնապես վտանգավոր այնպիսի ոտնձգությունները պետության շահերի դեմ, ինչպիսիք են ահաբեկչական գործողությունները, օրակարգից չեն հանում մեղադրյալների և ամբաստանյալների իրավունքների պաշտպանության հարցը: Այս առումով բացառիկ նշանակություն է ստանում մի կողմից ահաբեկչության դեմ պայքարում բավարար միջոցների ապահովումը, իսկ մյուս կողմից՝ հիմնական քաղաքացիական իրավունքների և ազատությունների անհարկի սահմանափակման անթույլատրելիությունը: Մյուս կողմից էլ մարդու իրավունքների և հիմնարար

<sup>28</sup> Gilbert G., Aspects of Extradition Law

ազատությունների պաշտպանությունը չի կարող խոչընդոտել ահաբեկչության դեմ արդյունավետ պայքարի իրականացմանը: Դա է պատճառը, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2002թ. հուլիսի 11-ին ընդունեց մարդու իրավունքները և ահաբեկչության դեմ պայքարի սկզբունքները, որտեղ մեկտեղվում են հասարակության և հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության պահանջները: Հաշվի առնելով, որ ահաբեկչական գործողությունները լրջորեն վտանգում են մարդու իրավունքները, սպառնում են ժողովրդավարությանը, ապակայունացնում են օրինական ճանապարհով ձևավորված իշխանությունը և քայքայում են քաղաքացիական հասարակության հիմքերը, փաստաթղթի 1-ին հոդվածը սահմանում է, որ պետությունները, համաձայն ստանձնած պարտավորությունների, պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ իրենց իրավազորության տակ գտնվող յուրաքանչյուր անձի հիմնարար իրավունքները, հատկապես կյանքի իրավունքն ահաբեկչական գործողություններից պաշտպանելու ուղղությամբ: Ընդգծելով ահաբեկչության դեմ պայքարում միջազգային համագործակցության բնագավառում հանձնման կարևորությունը՝ սկզբունքների 13-րդ մասը, որը վերաբերում է հանձնմանը սահմանում է՝ հանձնումը սահմանափակված է մարդու իրավունքների ոլորտում ստանձնած պարտավորություններով, որոնք ապահովվում են եվրոպական իրավապաշտպան մեխանիզմներով: Մասնավորապես, հանձնումը չի կարող իրականացվել մահապատժի, խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառման սպառնալիքի, ռասայական կրոնական, ազգային կամ քաղաքական հայացքներով պայմանավորված հետապնդումների դեպքում:

Տրամաբանորեն կարելի է ենթադրել, որ մարդու իրավունքների խախտման ոլորտում պետության պատասխանատվության իրավական սխեման սահմանափակվում է նրա տարածքով: Սակայն միջազգային իրավունքը և պրակտիկան այս հարցն ավելի լայն են դիտարկում՝ ներառելով հանձնումը թույլատրած պետության պատասխանատվությունը նրա իրավազորությունից դուրս, այն է՝ հանձնումը թույլատրելու համար: Նման մոտեցումը Մարդու իրավունքների

Եվրոպական դատարանը տարածել է նաև արտաքսման և հանձնման դեպքերի վրա:

Տարբեր հասարակություններում, ինչպես նաև միևնույն հասարակության մեջ ապրող տարբեր անձանց մոտ դաժան վերաբերմունքի վերաբերյալ կարող են գոյություն ունենալ միանգամայն տարբեր պատկերացումներ: Օրինակ, կանանց և երեխաների նկատմամբ վերաբերմունքի որոշ տեսակներ, կրոնական և մշակութային դրվածքով պայմանանվորված, կարող են բնակչության որոշ խմբերի կողմից դիտվել առավել դաժան, քան մյուս խմբի կողմից: Որոշակի անձի վրա վերաբերմունքի այս կամ այն ձևի ներազդեցությունը հաճախ կարող է պայմանավորված լինել նաև տվյալ անձի կուլտուրայի աստիճանով:

Այդուհանդերձ, ինչ վերաբերում է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված դաժան վերաբերմունքին և երաշխիքներին, ապա պետք է նշել, որ ներկայումս նկատվում է չափանիշների և պրակտիկայի միասնականացման ակնհայտ աճի տենդենց, ինչը հանգեցնում է դաժանության նվազագույն թույլատրելիության գնահատման առավել օբյեկտիվությանը:

Այսպիսով, հանձնման ինստիտուտի ժամանակակից աղբյուրները ներառում են ինչպես միջազգային-իրավական նորմատիվ ակտերը, այնպես էլ ազգային իրավական նորմերը: Ընդ որում, որոշ Եվրոպական երկրներում, մասնավորապես Իտալիայում, Ֆրանսիայում, ներպետական իրավունքը միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում բավարար է հանձնում իրականացնելու համար, երբ «ընդհանուր իրավունքի» երկրներում, մասնավորապես Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, հանձնում իրականացնելու համար պարտադիր պայման է միջազգային պայմանագրերի առկայությունը:

Ժամանակակից միջազգային իրավունքում կայացած կարելի է համարել միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի նորմերի փոխազդեցության գործընթացում միջազգային իրավունքի նորմերի պրիմատի հայեցակարգը: Այն խաղաղության պահպանման, պետությունների միջև փոխշահավետ և նորմալ համագործակցության ապահովման, մարդու իրավունքների և ազատությունների հարգման իրավական երաշխիք է հանդիսանում: Ներպետական իրավունքը պետք է համապատասխանի միջազգային իրավունքին, իսկ հակասությունների դեպքում



գերակայությունը տրվում է միջազգային իրավունքին, քանի որ միջազգային իրավունքը պետությունների փոխհամաձայնեցված կամքի կամահայտնության արդյունքն է, կոլեկտիվ խելամտության և համընդհանուր արժեքների արտահայտություն:

## **§2. Հանձնման ինստիտուտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պարտավորությունները**

Հարկ է նշել, որ միջազգային պայմանագրերը պետություններին ընձեռում են իրավական փոխադարձ օգնություն տրամադրելու հնարավորություն միայն և ընդհանուր առմամբ սահմանում են դրանց տրամադրման ձևերը, սակայն իրավական օգնության տրամադրման կարգը, դրա հետ կապված վարույթային գործողությունները միջազգային պայմանագրերը չեն կարգավորում՝ թողնելով դրանց կարգավորումը յուրաքանչյուր երկրի ներպետական օրենսդրությանը:

Հանձնելու պարտականությունը փոխկապակցված է միջազգային-իրավական համագործակցության այնպիսի մի կարևոր սկզբունքի հետ, ինչպիսին է պատժի անխուսափելիության սկզբունքը, որի համաձայն հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք պետք է պատիժ կրի: Հետևաբար, եթե պետությունը հրաժարվում է հանձնել հանցագործին, ապա պարտավոր է նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցել կամ ի կատար ածել օրինական ուժի մեջ մտած դատավճիռը: Այսինքն՝ գործում է «հանձնիր կամ դատիր» կանոնը: Այս կանոնը չի գործում միայն այն դեպքում, երբ անցել են քրեական պատասխանատվության համար սահմանված վաղեմության ժամկետները, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի մահվան դեպքում:

Պետությունը, նույնիսկ միջազգային պայմանագրի առկայության պայմաններում, հանձնումը կարող է մերժել, եթե հարցումը ստացած պետությունը գտնում է, որ նման օգնության ցուցաբերումը կարող է վնաս պատճառել իր ինքնիշխանությանը կամ անվտանգությանը կամ եթե հակասում է պետական շահերին: Նման հնարավորություն ընձեռում է նաև «Հանձնման մասին»

Եվրոպական կոնվենցիայի 26-րդ հոդվածը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է.

1. Քանի որ օրենքներով քաղաքական հանցագործություններ կամ քաղաքական հանցագործությունների հետ կապ ունեցող հանցագործությունների տեսակներ սահմանված չեն, Հայաստանի Հանրապետությունը հանձնում կիրականացնի, եթե հարցման մեջ նշված հանցագործությունն այդպիսին է համարվում իր ընդհանուր քրեական օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության համար գործող միջազգային պայմանագրերով:
2. Քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ զինվորական բոլոր հանցագործությունները ընդհանուր քրեական օրենքներով են հանցագործություն համարվում, ուստի այդ գործերով հանձնման վերաբերյալ հարցումները կբավարարվեն, եթե հանձնումն ուղարկած պետության օրենքով ևս տվյալ արարքը, որի համար հանձնում է պահանջվում, դասվում է ընդհանուր քրեական հանցագործությունների շարքին:

Հայաստանի Հանրապետությունը կողմ է քրեական գործերով իրավական օգնության ոլորտում գործող մի շարք բազմակողմ և երկկողմ միջազգային պայմանագրերի, որոնցով կարգավորվում են քրեական գործերով իրավական փոխօգնության, հանցագործություն կատարած անձանց հանձնման, դատապարտյալների փոխանցման, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման, ինչպես նաև այլ հարցեր:

Հայաստանի Հանրապետությունը միացել է այնպիսի կարևորագույն ունիվերսալ միջազգային պայմանագրերի, որոնցից են «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի միջազգային կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունները, «Կոռուպցիայի դեմ» 2003 թվականի հոկտեմբերի 31-ի միջազգային կոնվենցիան, «Ահաբեկչական ռմբահարումների դեմ պայքարի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 16-ի միջազգային կոնվենցիան, «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 1999 թվականի դեկտեմբերի 9-ի միջազգային կոնվենցիան, որոնցից յուրաքանչյուրը նախատեսում է հոդվածներ, որոնք առնչվում են տվյալ կոնվենցիայի շրջանակներում իրավական օգնության տրամադրմանը:

Հայաստանի Հանրապետությունը մի շարք տարածաշրջանային բազմակողմ պայմանագրերով նույնպես ստանձնել է քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու պարտավորություններ: Դրանցից են՝ «Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության և հատկապես դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» 1998 թվականի հոկտեմբերի 12-ի համաձայնագիրը, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման պայքարի մասին» 2005 թվականի մայիսի 16-ի եվրոպական կոնվենցիան, «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիան, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի եվրոպական կոնվենցիան, Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև քրեական գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավական օգնության և փոխգործակցության մասին համաձայնագիրը:

Հանցանք կատարած անձանց հանձնելու իրավական հիմքը կազմող ունիվերսալ և տարածաշրջանային բնույթի միջազգային պայմանագրերի թվին են դասվում, մասնավորապես, Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 2002թ. կոնվենցիան, Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև իրավական օգնության մասին 1996թ. պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական համագործակցության մասին 2009թ. համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության մասին 2002թ. համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև հանձնման մասին 2010թ. համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության և Լիտվիայի Հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 2005թ. համաձայնագիրը, Հայաստանի

Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև հանձնման մասին 2005թ. պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի միջև հանձնման մասին 1995թ. պայմանագիրը, Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև հանձնման մասին 2000թ. պայմանագիրը, Դատապարտյալների փոխանցման մասին 1983թ. կոնվենցիան, Պատժի կատարման համար ազատազրկման դատապարտվածներին փոխանցման մասին 1998թ. կոնվենցիան և այլն:

Միջազգային քրեական իրավունքում համընդհանուր ճանաչում է ստացել այն դրույթը, որի համաձայն՝ հանցանք կատարած անձանց հանձնելու հարցը առավելապես պետք է կարգավորվի այն պետության ազգային օրենսդրությամբ, որը ստացել է հանձնման պահանջ: Սակայն հանցանք կատարած անձին հանձնելու պահանջով այլ պետությանը դիմելու համար անհրաժեշտ է ղեկավարվել միջազգային պայմանագրով: Ներկայումս միջազգային պրակտիկայում ձևավորվել է հանցանք կատարած անձանց հանձնելու երկու համակարգ՝ եվրոպական-մայրցամաքային և անգլո-ամերիկյան:

Անգլո-ամերիկյան համակարգի երկրներում /Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Հնդկաստան/ հանցանք կատարած անձանց հանձնումը հիմնվում է միջազգային պայմանագրի վրա: Այս համակարգը բնութագրվում է նաև նրանով, որ գործը պետք է պարտադիր քննարկվի դատարանի կողմից: Ընդ որում, հանձնումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ պահանջ ներկայացնող կողմը բավարար հիմքեր և անհերքելի ապացույցներ կներկայացնի առ այն, որ անձի քրեական հետապնդումը հիմնավոր է:

Եվրոպական-մայրցամաքային համակարգի երկրներում հանցանք կատարած անձի հանձնման համար հիմք է հանդիսանում Հանձնման մասին 1957թ. եվրոպական կոնվենցիան: ՀՀ-ի համար այդ Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2002թ. ապրիլի 25-ից:

Կոնվենցիայի 28-րդ հոդվածը սահմանում է, որ այն երկրներում, որոնց նկատմամբ Կոնվենցիան կիրառելի է, այն փոխարինում է ցանկացած երկկողմ պայմանագրի կամ համաձայնագրի դրույթների, որոնցով երկու Պայմանավորվող կողմերի միջև կարգավորում է հանձնումը: Պայմանավորվող կողմերը կարող են

միմյանց միջև կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր միայն ի լրումն Կոնվենցիայի դրույթների: Պայմանավորվող կողմերը, որոնք բացառում են կամ ապագայում կարող են բացառել Կոնվենցիայի իրագործումը միմյանց միջև, պետք է պատշաճ կերպով այդ մասին ծանուցեն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Կոնվենցիայով հստակ կարգավորված են հանձնման համար հիմք հանդիսացող հանցագործությունները: Այսպես, ըստ 2-րդ հոդվածի, հանձնումը պետք է կատարվի այնպիսի հանցագործությունների դեպքում, որոնք հայցող և հայցվող կողմերի օրենքներով պատժվում են ազատազրկմամբ կամ կալանքով՝ նվազագույնը մեկ տարի կամ ավելի ժամկետով կամ ավելի խիստ պատժով:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է քաղաքական հանցագործությունների դեպքում հանձնման արգելքը: Այսպես, հանձնում չի իրականացվում, եթե հանցագործությունը, որի համար այն հայցվում է, հայցվող կողմը ճանաչում է որպես քաղաքական հանցագործություն կամ քաղաքական հանցագործության հետ կապ ունեցող: Նույն կարգը պետք է կիրառվի, եթե հայցվող կողմը բավարար հիմքեր ունի համարելու, որ սովորական քրեական հանցագործության համար հանձնման վերաբերյալ հարցումը ներկայացված է անձի ռասայի, կրոնի, ազգության կամ քաղաքական կարծիքի հետապնդման և պատժման նպատակով, կամ որ այդ անձի դիրքին կարող է վնաս հասցվել այս հանգամանքներից որևէ մեկի պատճառով: Ընդ որում, պետության ղեկավարի կամ նրա ընտանիքի անդամի նկատմամբ մահափորձը կամ սպանությունը, համաձայն Կոնվենցիայի, չպետք է համարվի քաղաքական հանցագործություն:

Կոնվենցիան նախատեսում է նաև հովանավորչության սկզբունքը, որի համաձայն՝ պետությունն իրավունք ունի չհանձնել սեփական քաղաքացիներին: Եթե հայցվող կողմը չի հանձնում իր քաղաքացուն, նա պետք է հայցող կողմի պահանջով գործը ներկայացնի իրավասու մարմիններին՝ անհրաժեշտության դեպքում քրեական գործ հարուցելու համար:

Հանձնումը մերժելու մեկ այլ հիմք նախատեսված է Կոնվենցիայի 7-րդ հոդվածով: Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվող կողմը կարող է մերժել հայցվող անի հանձնումը այն հանցագործության համար, որն իր օրենքին

համապատասխան, համարվում է ամբողջովին կամ մասամբ կատարված իր տարածքում կամ այն վայրում, որը դիտարկվում է որպես իր տարածք:

Երբ հանցագործությունը, որի համար հանձնման հարցում է ներկայացվել, կատարվել է հայցող կողմի տարածքից դուրս, այն կարող է մերժվել միայն այն դեպքում, եթե հայցվող կողմի օրենքով չի նախատեսվում նույն կատեգորիայի հանցագործության համար հետապնդում, երբ այն կատարվել է վերջինիս տարածքից դուրս, կամ երբ այդ հանցագործության համար հանձնում նախատեսված չէ:

Հանձնումը մերժելու հաջորդ հիմքը Non bis in idem սկզբունքն է: Հանձնում չի իրականացվի, եթե այն հանցագործության կամ հանցագործությունների համար, որոնց համար հանձնում է պահանջվում, հայցվող անձի նկատմամբ վերջնական դատապարտման որոշում է կայացվել հայցվող կողմի իրավասու մարմինների կողմից: Հանձնումը կարող է մերժվել, եթե հայցվող կողմի իրավասու մարմինները որոշել են կամ գործ չհարուցել կամ այն կարճել նույն հանցագործության կամ հանցագործությունների առնչությամբ:

Ըստ 10-րդ հոդվածի՝ հանձնում չի իրականացվում այն դեպքերում, երբ հայցվող կամ հայցող անձը հայցվող կողմի օրենքի համաձայն ազատ է արձակվել դատական կարգով հետապնդման կամ պատժաժամկետը լրանալու պատճառով:

Եթե հանձնման ենթակա հանցագործության համար հայցող կողմի օրենքով նախատեսվում է մահապատիժ, և եթե այդ հանցագործության համար հայցվող կողմի օրենքով մահապատիժ նախատեսված չէ կամ չի իրականացվում, ապա հանձնման վերաբերյալ հայցը կարող է մերժվել, մինչև հայցող կողմը չտա այնպիսի երաշխիքներ, որոնք հայցվող կողմը կհամարի բավարար, որ մահապատիժ չի կիրառվի:

Կոնվենցիայի 17-րդ հոդվածը կարգավորում է այն դեպքերը, երն հանձնման պահանջը ներկայացնում են երկու կամ ավելի պետություններ: Ըստ հոդվածի՝ եթե զուգահեռաբար հանձնում է պահանջվում մեկից ավելի պետությունների կողմից նույն կամ տարբեր հանցագործությունների համար, հայցվող կողմը կընդունի իր որոշումը՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները, հատկապես՝ հանցագործության

ծանրությունը և կատարման վայրը, համապատասխան հարցումների ամսաթվերը և այլն:

Ինչպես հայտնի է, հանցանք կատարած անձանց հանձնելը կարող է կատարվել ինչպես քրեական հետապնդման իրականացման, այնպես էլ պատժի կատարման համար: Պատժի կատարման համար դատապարտյալների փոխանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Եվրոպայի խորհրդի՝ Դատապարտյալների փոխանցման մասին 1983թ. կոնվենցիայով: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը պարտավորվում են Կոնվենցիայի դրույթներին համապատասխան դատապարտյալներին փոխանցելու նպատակով սերտորեն համագործակցել: Մի կողմի տարածքում դատապարտված անձը, Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, փոխանցումը իրականացնելու մասին իր ցանկությունը կարող է հայտնել Դատապարտող կամ Կատարող պետությանը:

ԱՊՀ երկրների միջև դատապարտյալների փոխանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պատժի հետագա կրման համար ազատազրկման դատապարտվածներին փոխանցելու մասին 1998թ. կոնվենցիայով:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է, որ պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները, ինչպես նաև նրա տարածքում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք ազատազրկման են դատապարտվել մյուս Պայմանավորվող կողմում, Կոնվենցիայի դրույթներին համապատասխան պատիժը կրելու համար կարող են փոխանցվել այն Պայմանավորվող կողմին, որի քաղաքացիներն են նրանք հանդիսանում կամ որի տարածքում մշտապես բնակվում են (եթե քաղաքացիություն չունեցող անձ են հանդիսանում): Ըստ Կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ դատապարտյալի փոխանցման մասին խնդրանքով կարող է դիմել ինչպես վճռի կայացման, այնպես էլ վճռի կատարման պետությունը: Դատապարտյալի փոխանցման մասին միջնորդությամբ Պայմանավորվող կողմերի իրավասու մարմնին իրավունք ունի դիմելու դատապարտյալը, նրա մերժավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը և փաստաբանը:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված են ազատազրկման դատապարտված անձի փոխանցման պայմանները.

- Անձի ազատագրկման դատապարտելու վերաբերյալ դատարանի վճիռը օրինական ուժի մեջ է մտել,
- առկա է դատապարտյալի, նրա մերձավոր ազգականների, օրինական ներկայացուցչի, փաստաբանի՝ փոխանցման մասին միջնորդությունը,
- առկա է դատապարտյալի գրավոր համաձայնությունը կամ այն դեպքում, եթե դատապարտյալը տարիքի, ֆիզիկական կամ հոգեկան վիճակի պատճառներով չի կարող ազատ արտահայտել իր կամքը՝ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը,
- անձը դատապարտվել է այնպիսի արարքների համար, որոնք ընդունում-հանձնում իրականացնող Պայմանավորվող կողմերի օրենքներով հանդիսանում են ազատագրկման ձևով պատժի հանգեցնող հանցագործություններ,
- փոխանցման մասին խնդրանքի ստացման պահին ազատագրկում կրելու մնացած ժամկետը առնվազն վեց ամիս է,
- առկա է վճռի կայացման պետության և վճռի կատարման պետության համաձայնությունը դատապարտյալի փոխանցման և ընդունման մասին:

Հանձնման մասին ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիմնական դրույթներն ամրագրվել են ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածում, որում սահմանված է ոչ միայն հովանավորչության սկզբունքը, այլ նաև օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց չհանձնելու սկզբունքները, ինչպես նաև չհանձնելու դեպքում անձին ՀՀ օրենսդրությանը համապատասխան դատապարտելու մասին դրույթը:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Եվրոպայի խորհրդի հիշյալ բնագավառը կարգավորող այնպիսի կարևոր միջազգային-իրավական փաստաթղթերը, ինչպիսիք են.

- «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիան, որը ստորագրվել է 11.05.2001թ., վավերացվել է 25.01.2002թ. և ուժի մեջ է մտել 25.04.2002թ.,
- «Քրեական գործերով փոխօգնության մասին» եվրոպական կոնվենցիան, որը ստորագրվել է 11.05.2001թ., վավերացվել է 25.01.2002թ. և ուժի մեջ է մտել 25.04.2002թ.



- «Քրեական գործերի փոխանցման մասին» եվրոպական կոնվենցիան ստորագրվել է 08.11.2001թ., վավերացվել է 17.12.2004թ. և ուժի մեջ է մտել 18.03.2005թ.,
- «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որը ստորագրվել է 08.11.2001թ., վավերացվել է 18.12.2003թ. և ուժի մեջ է մտել 17.03.2004թ.,
- «Ահաբեկչության կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիան, որը ստորագրվել է 08.11.2001թ., վավերացվել է 23.03.2004թ. և ուժի մեջ է մտել 24.06.2004թ.,
- «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ լրացուցիչ արձանագրությունը, որը ստորագրվել է 08.11.2001թ., վավերացվել է 18.12.2003թ. և ուժի մեջ է մտել 17.03.2004թ.,
- «Քրեական գործերով փոխօգնության մասին» եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որը ստորագրվել է 08.11.2001թ., վավերացվել է 23.03.2004թ. և ուժի մեջ է մտել 21.06.2002թ.
- «Դատապարտված անձանց փոխանցման մասին» կոնվենցիան, որը ստորագրվել է 11.05.2001թ. և ուժի մեջ է մտել 01.09.2001թ.,
- «Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների վլացման, հայտնաբերման, առգրավման և բռնագրավման մասին» կոնվենցիան, որը ստորագրվել է 11.05.2001թ., վավերացվել է 24.11.2003թ. և ուժի մեջ է մտել 01.03.2004թ.:

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև իրավական համագործակցության և հանձնման իրականացման հետ կապված հարցերը կարգավորվում են «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի շրջանակներում: 2002թ. հոկտեմբերի 7-ին Քիշնևում կնքվել է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիան, որը գործում է 2004 թվականի ապրիլի 27-ից: Հայաստանի Հանրապետությունն այն վավերացրել է 2005թ. հունվարի 21-ին, ուժի մեջ է մտել

փետրվարի 19-ին, սակայն հաշվի առնելով, որ դեռևս ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում այն վավերացրել է միայն Ադրբեջանը, Բելառուսը, Ղազախստանը, Տաջիկստանը և Ղրղզստանը, իսկ Ռուսաստանի Դաշնությունը տեղեկացրել է, որ Կոնվենցիայի վավերացման ներպետական արարողակարգերը ընթանում են, դեռևս դրան հղում չի կատարվում:

Հանձնման գործընթացի բնագավառում որպես նորամուծություն պետք է համարել Եվրոպական միության անդամ երկրների շրջանակներում 1995թ. ստորագրված «Եվրոպական միության անդամ-պետությունների միջև հանձնման պարզեցված արարողակարգի մասին» կոնվենցիան, որը նախատեսում է հանձնման ենթակա անձի համաձայնության դեպքում ավելի դյուրին արարողակարգի իրականացումը: Այս կապակցությամբ նաև պետք է հանձնման իրավասություն ունեցող մարմինների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվել է կալանքի մասին եվրոպական միասնական որոշման մասին շրջանակային որոշում, համաձայն որի՝ Եվրոպական միության անդամ երկրներին ուղարկվում է միայն առաջին ատյանի դատարանի կողմից ընդունված կալանքի մասին եվրոպական օրդերը:

Մարդու իրավունքների միջազգային չափորոշիչները պարտավորեցնում են Հայաստանի Հանրապետությանն ապահովել հանձնված անձի համընդհանուր և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված հետևյալ իրավունքները, մասնավորապես.

- Կյանքի իրավունքը,
- Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը,
- Անձնական ազատության իրավունքը,
- Օրենքի առաջ ընդհանուր հավասարությունը,
- Խտրականության արգելքը, անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից,

գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից

- Դատական պաշտպանության աիրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը,
- Արդար դատաքննության իրավունքը,
- Իրավաբանական օգնություն ստանալու աիրավունքը,
- Իր, իր ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը,
- Անմեղության կանխավարկածի իրավունքը
- Այլ իրավունքներ:

Այլ պետության հանձնման միջնորդությունը բավարարելիս, Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները պետք է նկատի ունենան հարցումն ուղարկած պետությունում հանձնման ենթարկված անձի իրավունքների ոտնահարման հնարավորությունը՝ բացառելով այն:

### **ԳԼՈՒԽ 3. Անձի արտաքսումը և մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները**

#### **§1. Անձի արտաքսման հետ կապված պետությունների ազգային օրենսդրության առանձնահատկությունները և հիմնական բնութագրիչները**

Միգրացիոն գործընթացների կառավարման կարևոր կողմերից է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց երկրից ելքը (արտաքսումը, վտարումը) կազմակերպելն ու կանոնակարգելը:

Արտաքսումը անձի կամ անձանց խմբի՝ հարկադրաբար իր ծագման երկիր հետ ուղարկելու գործընթացն է տվյալ պետությունում նրա գտնվելու կամ բնակվելու օրինական հիմքերի բացակայության դեպքում:

Արտաքսում տերմինն առաջին անգամ օգտագործվել է Ֆրանսիայի քրեական օրենսդրության մեջ 17-18-րդ դարերում՝ որպես արքայի հատուկ տեսակ: Առաջին անգամ քաղաքական հեղափոխության մեջ կասկածվող անձանց արտաքսումը Գվինեա սահմանվեց օրենքով 1791 թվականին: Արտաքսումը, այդ թվում նաև ցմահ արտաքսումը, Ֆրանսիայի 1810 թվականի քրեական օրենսգրքում վերանայվեց: Արտաքսումը սկսվեց կիրառվել ոչ միայն որպես հանցագործների, այլ նաև հեղափոխականների համար՝ որպես պատժի տեսակ, ինչպես օրինակ 1872 թվականին, երբ կոմունարները գրաված հեղափոխականներին արտաքսեցին Նոր Կալեդոնյան արշիպելագ:

Ֆրանսիայում արտաքսում տերմինը պատմական իմաստով չի կիրառվում սկսած 1880 թվականից:<sup>29</sup>

2010-ական թվականներին սովետական հարկադիր միգրացիայի դեպքում «արտաքսում» տերմինի օգտագործումը բազմաթիվ գիտնականների կողմից քննադատության արժանացավ: Պատմական գիտությունների դոկտոր Նիկոլայ Բուգայը քննադատեց պատմաբան Լ. Դյաչենկոյին «հարկադրված արտաքսում», «ազգային հիմքով արտաքսում» տերմիններն օգտագործելու համար:<sup>30</sup>

<sup>29</sup> [Большая советская энциклопедия](#) : [в 30 т.] / гл. ред. [А. М. Прохоров](#). — 3-е изд. — М. : Советская энциклопедия, 1969—1978.

<sup>30</sup> [Бугай Н. Ф.](#) Защита состоялась, проблемы остаются... // Приволжский научный вестник. — 2014. — № 7

Նույն ինքը՝ Բուգայը, 2014 թվականի իր ակնարկներից մեկում միգրացիոն հարաբերությունների հետ կապված օգտագործում է «հարկադրված վերաբնակեցում» տերմինը:<sup>31</sup>

Բուգայը միակը չէ, ով քննադատում է սովետական ժամանակաշրջանի հարկադիր վերաբնակեցումը արտաքսում անվանողներին: 2017 թվականի սեպտեմբերի 15-ից 17-ը Վլադիվաստոկ քաղաքում անցկացված «1937 թվական. ռուսախոս կորեացիներ- անցյալ, ներկա և ապագա» միջազգային սիմպոզիումի մասնակիցներն ընդունեցին հատուկ բանաձև, որում նշեցին, որ «արտաքսում» տերմինը ԽՍՀՄ ժողովուրդների միգրացիայի դեպքում կիրառելի չէ:<sup>32</sup>

ԽՍՀՄ-ում արտաքսումը ռեպրեսիայի ձևերից մեկն էր, որը հանդիսանում էր որպես խորհրդային ժողովրդագրական եւ ազգային քաղաքականության գործիք: Արտաքսվում էին ինչպես անհատներ, այնպես էլ ազգեր, ովքեր ճանաչված պետական իշխանության կողմից ճանաչվում էին հասարակության համար վտանգավոր:

Արտաքսման պատճառներից և պետության տնտեսական կարիքներից կախված՝ արտաքսման վայրերը տարբեր էին: Արտաքսված անձինք զրկվում էին շատ իրավունքներից: Շատ ավելի դաժան էր արտաքսումը պատերազմի ժամանակ: 1942-1945 թվականներին արտաքսվում էին գերմանացիներ, ֆիններ, Ղրիմի թաթարներ, չեչեններ և այլ ազգեր:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցավ Արևմտյան Եվրոպայից գերմանացիների արտաքսում Գերմանիա և Ավստրիա: Հարկադրված արտաքսման ենթարկվեցին մոտ 12 միլիոն գերմանացիներ:<sup>33</sup>

Արևմտյան Եվրոպայից գերմանացիների արտաքսումն ուղեկցվեց մեծ մասշտաբի հասնող բռնություններով, ինչպես նաև համակենտրոնացման ճամբարներում գտնվող քաղաքացիական բնակչության ամբողջ գույքի բռնագրավումով, չնայած այն հանգամանքին, որ 1945 թվականին Նյուրնբերգի

<sup>31</sup> *Бугай Н. Ф.* Защита состоялась, проблемы остаются... // Приволжский научный вестник. — 2014. — № 7

<sup>32</sup> <https://koryo-saram.ru/rezolyutsiya-mezhdunarodnogo-simpoziuma/>

<sup>33</sup> Overy, Richard, *The Penguin Historical Atlas of the Third Reich*, 1996

միջազգային զինվորական տրիբունալը արտաքսումը ճանաչեց որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն:<sup>34</sup>

Պետությունների օրենսդրությունները՝ կապված անձի արտաքսման հետ, տարբերվում են: Ներկայացվում է մի քանի պետությունների կողմից արտաքսման գործընթացի կազմակերպման և կանոնակարգման հիմնական բնութագրիչները:

**ՎՐԱՍՏԱՆ-** Օտարերկրացին պարտավոր է լքել Վրաստանի տարածքը նախքան երկրում օրինական գտնվելու ժամկետի լրանալը: Այդ ժամկետը սպառվելուց հետո Վրաստանի տարածքում անօրինական գտնվելու համար օտարերկրացին, մինչև մեկնելը կամ մեկնելուց հետո, պետք է օրենքով սահմանված տուգանք վճարի:

Տուգանքը չվճարած օտարերկրացիներին վիզա չի տրամադրվի և կարգելվի նրանց մուտք Վրաստան՝ մինչև տուգանքի վճարումը: Որոշ դեպքերում (օրինակ քաղաքացիության կամ կացության ժամկետն ավարտվել է) տուգանքներ չեն սահմանվում, եթե օտարերկրացին լքում է Վրաստանի տարածքը համապատասխան որոշում ընդունելուց հետո 30 օրվա ընթացքում: Որոշ դեպքերում (եթե դիմել է քաղաքացիություն կամ կացության թույլտվություն ստանալու խնդրանքով, հիվանդության դեպքերում և այլն) Վրաստանի տարածքը լքելու պարտավորությունը կատարելու ժամկետը կարող է հետաձգվել՝ մեկ անգամ, առավելագույնը 3 ամսով: Այդ նպատակով, օտարերկրացին, երկրում օրինական գտնվելու ժամկետը լրանալուց 7 աշխատանքային օր առաջ, պետք է դիմի համապատասխան խնդրանքով: Համապատասխան մարմինը որոշում է ընդունում դիմումը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում: Օտարերկրացին կարող է արտաքսվել Վրաստանից, եթե՝

- 1) Վրաստանի տարածք մուտք է գործել անօրինական կերպով
- 2) չկան Վրաստանի տարածքում նրա հետագա գտնվելու իրավական հիմքերը
- 3) Վրաստանի տարածքում նրա գտնվելը սպառնում է պետական անվտանգությանը և/կամ հասարակական կարգի պահպանմանը.
- 4) նրա արտաքսումը անհրաժեշտ է Վրաստանի քաղաքացիների առողջությունը, իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու տեսանկյունից
- 5) բազմիցս խախտել է Վրաստանի օրենսդրությունը

<sup>34</sup> Сергей Сумленный [Изгнаны и убиты](#) (рус.) // «Эксперт». — 2008. — № 30

- 6) մուտքի թույլտվություն ստացել է կեղծ կամ անվավեր փաստաթղթերի հիման վրա
- 7) կանխամտածված հանցագործության համար դատապարտվել է 1 տարուց ավելի ժամկետով ազատազրկման՝ պատիժը կրելուց հետո
- 8) դատապարտվել է ազատությունից զրկելու հետ չկապված պատժի՝ այն կրելուց առաջ կամ դատապարտվել է պայմանական ազատազրկման՝ մինչև պրոբացիայի ժամկետը լրանալը:

Ընդ որում, 1 և 2 կետերը չեն կիրառվում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի ճանաչման համար հայցի քննման ընթացքում գտնվող անձանց դեպքում, իսկ քաղաքացիություն չունեցող անձինք կարող են արտաքսվել միայն 3-րդ կետով նախատեսված դեպքերում: 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով օտարերկրացու արտաքսման մասին որոշումը ընդունում է Վրաստանի ներքին գործերի նախարարության համապատասխան մարմինը, իսկ մնացած դեպքերում՝ Դատարանը: Դատական գործի հարուցումը կատարվում է ներքին գործերի նախարարության համապատասխան մարմնի դիմումի հիման վրա: Ներքին գործերի նախարարության համապատասխան մարմինը արտաքսելու/արտաքսումը մերժելու /արտաքսումը հետաձգելու մասին որոշում ընդունում է հիմքերը հայտնի դառնալուց 10 աշխատանքային օրվա ընթացքում, հիմնավորված որոշումը տրամադրվում է օտարերկրացուն: Արտաքսման վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, օտարերկրացուն տրվում է 10-30 օրացուցային օր ժամանակ երկիրը կամավոր լքելու համար, մեկնման ծախսերը չեն կատարվում պետական բյուջեի միջոցների հաշվին: Օտարերկրացին պետք է վճարի վարչական տուգանք:

Որոշ դեպքերում արտաքսումը կարող է հետաձգվել մինչև 30 օրով, որը կարող է մեկ անգամ երկարացվել ևս 30 օրով: Վրաստանի տարածքից արտաքսվելու մասին որոշումները օտարերկրացու կողմից կարող են բողոքարկվել օրենքով սահմանված կարգով՝ որոշումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Եթե արտաքսման որոշմամբ սահմանված ժամկետներում օտարերկրացին չի լքում Վրաստանի տարածքը, կիրառվում է արտաքսման հարկադիր իրականացում: Հարկադիր արտաքսումը իրականացվում է 1-ին և 2-րդ դեպքերում երկրի տարածքը կամավոր լքելու համար սահմանված ժամկետի ավարտից 10 օրվա ընթացքում,

մնացած դեպքերում՝ անմիջապես: Հարկադիր արտաքսումը իրականացվում է ներքին գործերի նախարարության համապատասխան մարմինը: Արտաքսման մասին որոշումը 24 ժամվա ընթացքում տրամադրվում է արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Վրաստանի տարածքից արտաքսված օտարերկրացին չի կարող մուտք գործել Վրաստան 2-5 տարվա ընթացքում (ժամկետը սահմանվում է արտաքսման մասին որոշման մեջ): Վրաստան մուտք գործելու արգելքը չի տարածվում երկրի տարածքը կամավոր լքած օտարերկրացիների վրա:

Օտարերկրացիները արտաքսման նպատակով կարող են ձերբակալվել և տեղավորվել հատուկ կամ ժամանակավոր կացարաններում, եթե՝

- 1) հնարավոր չէ պարզել ինքնությունը,
- 2) կարող է թաքնվել,
- 3) չի կատարել դատարանի կողմից որոշված այլընտրանքային պատժի հետ կապված իր պարտավորությունները,
- 4) վտանգ է ներկայացնում Վրաստանի պետական անվտանգությանը և/կամ հասարակական կարգի պահպանմանը,
- 5) վտանգ է ներկայացնում սեփական առողջությանը կամ կյանքին,
- 6) արտաքսման մասին որոշման կատարումը ապահովելու նպատակով,
- 7) դատարանում օտարերկրացու ներկայությունը ապահովելու նպատակով:

Ձերբակալումից 48 ժամվա ընթացքում օտարերկրացին կանգնում է դատարանի առջև, որը պետք է որոշում ընդունի օտարերկրացուն ժամանակավոր կացարան տեղափոխելու մասին: Եթե դատարանը 24 ժամվա ընթացքում նման որոշում չի ընդունում, օտարերկրացին ազատ է արձակվում: Ժամանակավոր կացարանում օտարերկրացին կարող է մնալ առավելագույնը 3 ամիս: Այդ ժամկետի ավարտից հետո օտարերկրացին պետք է լքի ժամանակավոր կացարանը: Ձերբակալման մասին որոշումը կարող է բողոքարկվել: Դատարանը կարող է որոշել կիրառել ժամանակավոր կացարանում տեղավորելու այլընտրանքային տարբերակներ՝ շաբաթական ոչ ավելի քան 2 անգամ ներկայանալ ոստիկանության տարածքային բաժին, Վրաստանի քաղաքացու երաշխավորություն, բանկային երաշխիք՝ առնվազն 1000 լարի, հաստատված կանոնավոր եկամուտ, գրավ՝



აռավելագույნը 2000 ჯარი: ძამანაკაპორ კაგარანომ თედაპორტილი აქრნთრანჰაჟინ თარბერაკნების აქამანნებრე ნოიზომ ზ ზათარანრ, ძამლეთრ ჯი კაროღ გერაკანგელ 3 ამიარ:<sup>35</sup>

**ԹՈՒՐՔԻԱ-** Օտարերկրացին կարող է արտաքսվել Թուրքիայից՝ ներքին գործերի նախարարության միգրացիայի հարցերով գլխավոր վարչության կողմից ընդունված արտաքսման որոշման հիման վրա: Օտարերկրացին տեղեկացվում է արտաքսման որոշման, այդ թվում դրա ընդունման պատճառների, հետևանքների, ընթացակարգի և բողոքարկման ժամկետների մասին: Օտարերկրացին արտաքսման մասին որոշումը կարող է բողոքարկել վարչական դատարան՝ որոշումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում:

Օտարերկրացին արտաքսման որոշումը իր կողմից բողոքարկելու մասին պետք է տեղեկացնի արտաքսման մասին որոշում ընդունած լիազոր մարմին: Բողոքարկման վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում 15 օրվա ընթացքում: Դատարանի որոշումը վերջնական է: Արտաքսման մասին որոշման բողոքարկման ժամանակահատվածում օտարերկրացու արտաքսումը կասեցվում է: Արտաքսման մասին որոշմամբ օտարերկրացուն ժամանակ է տրամադրվում երկիրը լքելու համար՝ 15-ից 30-օր (որոշ դեպքերում՝ նշված ժամկետները չեն կիրառվում): Օտարերկրացին ենթակա է արտաքսման, եթե՝

- 1) ենթակա են արտաքսման՝ քրեական օրենսգրքի համաձայն (Դատավճռի իրականացումից հետո, դատարանը կարող է որոշում ընդունել արտաքսման վերաբերյալ, եթե օտարերկրացին կատարած հանցագործության համար դատապարտվել է 2 տարի և ավելի ազատազրկման),
- 2) հանդիսանում են ահաբեկչական խմբավորման պարագլուխ, անդամ կամ հետևորդ,
- 3) մուտքի, վիզայի կամ կացության թույլտվություն ստանալու համար ներկայացրել են սխալ տեղեկություններ և կեղծ փաստաթղթեր,
- 4) Թուրքիայում գտնվելու ժամանակ անօրինական միջոցներ են ծախսել,
- 5) վտանգ են ներկայացնում հասարակական կարգի, պետական անվտանգության կամ հանրային առողջության համար,

<sup>35</sup> <https://matsne.gov.ge/en/document/view/2278806>

- 6) վիզայի ժամկետը լրանալուց հետո կամ առանց վիզայի երկրի տարածքում գտնվելու ժամկետի ավարտից 10 օր և ավելի գտնվում են Թուրքիայի տարածքում, կամ վիզան չեղյալ է ճանաչվել,
- 7) կացության թույլտվությունը չեղյալ է ճանաչվել,
- 8) կացության թույլտվության ժամկետի ավարտից 10 օր և ավելի գտնվում են Թուրքիայի տարածքում՝ առանց հիմնավոր պատճառի,
- 9) աշխատում են առանց թույլտվության,
- 10) խախտել են օրինական մուտքի կամ ելքի կանոնները և պայմանները,
- 11) մուտք են գործել Թուրքիա՝ չնայած մուտքի արգելքի,
- 12) փախստականի կարգավիճակ չի տրամադրվել,
- 13) չեն լքել երկրի տարածքը կեցության թույլտվությունը երկարացնելու վերաբերյալ դիմումը մերժելուց 10 օրվա ընթացքում:

Օտարերկրացիները, որոնց նկատմամբ արտաքսման վերաբերյալ որոշում է ընդունվել, ենթակա են վարչական կալանքի հետևյալ դեպքերում՝ եթե կարող են թաքնվել, խախտել են մուտքի և ելքի կանոնները, օգտագործում են կեղծ փաստաթղթեր, առանց հարգելի պատճառի չեն լքել Թուրքիան՝ երկիրը լքելու համար իրենց տրված ժամանակաշրջանում, վտանգ են ներկայացնում հասարակական կարգի, պետական անվտանգության կամ հանրային առողջության համար: Ժամանակավոր կացարանում վարչական կալանքի առավելագույն ժամկետը վեց ամիս է: Նշված ժամկետը կարող է երկարացվել ևս 6 ամսով, եթե տվյալ անձի արտաքսումը չի հաջողվել իրականացնել՝ օտարերկրացու կողմից չհամագործակցելու, իր ծագման երկրի մասին ճիշտ տեղեկություններ չտրամադրելու պատճառով: Օտարերկրացին պետք է ծանուցվի վարչական կալանքի մասին որոշման, կալանքի ժամկետի երկարաձգման, ամենամսյա ստուգումների և դրանց հիմքերի մասին, ինչպես նաև վարչական կալանքի մասին որոշման հետևանքների, գործընթացի և բողոքարկման ժամկետների մասին: Վարչական կալանքի ենթարկված անձը ձերբակալման որոշումը կարող է բողոքարկել Քրեական դատարանում: Նման բողոքի դեպքում վարչական կալանքը չի կասեցվում: Որոշումը դատավորի կողմից ընդունվում է հինգ օրվա ընթացքում և վերջնական է: Հատուկ կացարաններում գտնվող անձինք ուղեկցվում են դեպի

սահմանային անցակետեր իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից: Արտաքսման ենթակա անձինք պետք է ֆինանսավորեն իրենց ճանապարհորդության ծախսերը: Եթե հնարավորություն չունեն դա անելու, ծախսերն ամբողջությամբ կամ մասամբ իրականացնում է միգրացիային գլխավոր վարչությունը: Մինչև ծախսերի փոխհատուցումը նշված անձանց մուտքը Թուրքիա արգելվում է: Մինչև արտաքսումը անձնագրերը կարող են պահվել: Երաշխավորները պատրավոր են կրել արտաքսման ծախսերը:<sup>36</sup>

**ԼԻՏՎԱ-** Օտարերկրացին պարտավոր է լքել Լիտվայի Հանրապետության տարածքը, եթե՝

- 1) մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվել.
- 2) գրկվել է ժամանակավոր կամ մշտական կացության թույլտվությունից.
- 3) գտնվում է Լիտվայի Հանրապետության տարածքում մուտքի վիզայի վավերականության ժամկետի ավարտից հետո.
- 4) գտնվում է Լիտվայի Հանրապետության տարածքում ժամանակավոր կացության թույլտվության վավերականության ժամկետի ավարտից հետո.
- 5) մուտք է գործել Լիտվայի Հանրապետության տարածք օրինական հիմունքներով, սակայն գտնվում է առանց ժամանակավոր կամ մշտական կացության թույլտվության (եթե պարտավոր է ունենալ այդպիսիք).
- 6) առանց մուտքի վիզայի ռեժիմի դեպքում՝ գտնվում է Լիտվայի Հանրապետության տարածքում առանց մուտքի վիզայի երկրի տարածքում գտնվելու համար նախատեսված առավելագույն ժամկետը գերազանցող ժամանակահատվածում.
- 7) մուտք է գործել Լիտվայի Հանրապետություն Շենգենյան գոտում գտնվող այլ երկրի կողմից տրված մուտքի վիզայով, որն իրավունք չի տալիս գտնվել Լիտվայի Հանրապետության տարածքում:

Օտարերկրացին արտաքսվում է Լիտվայի Հանրապետության տարածքից, եթե՝

- 1) նախատեսված ժամկետում չի լքել Լիտվայի Հանրապետության տարածքը.
- 2) մուտք է գործել կամ գտնվում է Լիտվայի Հանրապետության տարածքում անօրինական հիմունքներով,

<sup>36</sup> [http://www.goc.gov.tr/files/files/eng\\_minikanun\\_5\\_son](http://www.goc.gov.tr/files/files/eng_minikanun_5_son)

3) նրա գտնվելը Լիտվայի Հանրապետության տարածքում կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը.

4) նրա նկատմամբ արտաքսման որոշում է ընդունվել այլ երկրում, որի հետ կա արտաքսման որոշումները փոխադարձ ճանաչման համաձայնագիր:

Լիտվայի Հանրապետության տարածքը լքելու մասին որոշումը պետք է կատարվի ոչ ուշ, քան որոշումը օտարերկրացուն հանձնելու օրվանից 15 օրվա ընթացքում (ԵՄ քաղաքացիներին՝ 1 ամսվա ընթացքում): Որոշումն ընդունում է և դրա կատարման նկատմամբ վերահսկողությունն իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնում են ոստիկանությունը և պետական սահմանի պահպանությունն իրականացնող ծառայությունը: Լիտվայի Հանրապետության տարածքից արտաքսվելու մասին որոշումը պետք է կատարվի անմիջապես, եթե չկան հանգամանքներ, որոնց պատճառով որոշման կատարումը կարող է հետաձգվել: Որոշումն ընդունում է Լիտվայի ներքին գործերի նախարարության միգրացիայի վարչությունը կամ Վիլնյուսի տարածքային վարչական դատարանը, իսկ իրականացնում է ոստիկանությունը կամ պետական սահմանի պահպանությունն իրականացնող ծառայությունը: Լիտվայի Հանրապետության տարածքը լքելու կամ Լիտվայի Հանրապետության տարածքից արտաքսվելու մասին որոշումները օտարերկրացու կողմից կարող են բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալուց հետո 14 օրվա ընթացքում: Լիտվայի Հանրապետության տարածքը լքելու կամ արտաքսվելու դեպքում ծախսերը կատարվում են

1) Օտարերկրացու կողմից

2) Հրավիրողի կողմից

3) Օրենքով սամանված դեպքերում՝ փոխադրողի կողմից

Նշված միջոցների բացակայության դեպքում՝ պետական միջոցների հաշվին, որոնք հետագայում պետք է գանձվեն հրավիրողից կամ փոխադրողից:<sup>37</sup>

**ՖՐԱՆՍԻԱ-** Այս երկրում վարչական մարմինը կարող է պարտավորեցնել օտարերկրացուն լքել երկրի տարածքը, եթե՝

1) օտարերկրացին չի կարող հիմնավորել, որ օրինականորեն է մտել Ֆրանսիայի տարածքը,

<sup>37</sup> [http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc\\_l?p\\_id=356478](http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_l?p_id=356478)

- 2) օտարերկրացին գտնվում է ֆրանսիայում վիզայի վավերականության ժամկետի ավարտից հետո, իսկ առանց մուտքի վիզայի ռեժիմի դեպքում՝ երկրի տարածք մուտք գործելուց երեք ամիս հետո, եթե չի ստացել կացության թույլտվություն,
- 3) մերժվել է կացության թույլտվության տրամադրումը կամ երկարացումը կամ նախկինում տրամադրված թույլտվությունը հետ է վերցվել,
- 4) սպառվել է կացության թույլտրվության ժամկետը և չի դիմել երկարացման համար,
- 5) կացության թույլտվության համար դիմումի քննարկումը հաստատող փաստաթուղթը հետ է վերցվել,
- 6) փախստականի կարգավիճակի տրամադրումը վերջնականապես մերժվել է:

Ֆրանսիայի տարածքը լքելու մասին որոշումը պետք է հիմնավորված լինի: Որոշման մեջ պետք է նշված լինի այն երկիրը, ուր պետք է արտաքսվի օտարերկրացին:

Երկիրը լքելու պարտավորությունը կատարելու համար տրամադրվում է 30 օր ժամանակ՝ ծանուցման պահից, ինչպես նաև կարող է տրամադրվել օգնություն՝ իր ծագման երկիր վերադառնալու համար: Բացառիկ դեպքերում երկիրը լքելու համար կարող է տրամադրվել 30 օրը գերազանցող ժամկետ: Վարչական մարմինը կարող է հիմնավորված որոշման հիման վրա պարտավորեցնել օտարերկրացուն լքել երկրի տարածքն անմիջապես, եթե

- 1) նա վտանգ է ներկայացնում հասարակական կարգին,
- 2) կացության կարգավիճակ ստանալու համար ներկայացրել է կեղծ փաստաթղթեր,
- 3) կան հիմքեր ենթադրելու, որ օտարերկրացին կխուսափի իր պարտավորությունը կատարելուց:

Այդ հիմքերն են՝

- օտարերկրացին չի կարող հիմնավորել, որ օրինականորեն է մտել Ֆրանսիայի տարածքը, չունի կացության թույլտվություն,
- օտարերկրացին գտնվում է ֆրանսիայում վիզայի վավերականության ժամկետի ավարտից հետո, իսկ առանց մուտքի վիզայի ռեժիմի դեպքում՝ երկրի տարածք մուտք գործելուց երեք ամիս հետո,

- գտնվում է Ֆրանսիայի տարածքում կացության թույլտվության ժամկետի ավարտից 1 ամիսը գերազանցող ժամանակահատվածում և չի դիմել թույլտվության երկարացման համար,
- նախորդ անգամ խուսափել է երկիրը լքելու վերաբերյալ որոշումը կատարելուց,
- կեղծ կամ այլ անձի անունով փաստաթղթերով է ճանապարհորդում,
- չի կարող ներկայացնել վավեր անձը հաստատող փաստաթուղթ, թաքցրել է իր ինքնությունը:

Վարչական մարմինը կարող է օտարերկրացուն երկրի տարածքը լքելու մասին որոշմամբ հիմնավորված կերպով արգելել անձի հետագա մուտքը Ֆրանսիայի տարածք: Եթե երկրի տարածքը լքելու մասին որոշմամբ նախատեսված չէ հետագայում երկիր մուտք գործելու արգելք, սակայն անձը կամավոր չի լքում երկիրը նախատեսված ժամկետում, վարչական մարմինը կարող է արգելել հետագա մուտքը երկիր առավելագույնը 2 տարի ժամկետով՝ ծանուցման պահից:

Երկիրը կամավոր լքելու համար ժամկետ ունեցող օտարերկրացին կարող է վարչական դատարանում բողոքարկել երկրի տարածքը լքելու մասին որոշումը այն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, իսկ երկիրն անմիջապես լքելու պարտավորություն ունեցող օտարերկրացին՝ 48 ժամվա ընթացքում: Օտարերկրացին կարող է դիմել իրավական օգնություն ստանալու խնդրանքով՝ ամենաուշը իր դիմումը մուտաքագրելու օրը: Դատարանը որոշումը կայացնում է դիմելուց 3 ամսվա ընթացքում: Օտարերկրացիները երկրի տարածքը լքելու նպատակով կարող են ձերբակալվել և տեղավորվել հատուկ կամ ժամանակավոր կացարաններում: Օտարերկրացին կարող է արտաքսվել Ֆրանսիայից, եթե լուրջ վտանգ է ներկայացնում հասարակական կարգին: Բացառիկ դեպքերից բացի, արտաքսումը կատարվում է՝

1. Նախապես տեղեկացնելով օտարերկրացուն,
2. Հանձնաժողովի կողմից արտաքսման որոշումը քննարկելով: Նիստի մասին օտարերկրացին տեղեկացվում է 14 օր առաջ: Հանձնաժողովի նիստը

հրապարակային է: Հանձնաժողովը իր կարծիքը տրամադրում է 1 ամսվա ընթացքում:<sup>38</sup>

ՌԴ-ում արտաքսումը որպես վարչական պատասխանատվության տեսակ հիմնականում նշանակվում է դատարանի կողմից: Վարչական արտաքսումը կիրառվում է օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ: ՌԴ միգրացիոն օրենսդրությունը խախտելը արդեն իսկ հիմք է հանդիսանում, որպեսզի դատարանը նշանակի այնպիսի վարչական պատասխանատվություն, ինչպիսին է Ռուսաստանի Դաշնությունից օտարերկրացիների արտաքսումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված է, որ ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:<sup>39</sup>

## **§2. Անձի արտաքսման հետ կապված հիմնախնդիրները և դրանց լուծումները ըստ ազգային և միջազգային իրավունքի**

Արտաքսումն իրականացվում է օրենսդրական ակտերով ամրագրված հիմքերով: Արտաքսման համար հիմք կարող են հանդիսանալ օտարերկրացիների անօրինական մուտքը տվյալ պետության տարածք, տվյալ պետության տարածքում գտնվելու կանոնները խախտելը, ինչպես նաև տվյալ պետության տարածքում հետագա գտնվելու համար օրինական հիմքերը վերանալը:

<sup>38</sup> <https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070158>

<sup>39</sup> ՀՀ Սահմանադրություն, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով

Միջազգային քրեական դատարանի 1998 թվականի հուլիսի 7-ի Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի համաձայն արտաքսումը կամ բնակչության բռնի տեղահանությունը դասվում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների շարքին և առաջացնում են միջազգային պատասխանատվություն:<sup>40</sup>

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի № 4 արձանագրության համաձայն ոչ ոք չի կարող արտաքսվել այն պետությունից, որի քաղաքացին է հանդիսանում և ոչ մի քաղաքացու չի կարող արգելվել մուտք իր պետություն:<sup>41</sup>

Փախստականների իրավունքների ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը ներառում է մի շարք կոնվենցիաներ, օրենքներ և իրավական այլ ակտեր: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրության մասն են դառնում և ազգային օրենսդրության հետ հակասության մեջ մտնելու պարագայում պետք է գերակայեն միջազգային իրավական նորմերը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 1984թ.-ի թիվ 7 արձանագրությամբ, որը փոփոխվել է 11-րդ արձանագրությամբ, պարզաբանվել են արտաքսման վերաբերյալ հիմնահարցերը: Այդ արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ որևէ պետության տարածքում օրինական կարգով բնակվող օտարերկրացին չի կարող այնտեղից արտաքսվել այլ կերպ, քան ի կատարումն օրենքին համապատասխան ընդունված որոշման: Նա պետք է հնարավորություն ունենա՝

ա. փաստարկներ ներկայացնելու իր արտաքսման դեմ,

բ. վերանայել տալու իր գործը,

գ. այդ նպատակով ներկայացվելու իրավասու մարմնի կամ այդ մարմնի նշանակած մեկ կամ մի քանի անձանց առջև:

Փախստականների վերաբերյալ միջազգային օրենսդրությունը նախատեսում է նաև արտաքսման հիմքերը: Մասնավորապես՝ Փախստականների մասին կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ պայմանավորվող պետությունները չեն

<sup>40</sup> [Римский статут международного уголовного суда](#)

<sup>41</sup> [Протокол № 4 к Европейской конвенции о защите прав человека и основных свобод](#)



վտարում իրենց տարածքում օրինական կարգով գտնվող փախստականին, բացի ազգային անվտանգությամբ կամ հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերից: Նման փախստականի վտարումը կատարվում է միայն օրենքին համապատասխան ընդունված որոշման հիման վրա: Բացի այն դեպքերից, երբ ազգային անվտանգության անհաղթահարելի հիմնավորումներն այլ բան են պահանջում, փախստականին թույլատրվում է ի արդարացումն իրեն ներկայացնել ապացույց և բողոքարկել իրավասու իշխանությանը կամ իրավասու իշխանության կողմից հատուկ նշանակված անձին կամ անձանց և այդ նպատակով ներկայացվել նրանց առջև: Պայմանավորվող պետությունները նման փախստականին բավարար ժամանակ են տալիս՝ այդ ընթացքում ստանալու օրինական կարգով մեկ այլ երկիր մուտք գործելու թույլտվություն: Պայմանավորվող պետություններին իրավունք է վերապահվում այդ ընթացքում կիրառել այնպիսի ներքին միջոցառումներ, որ նրանք անհրաժեշտ կհամարեն: Իհարկե, այդ կովենցիայով ամրագրված է նաև վտարումն արգելող դրույթներ: Մասնավորապես՝ պայմանավորվող ոչ մի պետություն փախստականին չի վտարում կամ որևէ կերպ վերադարձնում («վերադարձում այն երկիր, որտեղից եկել է») այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնար՝ իր ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով: Այս դրույթի արտոնությունը, սակայն, չի կարող վկայակոչվել այն փախստականի կողմից, ով հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում իր գտնված երկրի անվտանգության համար, կամ ով, վերջնական դատավճռով դատապարտված լինելով բացառիկ լուրջ հանցագործության համար՝ վտանգ է ներկայացնում այդ երկրի հասարակության համար:

ՀՀ-ում մերժում ստացած ապաստան հայցողներին իրենց ծագման երկիր կամավոր վերադարձը կարգավորվում է 2008թ.-ի նոյեմբերի 27-ի «Փախստականների և ապաստանի մասին» և 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքներով: «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածն ամրագրում է, որ չվերադարձելիության սկզբունքը փախստականին որևէ կերպ չվերադարձնելն է

այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով:

2008թ.-ի նոյեմբերի 27-ի «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան հայցողները և փախստականներն իրավունք ունեն դատական կարգով բողոքարկելու ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի, ինչպես նաև այդ օրենքով նախատեսված վարչական այլ ընթացակարգերի հետևանքով լիազոր մարմնի կայացրած ցանկացած բացասական որոշում՝ դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում: Եթե ապաստան հայցողի դիմումը մերժվում է, և նա վարչական կամ դատական կարգով չի բողոքարկում մերժման որոշումը, ապա նա որոշումը ստանալուց հետո կարող է շարունակել իր բնակությունը կենտրոնում՝ մինչև 30 օր ժամկետով: Եթե ապաստան հայցողի դիմումը մերժվում է, և նա բողոքարկում է մերժման որոշումը վարչական կարգով, ապա նա և նրա ընտանիքի անդամները կարող են շարունակել իրենց բնակությունը կենտրոնում՝ մինչև վարչական բողոքի քննարկման վերաբերյալ որոշում ընդունվելը: Եթե ապաստան հայցողի դիմումը մերժվում է, և նա բողոքարկում է մերժման որոշումը դատական կարգով, ապա նա և նրա ընտանիքի անդամները կարող են շարունակել իրենց բնակությունը կենտրոնում՝ մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Բոլոր դեպքերում ապաստանի մերժում ստացած փախստականները միգրացիոն պետական ծառայության գրավոր թույլտվությամբ կարող են շարունակել բնակությունը կենտրոնում մինչև ՀՀ տարածքը լքելը: «Օտարերկրացիների մասին» օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի ճանաչվում փախստական, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա՝

1) կատարել է հանցագործություն ընդդեմ խաղաղության, պատերազմական հանցագործություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն՝ համաձայն նման հանցագործությունների կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված միջազգային փաստաթղթերի,

2) կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն ՀՀ տարածքից դուրս նախքան ՀՀ-ում ապաստան հայցող դառնալը,

3) մեղավոր է ճանաչվել Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին հակասող արարքների կատարման մեջ: Ապաստանի տրամադրումը կարող է մերժվել նաև այն փախստականին, ով ժամանել է երրորդ ապահով երկրից, որտեղ նա չունի հետապնդման, մարդու իրավունքների խախտումների կամ իր երկիր վերադարձվելու երկյուղ, ինչպես նշված է այդ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, կամ չունի արտաքին հարձակման, համատարած բռնության, այլ երկրի տիրապետության տակ գտնվելու, ներքին հակամարտությունների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների (վտանգների) ենթարկվելու երկյուղ, ինչպես նշված է այդ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, և կարող է օրինական կերպով վերադառնալ այդ երկիր:

Շատ է քննադատվում Եվրոպայի այն երկրների քաղաքականությունը, որոնք արտաքսում կիրառում են այն անձանց նկատմամբ, որոնց քաղաքացիության երկրներում կամ որտեղ նրանք մշտապես բնակվում ու արտաքսում են, կիրառվում են խոշտանգումներ կամ այլ դաժան ու անմարդկային վերաբերմունք: ՀՀ-ում բոլոր դեպքերում ապաստան հայցող անձը մինչև իր ներկայացրած՝ ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը չի կարող արտաքսվել ՀՀ տարածքից, և օրենքով այս ժամկետը սահմանափակված չէ: Բացի արտաքսումից, գոյություն ունի կոլեկտիվ (խմբակային) արտաքսման հասկացությունը: Եվ արտաքսման, և կոլեկտիվ արտաքսման եզրույթներն ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են:

Սա իրականացվում է ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն՝ հանցանք կատարած անձին հանձնելով պահանջող երկրի հանձնարարականի հիման վրա: Այս հարցը ՀՀ-ում ստացել է իր իրավական կարգավորումը: 2006թ.-ի

դեկտեմբերի 25-ի «Օտարերկրացիների մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ արտաքսում ասելով հասկացվում է՝ օտարերկրացու հարկադիր հեռացումը ՀՀ-ից նրա՝ ՀՀ-ում գտնվելու կամ բնակվելու օրինական հիմքերի բացակայության դեպքում, իսկ կոլեկտիվ արտաքսում ասելով հասկացվում է՝ առնվազն երկու օտարերկրացիներից բաղկացած խմբի արտաքսումը՝ առանց խմբի յուրաքանչյուր անդամի անհատական տվյալները և առանձնահատուկ վիճակը հաշվի առնող օբյեկտիվ և ողջամիտ քննարկման հիման վրա ընդունված որոշման: Կոլեկտիվ արտաքսումն օրենքով արգելված է: Հետևաբար ապաստան հայցողի մերժումն ու արտաքսումն իրականացվում է անհատականացման և տարբերակման մոտեցումը կիրառելով՝ հաշվի առնելով կոնկրետ անձի՝ ապաստան հայցելու հիմքերն ու պատճառները և կոնկրետ դեպքի առանձնահատկությունները: Արտաքսումն առաջացնում է որոշակի՝ ներառյալ իրավական բացասական հետևանքներ: Օրինակ՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե նա արտաքսվել է Հայաստանի Հանրապետության տարածքից կամ զրկվել է կացության կարգավիճակից, և արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք տարի: Փախստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մերժման որոշումը կայացնում է միայն լիազոր մարմինը՝ օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգերի համաձայն: Ինչպես արդեն նշվել է օտարերկրացու կամավոր հեռանալը նախատեսված է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով, որի համաձայն՝ օտարերկրացին պարտավոր է կամավոր հեռանալ ՀՀ տարածքից, եթե՝

ա) լրացել է նրա մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակի վավերականության ժամկետը,

բ) մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվել,

գ) մերժվել է նրա՝ կացության կարգավիճակ ստանալու կամ ժամկետը երկարաձգելու համար դիմումը,

դ) նա օրենքով սահմանված հիմքերով զրկվել է կացության կարգավիճակից:

Գործնականում կացության կարգավիճակ ստանալու կամ ժամկետը երկարաձգելու հարցով դիմած և մերժում ստացած անձինք, որպես կանոն, կամավոր չեն հեռանում ՀՀ-ից՝ տարբեր բնույթի խոչընդոտներ ստեղծելով այդ իրականացնելու պարտականություն ունեցող անձանց համար: Օտարերկրացու արտաքսման վերաբերյալ պետք է գործ հարուցվի, այն դեպքում, երբ վերը նշված հոդվածով նախատեսված դեպքերում օտարերկրացին կամավոր չի հեռացել ՀՀ տարածքից, ապա ՀՀ ոստիկանությունն արտաքսման վերաբերյալ գործ է հարուցում և ներկայացնում դատարան: Օտարերկրացիների արտաքսումն արգելող հանգամանքները նույնն են, ինչ վերը նշվել է: Բացի այդ հանգամանքներից, արգելվում է արտաքսել ՀՀ-ում բնակվող օտարերկրացուն, եթե նա՝

- անչափահաս է, և նրա ծնողները օրինական հիմքերով բնակվում են ՀՀ-ում,
- իր խնամքի տակ ունի անչափահաս երեխա,
- 80 տարեկանից բարձր տարիքի է:

Հարուցված գործի քննության ընթացքում օտարերկրացիներն ունեն որոշակի իրավունքներ և պարտականություններ: Մասնավորապես՝ ՀՀ-ից արտաքսման ենթակա օտարերկրացին օգտվում է դատական պաշտպանության համար ՀՀ օրենքներով նախատեսված բոլոր իրավունքներից, այսինքն համարվում է դատավարության լիիրավ մասնակից՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Մասնավորապես, նրանք իրավունք ունեն՝

- 1) ծանոթանալու գործի նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները՝ հաշվի առնելով դռնփակ նիստին ներկայացվող պահանջները,
- 2) անելու ինքնաբացարկ հայտներու միջնորդություններ,
- 3) ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը՝ հաշվի առնելով դռնփակ նիստին ներկայացվող պահանջները,
- 4) հարցեր տալու, միջնորդություններ անելու, բացատրություններ և ցուցմունքներ տալու դատարանին,
- 5) գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու իրենց առաջարկներն ու փաստարկները,

6) առարկելու գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների կամ փաստարկների դեմ,

7) բողոքարկելու դատական ակտերը,

8) օգտվելու իրենց վերապահված այլ դատավարական իրավունքներից:

Նրանք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Ընդ որում կարող են լիազորել ներկայացուցչին իրենց փոխարեն հանդես գալ վարչական դատարանում: Ներկայացուցչի (փաստաբանի) մասնակցությունն ինքնին չի խոչընդոտում նրանց նույնպես մասնակցել դատավարությանը: Արտաքսման վերաբերյալ գործի քննության արդյունքում դատարանը կայացնում է որոշում օտարերկրացու արտաքսման կամ արտաքսումը մերժելու մասին: Արտաքսման մասին դատարանի որոշման մեջ նշվում են՝

- օտարերկրացու արտաքսման օրը,
- օտարերկրացու արտաքսման երթուղին,
- պետական սահմանի անցման կետը,
- արտաքսման ծախսերը հոգալը,
- մինչև ՀՀ տարածքից հեռանալը նրա բնակվելու վայրը,
- որոշակի պարբերականությամբ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանում ներկայանալու պարտավորությունը,
- առանց թույլտվության բնակության վայրը թողնելու արգելքը,
- ձերբակալված լինելու դեպքում մինչև արտաքսումը ձերբակալման մեջ պահելու կամ ազատ արձակելու մասին,
- ժամանակավոր կացության կարգավիճակ տալու՝ ՀՀ ոստիկանության պարտականության մասին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ արտաքսման մասին որոշումն օտարերկրացին կարող է բողոքարկել օրենքով սահմանված կարգով: Արտաքսման մասին որոշման բողոքարկման դեպքում օտարերկրացու արտաքսումը ՀՀ-ից կասեցվում է: Բողոքարկումն իրականացվում է ՀՀ դատական բոլոր ատյաններով՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելով: Եթե դատական կարգով բողոքարկումն արդյունավետ չէր, ապա մերժում ստացած անձն արտաքսվում է: Արտաքսման մասին որոշման վերաբերյալ նշում է կատարվում օտարերկրացու անձնագրում և արտաքսման մասին որոշումն ի կատար է ածվում ՀՀ ոստիկանության կողմից, որն իրականացնում է արտաքսված օտարերկրացիների առանձին հաշվառում՝ նրանց մասին տվյալները մտցնելով տվյալների բանկ: ՀՀ ոստիկանությունը եռօրյա ժամկետում տեղեկացվում է արտաքսման մասին արտաքսվող օտարերկրացու ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը կամ տվյալ պետության շահերը ներկայացնող այլ պետության դիվանագիտական ներկայացուցչությունը: Արտաքսման ծախսերը օտարերկրացու կողմից չհոգալու դեպքում կատարվում են ՀՀ պետական բյուջեից: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրացուն ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից նա ժամանել է, վերադարձնելու անհնարինության դեպքում, առանց անձնագրի, անվավեր անձնագրով ՀՀ պետական սահմանի անցման կետ ժամանած կամ ՀՀ պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացիները կարող են պահվել տարանցիկ գոտում կամ այլ տեղ՝ այդ նպատակով ստեղծված հատուկ կացարանում: Եթե վերը նշված անձն առանց ծնողի կամ օրինական ներկայացուցչի ուղեկցությամբ երթևեկող 18 տարին չլրացած անձ է, ապա նա չի կարող պահվել հատուկ կացարանում և անմիջապես պետք է ուղեկցվի ծնողի (ծնողների) կամ օրինական ներկայացուցչի մոտ: Սահմանային հսկողություն իրականացնող լիազոր մարմինը հատուկ կացարանում օտարերկրացուն տեղավորելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, դիմում է դատարան՝ օտարերկրացուն մինչև 90 օր պահելու թույլտվության վերաբերյալ որոշում ստանալու համար: Դատարանի կողմից որոշում կայացնելու նպատակով

օտարերկրացին դատարան է տեղափոխվում սահմանային հսկողություն իրականացնող լիազոր մարմնի ներկայացուցչի ուղեկցությամբ: Եթե 90 օրվա ընթացքում անհնար է լինում օտարերկրացու վերադարձը ծագման պետություն, ապա օտարերկրացուն ՀՀ ոստիկանության կողմից տրվում է ժամանակավոր թույլտվություն մինչև օտարերկրացու հեռացումը ՀՀ-ից, սակայն ոչ ավել, քան 1 տարի ժամկետով: Երբեմն գործնականում անհրաժեշտություն է առաջանում մերժում ստացած ապաստան հայցողին ձեռքակալել և նրա հետ իրականացնել հարկադիր այլ գործողություններ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ի կատար ածելու նպատակով: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրացին նույն օրենքով սահմանված կարգով կարող է ձերբակալվել և պահվել հատուկ կացարանում, եթե բավարար հիմքեր կան կասկածելու, որ նա կարող է թաքնվել մինչև դատարանում արտաքսման մասին գործի քննությունը կամ օրինական ուժի մեջ մտած արտաքսման որոշման կատարումը: Օտարերկրացուն ձերբակալելուց և հատուկ կացարանում տեղավորելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում, ՀՀ ոստիկանությունը դիմում է դատարան՝ օտարերկրացուն մինչև 90 օր պահելու թույլտվության վերաբերյալ որոշում ստանալու համար: ՀՀ ոստիկանությունը ձերբակալման մասին ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնում է ձերբակալված օտարերկրացու ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին կամ տվյալ պետության շահերը ներկայացնող այլ պետության դիվանագիտական ներկայացուցչությանը և (կամ) տվյալ օտարերկրացու՝ ՀՀ-ում գտնվող մերձավոր ազգականներին: Ձերբակալված օտարերկրացին հատուկ կացարանում կարող է պահվել մինչև արտաքսման մասին գործի քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումն օրինական ուժի մեջ մտնելը, բայց ոչ ավելի քան 90 օր: Դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո օտարերկրացուն արտաքսում են վերը նշված ընթացակարգով: Ձերբակալված օտարերկրացին ունի հետևյալ իրավունքները.

- իրեն հասկանալի լեզվով կամ թարգմանչի միջոցով իմանալ իր ձերբակալման և պահման պատճառների մասին,
- բողոքարկել դատարանի՝ իր վերաբերյալ կայացրած ցանկացած որոշում,



- փաստաբանի կամ այլ իրավական ներկայացուցչի (ներառյալ՝ հասարակական կազմակերպությունների), ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի պաշտոնյայի այցելության,
- դիմել դատարան իրեն ազատ արձակելու դիմումով,
- ստանալ անհրաժեշտ բժշկական օգնություն:

Վերը նշված իրավական կարգավորումներն իրականացնելու համար ՀՀ կառավարությունն իր որոշումներով նախատեսել է հատուկ ընթացակարգեր և մեխանիզմներ: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2010թ.-ի հունվարի 21-ի N48-Ն «Կամավոր վերադարձի մասին դիմում ներկայացրած անձանց (ապաստան հայցողներին կամ փախստականներին)՝ իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր կամ հնարավոր երրորդ՝ միջանցիկ երկիր մուտք գործելու համար անհրաժեշտ ճամբորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում աջակցության կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատվել է կամավոր վերադարձի մասին դիմում ներկայացրած անձանց (ապաստան հայցողներին կամ փախստականներին)՝ իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր կամ հնարավոր երրորդ՝ միջանցիկ երկրներ մուտք գործելու համար անհրաժեշտ ճամբորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում աջակցության կարգը՝ ներառյալ անհրաժեշտ ճամբորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում աջակցության հետ կապված հարաբերությունները: ՀՀ-ում ապաստան հայցողները կամ ՀՀ-ում փախստական ճանաչված անձինք իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության կամ հնարավոր երրորդ՝ միջանցիկ երկրներ մուտք գործելու համար անհրաժեշտ ճամբորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում աջակցություն ստանալու համար միգրացիայի հարցերով լիազոր պետական մարմին (այսուհետ՝ Ծառայություն) են ներկայացնում գրավոր դիմում: Ապաստան հայցողները դիմումով միջնորդում են նաև ՀՀ-ում իրենց ապաստան տալու մասին դիմումի կապակցությամբ լիազոր մարմնում հարուցված վարչական վարույթը կասեցնելու, իսկ ՀՀ-ում փախստական ճանաչված անձինք՝ իրենց որպես փախստական ճանաչելը դադարեցնելու վերաբերյալ: Ծառայությունն ապաստան հայցողներին եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է այն մասին,

որ իրենց ապաստան տալու մասին դիմումի կապակցությամբ հարուցված վարչական վարույթը կկասեցվի նրանց կամավոր վերադարձի պահից: Ծառայությունը ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է այն մասին, որ նրանց որպես փախստական ճանաչելը կդադարեցվի, եթե նրանք ՀՀ տարածքը կամավոր լքելուց հետո 3 ամսվա ընթացքում չեն վերադառնա ՀՀ և հետ չեն վերցնի կամավոր վերադարձի մասին դիմումը: Կամավոր վերադարձի մասին դիմումը ստանալուց հետո 20-օրյա ժամկետում Ծառայությունը միջոցներ է ձեռնարկում ապաստան հայցողներին կամ փախստականներին իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության երկրում առկա իրավիճակի մասին մանրամասն և օբյեկտիվ տեղեկություններ ձեռք բերելու համար: Ծառայությունն այդպիսի տեղեկությունները ձեռք է բերում սեփական նախաձեռնությամբ՝ իր հաշվին (ինտերնետային կայքերի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների հրապարակումներից) և ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի, հասարակական կազմակերպությունների և այլ մարմինների հետ համագործակցությամբ և ձեռք բերված բոլոր տեղեկությունները տրամադրում է ապաստան հայցողներին կամ փախստականներին: Եթե Ծառայությունը ձեռք բերված տեղեկությունների հիման վրա գտնում է, որ ապաստան հայցողի կամ փախստականի վերադարձն իր քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր անվտանգ չէ, ապա Ծառայությունը դրա մասին տեղեկացնում է ապաստան հայցողին կամ փախստականին և անհրաժեշտ ճամփորդական փաստաթուղթ կամ վիզա ստանալու հարցում նրան աջակցում է միայն այն դեպքում, եթե ապաստան հայցողը կամ փախստականը տալիս է գրավոր համաձայնություն այն մասին, որ թեև ինքը տեղեկացվել է, որ կամավոր վերադարձն անվտանգ չէ, սակայն ցանկանում է կամավոր վերադառնալ իր քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, Ծառայության միջնորդության հիման վրա, եռօրյա ժամկետում դիմում է ապաստան հայցողների քաղաքացիության կամ հիմնական բնակության երկրների դեսպանություններին՝ այդ անձանց անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթեր տալու հարցում աջակցելու խնդրանքով: Եթե ապաստան հայցողի կամ փախստականի՝ իր

քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր վերադարձը հնարավոր է միայն երրորդ՝ միջանցիկ երկիր մուտք գործելու միջոցով, ապա ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, Ծառայության միջնորդության հիման վրա, եռօրյա ժամկետում դիմում է երրորդ՝ միջանցիկ երկրի դեսպանությանը՝ այդ անձին վիզա տրամադրելու խնդրանքով: ՀՀ արտաքին գործերի նախարարությունն ապաստան հայցողներին կամ փախստականներին՝ իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության կամ հնարավոր երրորդ՝ միջանցիկ երկրներ մուտք գործելու համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում աջակցության հարցերում իր կողմից ձեռնարկված միջոցների արդյունքների մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է Ծառայությանը: Ծառայությունն այդ տեղեկությունները ձեռք բերելուց հետո եռօրյա ժամկետում՝ ապաստան հայցողներին կամ փախստականներին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն և նրանց ուղղորդում համապատասխան մարմիններ՝ ճամփորդական փաստաթղթեր և վիզա ստանալու համար: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է նշել, որ ՀՀ-ում կամավոր վերադարձը մանրամասնորեն կարգավորված է, իսկ հարկադիր վերադարձը կամ արտաքսումն ամբողջությամբ կանոնակարգված չէ: Ներկայացված խնդիրն առավել ամբողջական ուսումնասիրելու համար ուսումնասիրվել և վերլուծվել են այլ պետություններում մերժում ստացած ապաստան հայցողներին արտաքսելու ընթացակարգերը: Երբեմն այդ արտաքսումն իրականացվում է որոշակի այնպիսի պայմաններով, որոնք հակասում են միջազգային չափորոշիչներին և առհասարակ՝ հակամարդկային են: Օրինակ՝ ՌԴ-ից պարբերաբար և զանգվածաբար արտաքսվում են միջինասիական երկրների, մասնավորապես՝ Ուզբեկստանի և Տաջիկստանի քաղաքացիները՝ միայն նրանց ծագումնաբանությունից ելնելով: 2012թվականի նոյեմբերին օտարերկրացիների արտաքսման պատճառ առայժմ միայն ՌԴ քաղաք Մոսկվայից հանդիսացավ նրանց ՄԻԱՎ վարակակիր լինելը, ինչը բավականին մեծ աղմուկ էր բարձրացրել միջազգային հանրության մակարդակով: Արտաքսման ֆինանսական ծախսերը պետք է հոգ տանի պետությունը, որն արտաքսում է օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին, բայց կան պետություններ, որոնք իրավական տեխնիկայի կիրառմամբ՝ հատուկ ձևակերպումների դեպքում ֆինանսական

ծախսերը կազմակերպում են այլ աղբյուրներից: Օրինակ՝ Չեխիայում ծախսերը հոգում է նա, ում հրավերով օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը հայտնվել է Չեխիայում: Հաճախ արտաքսման հետևանքները կարող են լինել ավելի մեծ, քան կանխատեսում է ապաստան հայցողը: Մասնավորապես՝ Ֆինլանդիայից (ինչպես նաև Շենգենյան այլ երկրներից) արտաքսելը մեխանիկորեն հանգեցնում է Շենգենյան բոլոր երկրներ մտնելու արգելք, քանի որ Շենգեն երկրների միջև գոյություն ունի Շենգենյան տեղեկատվական համակարգ (Schengen Information System) և արտաքսված անձի վերաբերյալ տեղեկությունները պարտադիր ներառվում են այդ համակարգում: Բացի այդ, որոշ Շենգեն պետություններ կիրառում են մուտքի արգելքի ժամկետի երկարացում՝ Շենգենյան տեղեկատվական համակարգում համապատասխան փոփոխություն նախատեսելով: Ֆինլանդիան նախատեսում է ճկուն մեխանիզմ անձանց արտաքսելու և ապաստան հայցելու դիմումը մերժելու համար՝ ուղարկելով դիմումն այլ պետություն, երբ առկա է հետևյալ դեպքերից որևէ մեկը՝

- անձը նախկինում ապաստան հայցելու դիմում է ներկայացրել այդ պետությունում,
- ապաստան հայցողի ընտանիքի անդամներից մեկը ճանանչվել է փախստական այդ երկրում,
- ապաստան հայցողի մոտ առկա է այդ երկրի կողմից տրամադրված մուտքի արտոնագիր կամ բնակվելու թույլտվություն,
- անձն այդ երկրից ժամանել է Ֆինլանդիա ապօրինի կամ շրջանցելով սահմանային անցագրային կետերը:

Օտարալեզու մասնագիտական գրականության մեջ արտաքսումն ու դեպորտացիան տարբերվում են, քանի որ դեպորտացիան համարվում է միայն դատական արտաքսումը (վարչական վտարումը): Ներկայումս այլ պետությունների օրենսդրությամբ դեպորտացիան հանդիսանում է նաև վարչական արտաքսում, որը համարվում է վարչական իրավախախտումների համար նախատեսված տույժի միջոց: Հետաքրքրական է Ղազախստանի՝ այս ոլորտը կարգավորող օրենսդրությունը: Ղազախստան ժամանած բոլոր օտարերկրացիները պարտավոր են 5-օրյա ժամկետում հաշվառվել միգրացիոն ոստիկանության տարածքային

ստորաբաժանումներում՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթղթեր: Օտարերկրացիների հաշվառումը կազմակերպում է օտարերկրացուն ընդունող կողմը, քանի որ օտարերկրացիներն ինքնուրույն դա իրականացնել չեն կարող, բացառությամբ, եթե նրանք ժամանել են զբոսաշրջության նպատակով: Բացառություն են կազմում ՌԴ քաղաքացիները, ովքեր Ղազախստանում առանց հաշվառման կարող են գտնվել մինչև 30 օր և Ուկրաինայի քաղաքացիները՝ մինչև 90 օր: Հետագայում, եթե առաջանում է արտաքսման անհրաժեշտություն, ապա այդ գործընթացը կազմակերպում է նույն միգրացիոն ոստիկանությունը: Արտաքսման վերաբերյալ խիստ մոտեցում է կիրառվում Գերմանիայում, որտեղ եթե մերժում ստացած անձը չի հեռանում պետությունից և խուսափում է արտաքսումից, ապա նրա նկատմամբ հարուցվում է քրեական գործ, քանի որ նա խախտում է պետությունում օտարերկրացիների գտնվելու կանոնները, որը պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ:

2013թ.-ի հունվարի 1-ից ՌԴ-ում արտաքսման ենթակա անձանց՝ պահելու և արտաքսելու են ՌԴ սուբյեկտի բյուջեով նախատեսված գումարներով: Մինչ այդ դա իրականացվում էր դաշնային բյուջեից և այդ անձինք պահվում էին ՌԴ ներքին գործերի նախարարության հատուկ ընդունիչ կետերում:

ՌԴ կառավարության 2002թ.-ի հոկտեմբերի 24-ի որոշմամբ հստակեցվել է դեպորտացիա և վարչական վտարում եզրույթները: Ըստ այդ որոշման դեպորտացիան օտարերկրացու հարկադիր արտաքսումն է ՌԴ տարածքից՝ ՌԴ-ում գտնվելու օրինական հիմքերի բացակայության կամ դրանց դադարման դեպքում, իսկ վարչական վտարումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՌԴ օրենսգրքի համաձայն օտարերկրացու հարկադիր և վերահսկվող արտաքսումն է կամ վերահսկվող ինքնուրույն ելքը ՌԴ տարածքից: Այսինքն՝ հիմնական տարբերությունը վերահսկելիության մեջ է, և եթե վերագրենք ներկայացված եզրույթները ՀՀ օրենսդրությանը, ապա պարզ է դառնում, որ ՀՀ-ում հիմնականում խոսվում է վարչական վտարման մասին, բայց նման եզրույթ ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ: ՌԴ-ում արտաքսման և վարչական վտարման դեպքում պետությունը ֆինանսավորում է օտարերկրացու, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև ուղեկցող պետական աշխատակիցների ճամփորդական փաստաթղթերի

ձեռքբերումը, օտարերկրացուն սահմանային անցակետում պահելուն ուղղված ծախսերը, օտարերկրացուն արտաքսման կամ վարչական վտարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևակերպումը և այլն: Եթե դեպորտացիայի կամ վարչական վտարման ենթարկվող օտարերկրացին արդեն գտնվում է ՌԴ տարածքում, այլ ոչ թե սահմանում, ապա նրանց ժամանակավոր պահման վայր հանդիսանում են ոստիկանության կազմում գործող ընդունիչ կենտրոնները: Եթե անդրադառնանք արտաքսմանը՝ որպես ՀՀ-ում վարչական պատասխանատվության տեսակի, ապա պետք է նշել, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող են կիրառվել հետևյալ վարչական տույժերը՝

1) նախազգուշացում,

2) տուգանք,

3) վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հատուցմամբ վերցնում,

4) վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում,

5) քաղաքացուն տրված հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, որսորդության իրավունքից) զրկում:

Ինչպես երևում է այս ցանկում բացակայում է արտաքսումը (վարչական վտարումը), հետևաբար օտարերկրացու նկատմամբ, նման սանկցիա կրառելը վարչական իրավախախտում կատարելու համար անհնարին է: Բացի այդ, եթե օտարերկրացին ստացել է ապաստան հայցելու դիմումի մերժում և չի հեռանում ՀՀ-ից, ապա նա ակամա համարվում է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի պահանջները խախտած անձ, ինչը որպես վարչական իրավախախտում նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 201-րդ հոդվածում, որը պատասխանատվություն է նախատեսում է միայն տուգանքի ձևով: Ինչն ինքնին նպատակահարմար չէ: Այսինքն՝ պետք է հստակեցնել որոշ եզրույթներ ու վերանայել օտարերկրացու հարկադիր ելքի կազմակերպման ու կատարման ընթացակարգերը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966թ. դեկտեմբերի 16) մասնակից որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրացին կարող է արտաքսվել միայն ի կատարումն օրենքին համապատասխան կայացված որոշման, և եթե պետական անվտանգության հրամայական նկատառումները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու, իրավասու իշխանության կամ իրավասու իշխանության նշանակած անձի կամ անձանց կողմից իր գործը վերանայելու իրավունք և այդ նպատակով այդ իշխանության, անձի կամ անձանց առջև ներկայացվելու իրավունք:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի (1984թ. դեկտեմբերի 10) ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ:

Նման հիմքերի առկայությունը որոշելու նպատակով իրավասու իշխանությունները նկատի են առնում գործին առնչվող բոլոր հանգամանքները, ներառյալ, համապատասխան դեպքերում, տվյալ պետությունում մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող և զանգվածային խախտումների գոյությունը:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի դրույթները չեն խոչընդոտում ցանկացած այլ միջազգային փաստաթղթի կամ ներպետական օրենսդրության դրույթներին, որոնք արգելում են դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը, կամ վերաբերում են հանձնմանը կամ արտաքսմանը:

Միտում կա դասակարգելու արտաքսումը մի շարք գործոնների հիման վրա, ինչպես օրինակ, օգտագործվող ուժի սահմանների, զսպման օգտագործվող միջոցների տեսակների և արտաքսվող անձին ուղեկցող պահակախմբի թվաքանակի:

Արտաքսման հրամանի հարկադրական կատարման խնդիրը հաճախ կարող է լինել դժվարին և լարված այն օտարերկրացու նկատմամբ, ով որոշել է մնալ պետության տարածքում: Շատ հաճախ օդային տրանսպորտով միջոցով

իրականացվող արտաքսման գործողությունները հանգեցնում են անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Այդ դիսկրիմինացիան և թե՛ արտաքսման նախապատրաստության ժամանակ և թե՛ հենց թռիչքի պահին. այն հատուկ է մի շարք անհատական զսպող միջոցների ու մեթոդների կիրառմանը և անգամ մեծանում է նման միջոցների ու մեթոդների համակցված օգտագործումից: Ամենից առաջ պետք է հիշել, որ ֆիզիկական ուժի կիրառումը արտաքսման ենթակա անձանց նկատմամբ, նրանց տրանսպորտային միջոց նստել պարտադրելու կամ նման պահանջի չկատարման համար պատժելու նպատակով՝ բացարձակապես անընդունելի է: Տվյալ կանոնն իր արտացոլումն է գտել բազմաթիվ երկրների համապատասխան հրահանգներում: Օրինակ, որոշ հրահանգներ արգելում են զսպող կամ ավելորդ ցավ պատճառող միջոցների օգտագործումը՝ պատժելու համար դիմադրություն ցույց տվող օտարերկրացուն:

Ակնհայտ է, որ արտաքսման գործողության ընթացքում ծագող առանցքային հարցերից մեկնը պահակախմբի անձնակազմի կողմից ֆիզիկական ուժի և զսպող միջոցների կիրառումն է: Թեև համապատասխան անձնակազմը երբեմն ստիպված է լինում կիրառել ուժ և զսպող միջոցներ, որպեսզի արդյունավետ իրականացնի արտաքսումը, սակայն ուժի և զսպող միջոցների կիրառումը չպետք է գերազանցի ողջամտորեն անհրաժեշտ սահմանը: Ողջունելի է այն, որ որոշ երկրներում ուժի և զսպող միջոցների կիրառումը արտաքսման ընթացակարգերի ընթացքում մանրամասն վերանայվում է օրինականության, համամասնության և համաչափության սկզբունքների լույսի ներքո: Ուժի և զսպող միջոցների կիրառման հարցը ծագում է համապատասխան ազատազրկված անձին խցից դուրս հանելու պահից (որտեղ էլ որ գտնվելիս լինի այդ խուցը՝ օդանավակայանի շինություններում, ներգաղթողների պահման մասնագիտացված կենտրոնում, բանտում թե՛ ոստիկանական բաժանմունքում): Միջոցները, որոնք օգտագործում է պահակախմբի անձնակազմը ոչ շարժունակ դարձնելու համար այն անձին, ում նկատմամբ պետք է կիրառվեն զսպող միջոցներ (օրինակ՝ մետաղական ձեռնաշղթաները կամ պլաստիկ ժապավենները), արժանի են հատուկ ուշադրության: Մեծամասամբ կալանքի տակ վերցրած անձինք լիովին տիրապետում են իրենց ֆիզիկական ունակություններին և կարող են ուժեղ դիմադրել ձեռնաշղթաներ կիրառելուն: Դիմադրության դեպքում



պահակախմբի անձնակազմն ամբողջությամբ անշարժացնում է ազատագրկված անձին պառկեցնելով նրան գետնին՝ դեմքով ներքև, որպեսզի կիրառի ձեռնաշղթաները: Ազատագրկված անձին նման դիրքով պահելը, առանձնապես, երբ պահակախմբի անձանակազմն իր քաշով ճնշում է նրա մարմնի տարբեր մասերի վրա (ճնշում կրծքավանդակին, ծնկներով ճնշում մեջքին, պարանոցի անշարժացում), երբ տվյալ անձը դիմադրություն է ցուցաբերում, կարող է ստեղծել դիրքային շնչահեղձության առաջացման ռիսկ : Այսպիսի ռիսկ առկ է այն դեպքում, երբ ինքնաթիռի բազկաթռոռին նստեցրած արտաքսվող անձը դիմադրում է և պահակախմբի անձնակազմն ուժ կիրառելով ստիպում է նրան թեքվել առաջ, գլուխը մտցնելով ծնկների մեջտեղը, դրանով իսկ ուժեղ ճնշելով կրծքավանդակը: Որոշ երկրներում ուժի կիրառումը տվյալ անձի նկատմամբ՝ ստիպելու համար նրան երկտակ ծալվել ուղևորական նստարանի վրա, որպես կանոն, արգելված է և անշարժացման նման ձևը թույլատրվում է միայն դրա բացարձակ անհրաժեշտության դեպքում այն բանի համար, որպեսզի իրականացվի կոնկրետ, կարճատև և արտոնված գործողություն (օրինակ՝ ձեռնաշղթաներ հագցնելը, ստուգելը կամ հանելը) այն էլ միայն բացառապես այդ նպատակի համար անհրաժեշտ ժամանակի ընթացքում:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է հնարավորության սահմաններում խուսափել ուժ և հարկադրանք կիրառելուց, և որ բացառիկ հանգամանքներում ցանկացած նման կիրառում պետք է իրականացվի այն հրահանգների պահպանմամբ, որոնք նախատեսում են նվազագույնի հասցնել տվյալ անձի առողջությանը վնաս պատճառելու ռիսկերը: Որոշ երկրներում գործում են կարգավորումներ, որոնց համաձայն՝ զսպող միջոցները կամ հարկադրանքը պետք է թռչի ժամանակ դադարեցվեն (հենց որ ինքնաթիռը բարձրություն է հավաքում): Եթե բացառիկ դեպքերում այդ միջոցները պետք է մնան ուժի մեջ, քանի որ արտաքսվող անձը շարունակում է իրեն ագրեսիվ պահել, պահակախմբի անձնակազմին հրահանգավորված է ծածկել նրա վերջույթները ծածկոցով, որպեսզի մյուս ուղևորները չնկատեն զսպող միջոցների կիրառումը:

Վերջին տասը տարիների ընթացքում տարբեր երկրներում արտաքսման ժամանակ տեղ գտած լուրջ միջադեպերը կարևորել են որոշ միջոցների կիրառման

դեպքում համապատասխան անձանց կյանքին սպառնացող վտանգը՝ (բերանի և (կամ) քթի փակումը կպչուն ժապավենով, երեսին բարձ կամ բամբակով լցված ձեռնոց դնելը, առջևի նստարանի թիկունքին դեմքը սեղմելը և այլն): Շատ կարևոր է, որ օդում գտնվող ինքնաթիռում ծագած արտակարգ իրավիճակի դեպքում ոչինչ չխանգարի արտաքսվող անձին փրկելուն: Հետևաբար, պետք է հնարավոր լինի ինքնաթիռի անձնակազմի հրամանով անհապաղ հեռացնել արտաքսվող անձի շարժումների ազատությունը սահմանափակող ցանկացած միջոց: Պետք է նաև հաշվի առնել առողջությանը սպառնացող ռիսկերը, կապված այսպես կոչված «էկոնոմ կարգի սինդրոմի» հետ այն անձանց նկատմամբ, ովքեր երկար ժամանակով կապված են իրենց նստատեղերից :

Հատուկ ուշադրության են արժանի երկու հարց. արտաքսող պահակախմբերի կողմից դիմակների կրումը և նրանց կողմից կաթվածահարական և գրգռիչ գազերի օգտագործումը՝ ազատազրկված ներգաղթողներին իրենց խցերից դուրս բերելու և ինքնաթիռ տեղափոխելու համար: Անվտանգության նկատառումները երբեք չեն կարող ծառայել որպես արդարացում այն բանի, որպեսզի պահակախմբի անձնակազմը արտաքսման գործողություն կատարելու ժամանակ լինի դիմակներով: Նման գործելակերպը ծայր աստիճան անցանկալի է, քանի որ այն կարող է լրջորեն խանգարել բռնության մեղադրանքներ ներկայացնելու դեպքում դրա մեղավորի հայտնաբերմանը: Վերապահումներով պետք է մոտենալ նաև կաթվածահար անող և գրգռիչ գազերի օգտագործմանը, որն արվում է անհնազանդ ազատազրկված անձանց ենթարկեցնելու նպատակով՝ նրանց իրենց խցերից դուրս բերելու և ինքնաթիռ տեղափոխելու համար: Նման գազերի օգտագործումը խիստ սահմանափակ տարածքներում, ինչպիսին հանդիսանում են խցերը, կհանգեցնի ինչպես ազատազրկված անձի, այնպես էլ համապատասխան անձնակազմի առողջության համար ակնհայտ ռիսկերի: Անձնակազմին հարկ է սովորեցնել վերահսկման այլ մեթոդների (օրինակ՝ ձեռքերի կամ վահանների օգտագործմամբ վերահսկման տեխնիկային)՝ անշարժեցնելու համար անհնազանդ ազատազրկված անձանց:

Որոշակի միջադեպեր, որ ծագել են արտաքսման գործողությունների ընթացքում, ընդգծել են ազատազրկված ներգաղթողներին մինչև արտաքսումը

բժշկական քննություն անցնելու թույլտվություն տալու կարևորությունը: Այդ նախազգուշությունը հատկապես անհրաժեշտ է, երբ նախատեսվում է ուժի և (կամ) հատուկ միջոցների կիրառում: Նմանապես, բոլոր այն անձինք, ովքեր դարձել են արտաքսման չհաջողված գործողությունների սուբյեկտ, պետք է բժշկական քննություն անցնեն ազատությունից զրկման վայր վերադարձվելուց անմիջապես հետո (կամ ոստիկանական բաժանմունքում, բնտում կամ օտարեկրացիների համար նախատեսված կենտրոնում): Այդ կերպ հնարավոր կլինի ստուգել համապատասխան անձի առողջական վիճակը և, անհրաժեշտության դեպքում, տրամադրել ցանկացած վնասվածքի առկայությունը հաստատող տեղեկանք: Նման միջոցառումը կարող է նաև պաշտպանել պահակախմբի անձնակազմին անհիմն մեղադրանքներից:

Բազմիցս հնչում են մեղադրանքներ այն մասին, որ ազատազրկված ներգաղթողներին կատարում են ներարկումներ հանգստացնող կամ ընկճող ազդեցություն ունեցող դեղորայքով, որպեսզի առանց խնդիրների ապահովեն նրանց արտաքսման իրականացումը: Մյուս կողմից նշվել է նաև, որ որոշ երկրներում հրահանգներն արգելում են առանց համապատասխան անձի համաձայնության հանգստացնող կամ այլ դեղորայքի կիրառումը, որոնք նախատեսված են նրան վերահսկողության տակ առնելու համար: Դեղամիջոցների կիրառումը այն անձանց նկատմամբ, ում վրա տարածվում է արտաքսման հրամանը, պետք է միշտ իրականացվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար առանձին ընդունված բժշկական որոշման հիման վրա: Բացառությամբ հստակ և խստորեն սահմանված բացառիկ հանգամանքների, դեղամիջոցները հարկ է կիրառել միայն համապատասխան անձի համաձայնությամբ՝ նրան այդ մասին տեղեկացնելուց հետո:

Ազատազրկված ներգաղթողների արտաքսումը ներառող գործողություններին պետք է նախորդեն համապատասխան անձանց վերադարձը կազմակերպող ընտանեկան, աշխատանքային և հոգեբանական բնույթի միջոցառումներ: Կարևոր է, որպեսզի ազատազրկված ներգաղթողները բավականաչափ վաղ տեղեկացվեն իրենց ապագա արտաքսման մասին, այնպես, որ նրանք կարողանան սկսել հոգեբանորեն հաշտվել նման իրավիճակի հետ և կարողանան տեղեկացնել այն

մարդկանց, ում նրանց անհրաժեշտ է հաղորդել այդ մասին և վերստանալ իրենց անձնական իրերը: Հարկադրական արտաքսման մշտական սպառնալիքը, որ կախված է ազատազրկված անձանց վրա, ովքեր ոչ մի նախնական տեղեկություն չեն ստացել իրենց արտաքսման օրվա մասին, կարող է տագնապ առաջացնել, ինչը իր գազաթնակետին է հասնում արտաքսման ժամանակ և հաճախ կարող է վերածվել խիստ գրգռված վիճակի: Որոշ երկրներում արտաքսման գործողությունների համար պատասխանատու ստորաբաժանումների կազմում ներառված է հոգեբանա-սոցիալական ծառայությունը, համալրված հոգեբաններով և սոցիալական աշխատողներով, որոնք պատասխանատու են, մասնավորապես, ազատազրկված ներգաղթողների արտաքսումը նախապատրաստելու համար (մշտական երկխոսությունների, արտաքսման երկրում գտնվող ընտանիքի հետ շփումների և այլ միջոցներով):

Արտաքսման գործողությունների պատշաճ իրականացումը մեծապես կախված է պահակախմբի պարտականություններ կատարող անձնակազմի որակից: Ակնհայտ է, որ պահակախմբի անձնակազմը պետք է ընտրվի ծայրահեղ զգուշությամբ և ստանա համապատասխան հատուկ ուսուցում, ինչը կոչված է նվազագույնի հասցնել բռնության ռիսկերը: Որոշ երկրներում կազմակերպվում են հատուկ ուսուցումներ (զսպման մեթոդները և միջոցները, լարվածության և հակասությունների կառավարումը և այլն):

Վերահսկողության հատուկ համակարգեր ներդրվել են միայն առանձնապես լուրջ միջադեպերից հետո (օրինակ՝ արտաքսվող անձանց մահվան դեպքերը): Արտաքսման գործողությունները պետք է խնամքով արձանագրվեն: Հիմնարար պահանջ է համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացրած արտաքսման բոլոր գործողությունների հաշվառման մատյանի և ամբողջական անձնական գործերի ստեղծումը: Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել արտաքսման չհաջողված փորձերի տեղեկատվության վրա և, մասնավորապես, արտաքսման գործողությունների ծախսողման պատճառների վրա (պահակախմբի անդամների կողմից ղեկավարության հրամանի հիման վրա ընդունված որոշումը, ինքնաթիռի հրամանատարի հրաժարվելը, արտաքսվող անձի սաստիկ դիմադրությունը, ապաստարան տրամադրելու խնդրանքը և այլն), որոնք պետք է

պարբերաբար արձանագրվեն: Արձանագրված տեղեկատվությունը պետք է ընդգրկի յուրաքանչյուր միջադեպ և զսպող միջոցների յուրաքանչյուր կիրառում (ձեռնաշղթաների, կոճերի համար նախատեսված հատուկ շղթաների, ծնկների համար նախատեսված հատուկ շղթաների, ինքնապաշտպանական միջոցների օգտագործման, արտաքսվողի տեղափոխումը ինքնաթիռ և այլն): Կարելի է նախատեսել նաև այլ միջոցների օգտագործումը (օրինակ՝ տեսալսողական), որոնք կիրառվում են որոշ երկրներում, մասնավորապես՝ ակնկալվող խնդրահարույց արտաքսումների համար: Դրանից բացի, կարելի է տարբեր գոտիներում տեսախցիկներ տեղադրել (դեպի խցերը տանող միջանցքներում, ճանապարհին, որով պահակախումբը արտաքսվող անձին տանում է դեպի այն տրանսպորտային միջոց, որով նրան պետք է տեղափոխեն ինքնաթիռ և այլն): Օգտակար է նաև արտաքսման յուրաքանչյուր գործողության նկատմամբ, որտեղ կանխատեսվում են դժվարություններ, իրավասու ստորաբաժանման ղեկավարի կողմից իրականացվող վերահսկողությունը, որը ցանկացած պահի կարող է դադարեցնել գործողությունը: Երբեմն նման ստուգումներ անց են կացվում ոստիկանության ներքին վերահսկողական մարմինների անդամների կողմից, ընդ որում, ինչպես արտաքսման նախապատրաստման, այնպես էլ ինքնաթիռ նստելու ընթացքում: Ավելին, սահմանափակ քանակի դեպքերում, վերահսկողական մարմինների անդամներն ինքնաթիռ են նստել գաղտնի և նման կերպ վերահսկել արտաքսվող անձին ու պահակախմբին մինչև նշանակման վայր ժամանելը: Հարկ է առանձնապես ընդգծել այն դերը, որը պետք է ունենան արտաքին վերահսկողական (ներառյալ դատական) մարմինները՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային արտաքսման գործողությունների ընթացքում բռնությունը կանխարգելելու համար: Այդ մարմինները պետք է անընդհատ հետևեն այդ առումով դեպքերի բոլոր զարգացումներին, հատուկ ուշադրություն դարձնելով ուժի և զսպող միջոցների կիրառման վրա, ինչպես նաև օդային տրանսպորտի միջոցով արտաքսվող անձի հիմնարար իրավունքների պաշտպանության վրա:

Որոշ դեպքերում դատավորներից կարող է պահանջվել անձին ուղարկել կամ վերադարձնել այնտեղ, ուր վերջինս կարող է խոշտանգումների իրական վտանգի առաջ կանգնել: Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, պահանջվող

հանձնման կապակցությամբ կամ արտաքսման որոշման բողոքարկումը քննարկելիս: Անձի իրավունքը ուղարկված չլինելու այն երկիր, որտեղ բավարար հիմքեր կան մտածելու, որ անձը կկանգնի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վտանգի առաջ, հստակ ամրագրված է մարդու իրավունքներում: Այդ իրավունքը կիրառելի է բոլոր անձանց համար ցանկացած ժամանակ: Այդ իրավունքը ճանաչվել է որպես խոշտանգումներից կամ դաժան վերաբերմունքի այլ ձեւերից պաշտպանվելու իրավունքի մի մաս, որն ամրագրված է Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում (1966թ.), Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (1950թ.), Մարդու իրավունքների 65 ամերիկյան կոնվենցիայում (1978թ.), Մարդու եւ ժողովուրդների իրավունքների աֆրիկական խարտիայում (1981թ.), ՄԱԿ-ի խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայում (1984թ.) եւ խոշտանգումների եւ անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայում (1987թ.):

Մարդու իրավունքների հանձնաժողովն ու Եվրոպական դատարանը հայտարարել են, որ անձին անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի իրական վտանգի առաջ կանգնեցնելը խախտում է անձի՝ նման գործողություններից պաշտպանված լինելու իրավունքը: Մարդու իրավունքների հանձնաժողովը փաստել է, որ մասնակից պետությունները հանձնման, արտաքսման կամ վերադարձնելու արդյունքում անձի երկիր վերադառնալուց հետո չպետք է անձանց կանգնեցնեն խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի առաջ: Եվրոպական դատարանը փաստել է, որ խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի այլ ձեւերի բացարձակ արգելքը կիրառելի է անկախ տուժողի կատարած արարքից եւ չի կարող անտեսվել՝ ելնելով ազգային շահերից կամ երբ հարցը վերաբերում է կասկածվող ահաբեկիչներին: Նույնիսկ այն դեպքերում, երբ մասնավոր խմբերից, օրինակ, զինված ապստամբներից կամ հանցագործներից վտանգ կա, եթե պետությունը ի վիճակի չէ կամ չի ցանկանում պաշտպանել

անձանց նման վերաբերմունքից, դա կարող է որակավորվել որպես խախտում: Խոշտանգումների դեմ հանձնաժողովը պահանջել է, որպեսզի Կոնվենցիային անդամակցող երկրները չարտաքսեն անձին, որը կարող է ապացուցել նման վերաբերմունքի ենթարկվելու «իրական վտանգը»: Հանձնաժողովն ընդգծել է, որ այդ պաշտպանությունը պետք է բացարձակ բնույթ կրի «անկախ այն բանից՝ կատարել է ներգրավված անձը հանցագործություն, թե ոչ եւ անկախ հանցագործության ծանրությունից»:

Փախստականների կարգավիճակի մասին 1951թ.-ի կոնվենցիան եւ 1967 թ.-ի Արձանագրությունը հատուկ դրույթներ ունեն փախստականների վերաբերյալ, որոնք պետք է պահպանվեն տեղական դատարանների կողմից: Փախստականի եւ ապաստան խնդրողի կարգավիճակի կարեւոր տարրերից է նրանց պաշտպանությունն այն երկիր վերադարձից, որտեղ այդ անձին կարող են հետապնդել: Այդ պաշտպանության իրավունքը արտացոլվել է հարկադիր վերադարձի անթույլատրելիության սկզբունքում՝ անձի իրավունքը չվերադարձվել այն երկիր, որտեղ անձի կյանքը կամ ազատությունը կարող է վտանգված լինել: Այդ սկզբունքը լայնորեն ընդունված է պետությունների կողմից: Չվերադաձնելու սկզբունքն ամրագրվել է փախստականների մասին մի շարք միջազգային փաստաթղթերում, ինչպես համընդհանուր, այնպես էլ ազգային մակարդակում: Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայով սահմանվում է. «Ոչ մի մասնակից պետություն չպետք է արտաքսի կամ վերադարձնի փախստականներին այն տարածքներ, որտեղ անձի կյանքին կամ ազատությանը սպառնալիք կա՝ ելնելով որոշակի ռասայի, դավանանքի, ազգության, սոցիալական խմբի պատկանելուց կամ քաղաքական հայացքներից»: Չվերադարձնելու սկզբունքը կազմում է 1951թ.-ի Կոնվենցիայի հիմնական հոդվածներից մեկը: Այդ սկզբունքը նաեւ ամրագրված է Կոնվենցիայի 1967թ.-ի Արձանագրության մեջ: Ի տարբերություն Կոնվենցիայի այլ դրույթների, այս սկզբունքի կիրառումը կախված չէ երկրի տարածքում փախստականի բնակության օրինականությունից: Այն կիրառելի է անկախ այն հանգամանքից, թե անձը պաշտոնապես ճանաչվել է փախստական, թե այդ կարգավիճակը դեռեւս պետք է քննարկվի: Համընդհանուր մակարդակում ընդունված լինելու պատճառով սա դառնում է ընդհանուր կամ սովորության միջազգային

իրավունքի սկզբունք՝ այդպիսով պարտադիր դառնալով բոլոր պետությունների համար: Ուստի ոչ մի պետություն չպետք է արտաքսի անձին այս հանգամանքներում:



## Եզրակացություն

Այսպիսով կարող են փաստել, որ այսօր հանձագործությունների դեմ ակտիվ պայքար ծավալելու առումով, հանձնման ինստիտուտը հատուկ կարևորություն ունի, քանի որ պետությունների միջև միջազգային համագործակցության արդյունքում նրանց պետական սահմաններ դարձել են «թափանցիկ», կատարելագործվել են հաղորդակցման միջոցները, որի պատճառով հեշտացել է մի պետության տարածքում հանցանք կատարած անձանց այլ պետությունում թաքնվելու հնարավորությունը: Ձևավորված նոր իրողությունը ակտիվորեն օգտագործվում է կազմակերպված հանցավոր խմբերի կողմից և այն վաղուց ձեռք է բերել միջազգային բնույթ: Այդ իսկ պատճառով հանցավորության դեմ պայքարում էական նշանակություն է ձեռք բերել պետությունների համագործակցությունը:

Պետությունների միջև միջազգային համագործակցության ամրապնդման և զարգացման գործում կարևոր նշանակություն ունի հանձնման ինստիտուտը, որը դեռևս գտնվում է զարգացման փուլում: Հետևաբար, մագիստրոսական հետազոտության շրջանակում կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ այդ ինստիտուտի զարգացման հիմնարար ուղղություններից մեկը պետք է հանդիսանա երկրների ներքին օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ապահովման խնդիրը: Այդ առումով անհրաժեշտ է ստեղծել գործուն և արդյունավետ կառուցակարգեր:

Հանձնման ինստիտուտի կարևորությունը հաշվի առնելով՝ երբեք չպետք է անտեսվի անձի ազատության իրավունքը, քանզի հանձնման ընթացակարգերը իրենց մեջ պարունակում են նաև որոշակի ժամկետով անձանց ազատությունից զրկում՝ կալանավորում հանձնելու նպատակով: Այդ է պատճառը, որ հանձնման ենթակա անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է այն, որ կալանքի վերցված անձն իրավունք ունի անհապաղ կանգնելու դատարանի առջև իր նկատմամբ ընտրված խափանման միջոցը հաստատելու, փոփոխելու կամ վերացնելու համար:

Այսպիսով, ուսումնասիրությունների հիման վրա կարելի է հստակ փաստել, որ հանձնումը համարվում է հանցավորության դեմ պայքարի ամենաարդյունավետ գործիքակազմերից մեկը, որը, ի թիվս այլնի, առնչվում է այնպիսի ինստիտուտների հետ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները և քաղաքացիությունը:

Հայաստանի Հանրապետությունում շարունակում են անհաղթահարելի խոչընդոտ մնալ այլ պետություններում կայացված հեռակա դատավճիռները, քանի որ մեր երկրում դատավճռի հեռակա կայացման ինստիտուտ չի նախատեսվում, ինչը հնարավոր չի դարձնում անձի նկատմամբ հեռակա կայացված դատավճռի համապատասխանեցումը և ի կատար ածման ապահովումը: Նման իրավական անկատարության արդյունքում այդ անձինք, հայտնաբերումից հետո տասնամյակներ շարունակ շարունակում են մնալ միջազգային հետախուզման մեջ, չեն կարողանում ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալ և իրականացնել քաղաքացիաիրավական այլ գործարքներ:

«Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով սահմանված է դիտորդական խմբի ձևավորումը, սակայն վերոգրյալը չի վերաբերում հանցագործություն կատարած օտարերկրյա քաղաքացիներին կամ ապաքաղաքացիներին այլ պետությանը հանձնելուն: Ուստի կարծում ենք նպատակահարմար կլինի նմանատիպ դիտորդական խումբ ձևավորել հանցագործություն կատարած օտարերկրյա քաղաքացիներին կամ ապաքաղաքացիներին այլ պետությանը հանձնելու գործընթացի կանոնակարգման համար:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանվում են հանձնումը բացառող հանգամանքները: Կարծում ենք ի թիվս բացառող մյուս հանգամանքների պետք է ավելացվի նաև տվյալ պետությանը քաղաքացուն հանձնելու արգելքն այն դեպքում, երբ այդ պետությունում հայտարարված է ռազմական կամ արտակարգ իրավիճակ: Մեր կարծիքով դա բխում է մարդասիրական իրավունքի սկզբունքներից, քանի որ նման իրավիճակներում ավելի են վտանքվում մարդու հիմնական իրավունքները և ազատությունները:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ հանձնման ինստիտուտի հիմնախնդիրները բազմազան են և փոխկապակցված, որոնց արդյունավետ լուծման համար

անհրաժեշտ է իրավական, կազմակերպական միջոցառումների համալիր  
իրականացում, ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակներում:

## Օգտագործված գրականության ցանկ

### 1. Միջազգային փաստաթղթեր և նորմատիվ իրավական ակտեր

1. «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիա
2. «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիա
3. «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիա
4. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիա
5. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
6. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագիր
7. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա
8. «Քրեական, քաղաքացիական և ընտանեկան գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի կոնվենցիա
9. «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիա
10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների» Եվրոպական կոնվենցիայի թիվ 4 արձանագրություն
11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների» Եվրոպական կոնվենցիայի թիվ 7 արձանագրություն
12. Միջազգային քրեական դատարանի Հոդվածի ստատուտ
13. ՀՀ Սահմանադրություն, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով
14. ՀՀ քրեական օրենսգիրք
15. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
16. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք
17. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք
18. «Փախստականների մասին» ՀՀ օրենք
19. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք

20. ՀՀ կառավարության 2010թ.-ի հունվարի 21-ի N48-Ն «Կամավոր վերադարձի մասին դիմում ներկայացրած անձանց (ապաստան հայցողներին կամ փախստականներին)՝ իրենց քաղաքացիության կամ հիմնական բնակության երկիր կամ հնարավոր երրորդ՝ միջանցիկ երկիր մուտք գործելու համար անհրաժեշտ ճամբորդական փաստաթղթերի և վիզայի ստացման գործում աջակցության կարգը հաստատելու մասին» որոշում

## **2. Ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ, տեսական գրականություն**

1. Դ. Ավետիսյան, Հանձնման ինստիտուտի միջազգային իրավական և քրեադատավարական առանձնահատկությունները: «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2008, N11
2. ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս(3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատարակություն, 2010
3. ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս(3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով), Երևանի պետական համալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2010
4. Հ. Սարգսյան, Վ. Ենգիբարյան, Հանձնման (էքստրադիցիայի) ինստիտուտի միջազգային իրավական և ներպետական հիմնախնդիրները, Եր. 2016
5. Бугай Н. Ф. Защита состоялась, проблемы остаются... // Приволжский научный вестник. — 2014. — № 7
6. Бугай Н. Ф. Защита состоялась, проблемы остаются... // Приволжский научный вестник. — 2014. — № 7
7. Большая советская энциклопедия : [в 30 т.] / гл. ред. А. М. Прохоров. — 3-е изд. — М. : Советская энциклопедия, 1969—1978.
8. Выдача обвиняемых и осужденных в международном уголовном праве, И. И. Лукащук, А. В. Наумов., М., 1998
9. Гусейнов Л. Г., Международные обязательства государств в области прав человека
10. Звирбуль В.К., Шупилов В. П., Выдача уголовных преступников, М., 1974

11. Игнатенко Г. В., Международное сотрудничество в борьбе с преступностью, Свердловск, 1980
12. Каламкарян Р. А., Мигачев Ю. И., Международное право, М., 2005
13. Левин Д.Б., История международного права, М., 1962
14. Лунеев В.В., Тенденции современной преступности и борьбы с ней в России, ГиП. 2004, N1
15. Мартенс Ф. Ф., Современное международное право цивилизованных народов: В 2т. Т.2, СПб, 1883
16. Международное публичное право, Отв. редактор Бекашев К. А., Москва, 2005г.
17. Московский журнал международного права, М., 2001, N2
18. Никольский Д. П., О выдаче преступников по началам международного права
19. Руководство по вопросам взаимной правовой помощи и экстрадиции, Управление организации объединенных наций по наркотикам и преступности. Организация объединенных нации, Нью-Йорк, 2012г.
20. Сергей Сумленный Изгнаны и убиты (рус.) // «Эксперт». — 2008. — № 30
21. Штиглиц А. Л., Исследование о выдаче преступников, СПб, 1882
22. A. R. Mowbray, The development of positive obligations under the European Convention on Human Rights by the European Court of Human Rights, Hart Publishing, Oxford-Portland Oregon, 2004
23. Basiouni Cherif M, International extradition and world public order, N. Y., 1974
24. Gilbert G., Aspects of Extradition Law
25. Jean-Francois Akandji-Kombe, Positive obligations under the European Convention on Human Rights, Human Rights handbooks, N 7
26. Mariana (Mitra) Radu, Catalina Mititelu, The Observance of Human Rights and Freedoms in the Extradition Proceedings at National and International Levels, JDSR 3, 2013
27. Neil Boister, An introduction to Transnational Criminal Law, OUP, 2012
28. Overy, Richard, The Penguin Historical Atlas of the Third Reich, 1996

### **3. Համացանցային մուտքի էլեկտրոնային հասցեներ**

29. <https://koryo-saram.ru/rezolyutsiya-mezhdunarodnogo-simpoziuma/>
30. <https://matsne.gov.ge/en/document/view/2278806>
31. [http://www.goc.gov.tr/files/files/eng\\_minikanun\\_5\\_son](http://www.goc.gov.tr/files/files/eng_minikanun_5_son)
32. [http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc\\_l?p\\_id=356478](http://www3.lrs.lt/pls/inter3/dokpaieska.showdoc_l?p_id=356478)
33. <https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070158>
34. <http://www.echr.coe.int>